

# ԼՈՒՅՍ

Մշակութային և հասարակական ամսագիր

# لويس

LOUYS

*Armenian Monthly*

ISSN 1682-5446

## Հայաստանի «Իշխանությունները» ոչ մի այլ ելք չթողեցին ժողովրդին



## Հայ ժողովրդի փրկությունը միայն հավաքական ուժի մեջ է

# Այս համարում

## Հայերեն բաժին

1- Խմբագրական.....	0
2- Հայաստանի Հանրապետություն.....	1
3- Արևմտյան Հայաստան.....	23
4- Սփյուռք.....	25
5- Միջազգային.....	26
6- Հասարակական.....	28
7- Մշակութային.....	29
8- Մայրենի լեզու.....	29
9- Ոտքը որ մանց այնտեղ.....	20

## Պարսկերեն բաժին

Արցախի պատմություն.....1-2

**Շապիկի առաջին էջում՝** Հայաստանի «Իշխանություններ այլ ելք չթողեցին ժողովրդին

**Վերջին էջում՝** Էդ. Բաղդասարյանի նոր գրքերը

Համար 213, Հուլիս 2016 No. 213, July 2016

ماهنامه لویس - شماره ۲۱۳ مرداد ماه ۱۳۹۵

# ԼՈՒՅՍ

Արտոնատեր եւ գլխավոր խմբագիր՝  
**Էդ. Բաղդասարյան**  
Խմբագրական կազմ՝

Թամար Փանոսյան, Վանիկ Բաղդասարյան  
Թամ Ղարախանյան, Մաթենիկ Ավետիսյան

Էմմա Բեգիջանյան, Հովիկ Վարդումյան

Փոստարկղ **15875-9488** Թեհրան - Իրան  
Էլեկտրոնային փոստ՝ [louys\\_monthly@yahoo.com](mailto:louys_monthly@yahoo.com)  
Ինտերնետային հասցեն՝ [www.louysonline.com](http://www.louysonline.com)

## LOUYS

Armenian Cultural and Social Monthly

License-holder and Editor-in-Chief

**Edic Baghdasarian**

[www.Edic-Baghdasarian.com](http://www.Edic-Baghdasarian.com)

WEB master: **Baruyr Baghdasarian**

**POBox 15875-9488 Tehran – Iran**

**E-mail : [louys\\_monthly@yahoo.com](mailto:louys_monthly@yahoo.com)**

**Internet : [www.louysonline.com](http://www.louysonline.com)**

Հոդվածների հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել խմբագրության տեսակետներին:  
Արտատպության դեպքում հղումը «ԼՈՒՅՍ» - ին պարտադիր է:

ماهنامه لویس

صاحب امتیاز ، مدیر مسئول و سردبیر: ادیک باغداساریان

نشانی نشریه : تهران صندوق پستی ۱۵۸۷۵-۹۴۸۸

پست الکترونیکی: [louys\\_monthly@yahoo.com](mailto:louys_monthly@yahoo.com)

نشانی اینترنت: [www.louysonline.com](http://www.louysonline.com)

# ՊՊԾ գնդի գրավումը և հայրենի ժողովրդի պահնջները

Այն, որ մի օր մի խումբ մարդիկ զինված ապստամբության կզնան, տեսականորեն շատերն էին ենթադրում, բայց գործնականում ոչ ոք չէր պատկերացնում, որ այդպիսի բան տեղի կունենա: Առավել եւս ոչ ոք չէր ենթադրում, որ թեկուզեւ փոքր մասշտաբով զինված ապստամբության այդ փորձը կստանա հասարակական այսպիսի լայն աջակցություն: Դժվար է նմանատիպ իրավիճակի պատմական նախադեպեր գտնել:

Չինված ապստամբության նման աջակցության պատճառներից մեկը, անշուշտ, մեր երկրի սոցիալ-տնտեսական վիճակն է: Չի կարելի, պարզապես հնարավոր չէ հասարակությանը անընդհատ պլավացրած ցացանիչներ հրամցնել եւ փորձել համոզել, թե երկրի տնտեսությունը զարգանում է: Հնարավոր չէ տնտեսություն զարգացնել մի երկրում, որտեղ կա եւ քաղաքական, եւ տնտեսական բացարձակ մենաշնորհ:

Եթե իշխանության բացարձակ մոնոպոլիան պատկանում է իրեն կուսակցություն համարող ՀՀԿ-ին, ապա տնտեսության մեջ մոնոպոլիան այդ նույն ՀՀԿ-ի շուրջ «համախմբված» մի խումբ մարդկանց ձեռքում է: Թե իշխանության, եւ թե տնտեսության այս մոնոպոլիստների գործունեության ամբողջ նպատակն ու իմաստը այդ մոնոպոլիան պահպանելն ու հնարավորինս ընդլայնելն է: Ու եթե ուսումնասիրենք իշխանության գործելակերպը տարիների կտրվածքով, կհամոզվենք, որ ստեղծված իրավիճակի հիմնական պատճառը հենց քաղաքական ու տնտեսական մոնոպոլիաները պահպանելու մոլուցքն է:

Ու ի՞նչ է ստացվում արդյունքում: 2.8 միլիոն բնակչության ունեցող Հայաստանում նույնիսկ պաշտոնական տվյալներով մեկ միլիոն աղքատ մարդ կա: Մեկ միլիոն մարդ ամեն օր պայքարում է իր կենսաբանական գոյության՝ սոված չմնալու համար: Իսկ մի շատ փոքր խումբ՝ ընդամենը մի քանի հազար մարդ, ապրում է, մեղմ ասած, ճոխության մեջ, անիմաստ, չպատճառաբանված ճոխության մեջ:

Իհարկե, որոշ մարդկանց թվում է, թե դա «կապիտալիզմի հետեւանքն է»: Իրականում, սակայն, դա հենց կապիտալիզմի պակասության հետեւանքն է՝ շուկայական տնտեսության գերադասավաճության արդյունք: Շուկայական տնտեսության հիմնապայտը արդար մրցակցությունն է, ինչը Հայաստանում իսպառ բացակայում է, ու հենց դա էլ աղքատություն ծնող հիմնական պատճառներից է:

Նման իրավիճակում մեծանում է մի որեւէ առիթով մարդկանց ընդվզելու հավանականությունը: Որպեսզի այդ վտանգն էլ չեզոքացնի, իշխանության մոնոպոլիստը պետք է ստեղծի հզոր ոստիկանականություն եւ անհնազանդներին դաժանորեն պատժելու դատական համակարգ: Հայաստանում երկուսն էլ կան:

Այն, որ խիստ սահմանափակ ռեսուրսներ ունեցող երկրում այս իրավիճակը երկար չի կարող պահպանվել, դա, կարելի է ասել, բխում է բնության օրենքներից: Դա օրերից մի օր հանգեցնելու է դեռ ավելի մեծ «պայթյունի», եւ այդ մեծ հավանականությամբ տեղի կունենա, համաժողովրդական ընդվզմամբ, արդեն պահ է, որ մեր հայրենի մեծ ժողովուրդը փաստի իր հզոր գոյությունն ու առաջ քաշի հասարակական-քաղաքական ու մարդկային իրավական պահանջները:

**Հայաստանի Հանրապետություն**

**Իշխանություններն իրականացնում են ամենասխալ եւ վտանգավոր քաղաքական գիծը. ՀԳԿ**

13:38, 28.07.2016



Նախօրեին ՀՀ ոստիկանության գործողությունները Խորենացի փողոցում բացարձակապես անմիտ ու անօրինական էին: Այս մասին, այսօր՝ հուլիսի 28-ին, լրագրողների հետ հանդիպման ժամանակ նշել է Հայաստանի դեմոկրատական կուսակցության ղեկավար Արամ Գ. Սարգսյանը:

Նրա խոսքով, եթե լսենք ոստիկանության պարզաբանումները, նրանք ասել են, թե իբր կասկածներ ունեն, որ մարդկանց մոտ զենք կա. «Այսինքն այդպես կարելի է բերման ենթարկել փողոցում գտնվող ցանկացած մարդու: Տպավորություն էր, որ մենք գտնվում ենք Թուրքիայում, որտեղ հեղաշրջման փորձ է կատարվել եւ ձերբակալվել 13 հազար մարդ: Սա ամենասխալ եւ ամենավտանգավոր քաղաքական գիծն է, որն իրականացնում են ՀՀ իշխանությունները»,-ընդգծել է Սարգսյանը:

Նրա խոսքով, ՀՀ իշխանությունները պարտավոր են հաշվետու լինել սեփական ժողովրդին, քանի որ ժողովուրդը ներքին լուրջ ու արմատական փոփոխություններ անցկացնելու պահանջ է դրել իշխանությունների առջև: «Իսկ հասարակական կարծիքն այսօր հանգում է հետեւյալին. Իշխանությունները չեն լուծել ներքին խնդիրները»,-ամփոփել է ՀԳԿ ղեկավարը:

Հիշեցնենք, որ Ոստիկանության աշխատակիցները հուլիսի 27-ին Խորենացի փողոցից բերման են ենթարկել բազմթիվ քաղաքացիների՝ ձգտելով թույլ չտալ այնտեղ հանրահավաք անցկացնել:

**Սարի թաղում ոստիկաններ են վիրավորվել. իրավապահներ**

19.07.2016

Սարի թաղում բախում է գրանցվել քաղաքացիների եւ ոստիկանների միջեւ: Այս մասին լրագրողներին հայտնեցին Խորենացի փողոցի՝ պահպանվող տարածքում ծառայություն իրականացնող ոստիկանները: Նրանց փոխանցմամբ՝ երեք ոստիկան վիրավորվել է:

Սարի թաղի կողմից քաղաքացիներ են եկել, փորձել են մուտք գործել պահպանվող տարածք: Նրանք նաեւ քարեր եւ տարբեր առարկաներ են նետել ոստիկանների ուղղությամբ:

Մինչ այդ Խորենացի փողոցում հավաքվածները պահպանվող տարածքից դուրս եկող շտապօգնության երկու մեքենա են տեսել: Սակայն շտապօգնությունում հերքել էին, որ վիրավորներ կան՝ պարզաբանելով, որ վատացել է այդ տարածքում բնակվող որոշ քաղաքացիների ինքնագագացողությունը:



Դեպքի վայրում են նաեւ Հայաստանի ոստիկանապետի տեղակալներ Սամվել Հովհաննիսյանը եւ Լեւոն Երանոսյանը, ինչպես նաեւ Երեւանի ոստիկանապետ Աշոտ Կարապետյանը: Նրանք հայտնեցին, որ բախման հետեւանքով քաղաքացիներ չեն տուժել, այս պահի դրությամբ բերման ենթարկվածներ չկան:

**Համաշխարհային լրատվամիջոցներ. ՊՊԾ գնդի գրավումը ու մարդկանց պատանդառումը ցնցել է փոքրիկ Հայաստանը**

01.08.2016



Համաշխարհային լրատվամիջոցները արձագանքել են Երեւանում ՊՊԾ գունդը գրաված «Մասնա ծեղ» զինված խմբի՝ իշխանություններին հանձնվելու որոշման մասին նորությանը:

Ըստ համաշխարհային մամուլի՝ ՊՊԾ գնդի գրավումը, նաեւ դրան հաջորդած իրադարձությունները ցնցում դարձան փոքրիկ Հայաստանի համար

Բրիտանական BBC-ը գրում է, որ իրավապահները դեռ ուրբաթ էին վերջնագիր ներկայացրել խմբին, երբ «մահակներով ու ձայնային եւ ծխամոնակներով զինված ոստիկանների ու ցուցարարների միջեւ բախումներ եղան»:

Գերմանական Deutsche Welle -ը նշում է, որ ՊՊԾ գնդի գրավմանը հաջորդել են ընդդիմադիր բողոքի ցույցեր մայրաքաղաքում: Ավելի քան 70 մարդ է վիրավորում ստացել այն բանից հետո, երբ «ոստիկանությունը կիրառել է մահակներ, ձայնային նռնակներ ու ծխոտող պայթյալաներ»:

Ըստ Irish Times պարբերականի՝ զինված խուճրդ, որը ընդդիմադիր է նախագահին ու կառավարությանը, հանձնվել է «հանգստյան օրերի բռնությունից հետո»: «Պարոն Մեֆիլյանը ընդդիմության գլխավոր առաջնորդը չէ, բայց վերջին իրադարձությունները առաջ բերեցին հասարակական լայն դժգոհություն կոռուպցիայի, Հայաստանի քաղաքական վերնախավի հարստությունների ու անպատասխանատվության կապակցությամբ», - գրում է պարբերականը:

Associated Press գործակալությունը հիշեցնում է, որ դիմակայության հետևանքով սպանվել են երկու ոստիկաններ, երկու կողմից էլ վիրավորներ կան: Գործակալությունը նշում է, որ «բռնության ամենասարսափելի դեպքերից մեկը կատարվել է ուրբաթ, երբ վիրավորվել է 75 մարդ»:

Չինված խմբի կողմից ՊՊԾ գնդի գրավումը եւ մարդկանց պատանդառումը անկարգություններ է առաջացրել Հայաստանում, գրում է AFP-ը: Ըստ գործակալության, պատանդների ճգնաժամը եւ բռնությունները «ցնցել են այս փոքրիկ հետխորհրդային երկիրը, որն ընդամենը մի քանի ամիս առաջ էր 110 զոհ տվել Լեռնային Ղարաբաղում Ադրբեյջանի հետ հակամարտության բռնկման հետևանքով»:

## Լինելու են քաղաքական ճնշման քայլեր. Ալբերտ Բաղդասարյան



2016-07-24

Հայաստանի Գերագույն խորհրդի պատգամավոր Ալբերտ Բաղդասարյանը ներկայացնելով Խորենացու հարթակում ձևավորված համակարգող խմբի քայլերը՝ ասաց, որ դրանք լինելու են շարժական քաղաքական ճնշման քայլեր. «Մենք էլ ենք հասկանում, որ այսպես անվերջ շարունակվել չի կարող, հետևաբար պետք է տեղափոխվեն քայլերը, որակները, իրավիճակը»:

Նա նկատեց, որ հրապարակային շատ գործիչներ, ովքեր հրաժարվել էին մտնել համակարգող խորհրդի կազմում, ամբողջ ժամանակ նկարվում էին հարթակում. «Ես կուզեի, որ մարդիկ այս առիթն օգտագործեն ոչ թե ինքնադրսևորվելու, այլ ժողովրդին ռեալ օգնելու համար»: Ալբերտ Բաղդասարյանը տեղեկացրեց, որ իրենք սկզբունքորեն փոխելու են այն մոտեցումը, երբ միջնորդներին նշանակում են իշխանությունները. «Նրանք ստանում են տղաների համաձայնությունը և հետո դուրս են գալիս ինչպես միշտ՝ Վիտայի Բալասանյան: Ուստի մենք հասնելու ենք նրան, որ միջնորդական առաքելությունը լինի

ժողովրդի կողմից հրապարակային և ընդունված, և նոր գլխացավանք առաջանա իշխանության համար, եթե սննդի հարցերը չեն կարգավորվում: Ի վերջո՝ տղաներն իրենց կյանքն են դրել, որպեսզի մեր ժողովրդի համար հարց լուծվի: Մենք առանց զենք վերցնելու, բայց իշխանությունների համար գլխացավանք ստեղծելով՝ կստիպենք, որ իշխանությունները գնան զիջումների: Եթե մենք ժողովրդով պասիվ լինենք, «Սասնա ծռերը» Միեր չեն դառնա: «Սասնա ծռերը» հիմքն են այս ամբողջ ժողովրդի, որպեսզի ինքը դառնա «Սասնա ծուռ» և իր քաղաքական խաղաղ ճնշման միջոցով ստիպի այս օտարածին իշխանություններին զիջումների գնալ»:

Մեր գրուցակցի խոսքով՝ ամենակարևորն այն է, որ ոստիկանությունը հասկանա՝ ինքը ևս էս ժողովրդի մասնիկն է, որը Մերժի ձեռքը պատանդ է ընկել այնպես, ինչպես մեր ողջ ժողովուրդը:

## Խորենացի փողոցից քաղաքացիական հագուստով անձինք մարդ են բերման ենթարկել

22:10, 24.07.2016

Երևանի Խորենացի փողոցից քաղաքացիական հագուստով անձինք քիչ առաջ մի տղամարդու են բերման ենթարկել: Ականատեսները NEWS.am-ի թղթակցին հայտնել են, որ որպես ոստիկան ներկայացած անձինք ուժով մի ակտիվիստի 34 FA 660 համարանիշով արժաթագույն «Մերսեդես» մակնիշի մեքենան են նստեցրել եւ տարել անհայտ ուղղությամբ: Ականատեսները նաեւ մեր թղթակցին են փոխանցել հեռախոսով արված կարճ տեսանյութը: Նշենք, որ Խորենացի փողոցում այս պահին հանրահավաք է ընթանում, եւ Ալբերտ Ենիգոմյանն էլ հայտարարեց, որ բերման ենթարկվածը Տիգրան Ավագյանն է: Ոստիկանությունից հայտնեցին, որ կճշտեն, լրացուցիչ կտեղեկացնեն:

## ՊՊԾ գնդի վրա գրոհից եւ Խորենացի փողոցի բախումներից տուժածներից 10-ն են հիվանդանոցում. 2-ի վիճակը ծանր է

13:22, 24.07.2016



Ոստիկանության ՊՊԾ գնդի տարածք «Սասնա ծռեր» խմբի անդամների զինված գրոհի հետևանքով, ինչպես նաեւ հուլիսի 20-ին Խորենացի փողոցում ոստիկանների ու քաղաքացիների միջև բախումների հետևանքով վիրավոր քաղաքացիներից այժմ հիվանդանոցներում են գտնվում 10

հոգի: Այս մասին այսօր՝ հուլիսի 24-ին, NEWS.am-ին հայտնել են ՀՀ առողջապահության նախարարության լրատվական բաժնից:

Այս պահի դրությամբ երկու հիվանդ է ծանր վիճակում: Նրանցից մեկը գտնվում է «Հերացի» թիվ 1 համալսարանական համալիրի վերակենդանացման բաժանմունքում բուժվող տուժածի վիճակը շարունակում է մնալ ծանր՝ արդեն որոշակի դրական շարժընթացով:

Մյուսը «Մասնա ծռեր» ջոկատի անդամ 26-ամյա Թաթույ Թամրազյանն է, որը գտնվում է «Էրեբունի» բժշկական կենտրոնում: Էրեբունի բժշկական կենտրոնի Վերակենդանացման բաժանմունքի վարիչ Արմեն Մուրադյանը NEWS.am-ի թղթակցի հետ զրույցում նշել էր, որ հեռացրել են Թաթույ Թամրազյանի ձախ երիկամը, հաստ աղիքի ձախ կեսը եւ կատարվել է պլեյրալ խոռոչի դրենավորում: Նա սկզբում եղել է ծայրահեղ ծանր վիճակում, մի շարք վիրահատությունների է ենթարկվել, այս պահին վիճակը կայունացել է: Արհեստական շնչառության սպարատից անջատվել է, սակայն վիճակը շարունակում է մնալ կայուն ծանր:

Հիշեցնենք, որ Խորենացի փողոցում հուլիսի 20-ի գիշերը տեղի ունեցած միջադեպի հետևանքով Երեւանի բժշկական կազմակերպություններ է դիմել 51 տուժած, նրանցից 29-ը՝ ոստիկան էր: Տուժածներից 15-ն անհրաժեշտ բժշկական օգնությունը ստացել էր ամբուլատոր պայմաններում: Տարբեր վնասվածքներ ստացած 34 տուժած «Մուրբ Գրիգոր Լուսավորիչ», «Էրեբունի», «Երեւան», «Արմենիա» հանրապետական բժշկական կենտրոններում, «Հերացի» թիվ 1 համալսարանական համալիրում շարունակում էին հիվանդանոցային բուժումը:

Այս պահի դրությամբ ընդհանուր առմամբ հիվանդանոցում է գտնվում 10 մարդ:

## Մերժ Սարգսյանի հերթական խորամանկությունը

**Չենք վայր դնելուց հետո Մերժ Սարգսյանը պատրաստակամություն էր հայտնել հրավիրել Սեֆիյանին. Վիտալի Բալասանյան**

14:57, 24.07.2016



ԼՂՀ ԱԺ պատգամավոր, Արցախի հերոս Վիտալի Բալասանյանը հայտարարություն է տարածել «Մասնա ծռեր» խմբավորան անդամների հետ վարած բանակցությունների վերաբերյալ, հաղորդում է «Արմենպրեսը»:

Հայտարարության մեջ, մասնավորապես, ասվում է. «Հուլիսի 22-ի լույս 23-ի գիշերն իմ միջնորդությամբ ՀՀ ԱԿԾ տնօրեն Գեորգի Կուտոյանը այցելել էր զինված խմբի տղաներին, բավականին ժամանակ քննարկել են պատանդներին ազատ արձակելու հետ կապված հարցեր, այլ

հարցեր եւս: Պարոն Կուտոյանը նաեւ առաջարկեց, որպեսզի տղաներից մեկը, որը վիրավոր է եւ որին տեղում աշխատող բժիշկները կարող են անկարող լինել փրկել, տեղափոխել հիվանդանոց անհրաժեշտ մասնագիտացված ստացիոնար բուժօգնություն տրամադրելու համար: Ցավոք այդ հարցը դրական պատասխան այդպես էլ չստացավ: Չնայած տղաների մերժմանը՝ մենք հաջորդ առավոտյան վիրաբույժ ուղարկեցինք գնդի տարածք, որին նույնպես թույլ չտրվեց անհրաժեշտ միջամտություն կատարել:

Ինչ վերաբերում է պատանդների ազատ արձակմանը, այս այդ մասով ես գոհ եմ պրոցեսից: Չինված խմբի տղաներին, նախնական պայմանավորվածության համաձայն, տրամադրվել է մամուլի հետ շփումների ամենալայն հնարավորություն: Ցավոք զինված խմբի տղաները չհարգեցին պետության հիմնական պահանջը, այն է՝ լրատվամիջոցների առաջ հանդես գալ բացառապես առանց զենքի: Կազմակերպեցին զենքի ու ռազմականության բացահայտ ցուցադրություն, այնուհետեւ էլ ուղիղ եթերում սկսեցին օդ կրակել: Ես սա խստորեն դատապարտում եմ եւ անընդունելի եմ համարում:

Ինչեւէ, հետեւելով նախագահ Սարգսյանի կոչին, պետական գերատեսչությունները, որոնց հետ ես շարունակում եմ բանակցել, պատրաստ են սպառել զինված խմբի խաղաղ հանձնվելուն ուղղված բոլոր միջոցները: Կոչ եմ անում նաեւ քանի դեռ ուշ չէ, քանի դեռ հնարավոր է դա անել, ուշքի գալ եւ կատարել Հայաստանի Սահմանադրության եւ օրենքների միանշանակ պահանջը: Դրա համար ձեզ պետական մարմինները էլի են պատրաստ մամուլի հետ շփում կազմակերպել, եթե դրա կարիքը կա՝ ինչ-որ բաներ բացատրելու համար բոլորին: Բայց այս անգամ պատրաստ են դա անել բացառապես առանց զենքի, եւ հանրության համար բաց, հետեւաբար լրագրողների համար անվտանգ տարածքում: Դրանից հետո պետք է անհապաղ վայր դնեն զենքը:

Կոչ եմ անում նաեւ տղաներին, քանի դեռ ուշ չէ անհապաղ իշխանություններին հանձնել վիրավոր տղային, ով նաեւ, ըստ տեղեկությունների, Ոստիկանության գնդապետին սպանողն է: Նրան շտապ բուժօգնություն է պետք, տղաներ, եւս մեկ գոհ ոչ մեկին հարկավոր չէ: Ես կարծում եմ, որ տղաները պետք է օգտվեն այս վերջին հնարավորությունից:

Իմ միջնորդությամբ իշխանության բարձրաստիճան ներկայացուցչի հետ միասին, որին ներկա էր նաեւ «Հիմնադիր խորհրդարանի» անդամ Ալեք Ենիգոմյանը, մենք «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկում հանդիպել ենք Ժիրայր Սեֆիյանի հետ եւ քննարկել ենք տարբեր հարցեր: Ժիրայր Սեֆիյանը այդ պահի դրությամբ որեւէ խոսք չի ասել, ավելին՝ պնդել է, որ այս պահի դրությամբ ինքը հրաժարվում է նախագահի հրաժարականի պահանջից: Ժիրայր Սեֆիյանը բարձրացրել է իրենց հուզող ազգային նշանակության հարցեր, որոնք մենք խոստացել ենք փոխանցել Հանրապետության նախագահին: Մենք անմիջապես կատարել ենք մեր խոստումը, փոխանցել ենք հարցերը: Արդեն ունենք նաեւ Հանրապետության նախագահի դիրքորոշումը, այն է՝ տղաների կողմից զենքն անհապաղ վայր դնելուց եւ հանձնվելուց հետո նա պատրաստակամություն է հայտնել հրավիրելու Ժիրայր Սեֆիյանին եւ բացատրելու իրականությունը եւ հեռանկարները»:

## Այս տղաների քայլով մի սարսափելի քայլ խափանվեց. Եղիշե Պետրոսյան

2016-07-24

«Իմ սիրտը ցավում է ոչ թե մտավորականների հայտարարության համար, այլ ինձ անհանգստացնում է մեր ժողովրդի անտարբերությունը: Դա է մեր դժբախտության պատճառը»,- **«Առաջին լրատվական»**-ի հետ գրույցում Երևանում տեղի ունեցած վերջին իրադարձությունների վերաբերյալ իր մտահոգությունը հայտնեց երաժիշտ Եղիշե Պետրոսյանը:

Նրա խոսքով՝ ձեռագիրը նույնն է. մի մասը, հասկանալով այս ամենի լրջությունը, իր տեղը չի գտնում, մյուս մասը՝ «ինչպես բառադի ապրել է, այնպես էլ շարունակում է ապրել»:

Եղիշե Պետրոսյանը նկատեց, որ ինչքան այսպես շարունակվի, այնքան կպակասեն մեր հնարավորությունները. «Այս տղաների գենը, էն առողջ գենը, որ կա մեր ազգի մեջ, որն արտահայտվեց նաև ապրիլյան պատերազմի ժամանակ, կամաց-կամաց ոչնչացվում է՝ կամ միտումնավոր, կամ անխելքությամբ»:

Դիտարկմանը՝ արդյո՞ք զինված մեթոդն էր միակ ելքը, Եղիշե Պետրոսյանը արձագանքեց. «Մոտավորապես 20 տարի է՝ մենք անընդհատ կանգնում ենք պատի առաջ: Սա ինչի՞ց եղավ: Սա հո խելագար մարդկանց արարք չէ՞: Մարդիկ գիտակցել են, որ այլևս ձև չկա»:

«Ես կարծում եմ՝ այս տղաների քայլով մի սարսափելի բան էլ խափանվեց», - ասաց նա՝ նկատի ունենալով ԼՂ հարցի ոչ հայանպաստ լուծումը:

## Այս տարվա 6 ամիսների ընթացքում մահացել է 136 զինծառայող. ՀՔԱՎ գրասենյակ

04.07.2016



2016 թ-ի հունվար-հունիս ամիսներին ՀՀ զինված ուժերում և ԼՂ պաշտպանության բանակում մահացել է 136 շարքային և պայմանագրային զինծառայող, ինչպես նաև քառօրյա պատերազմական գործողություններին մասնակցած կամավորականներ: Այս մասին հայտնում է Հելսինկյան Քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակից:

Ըստ ՀՔԱ Վանաձորի գրասենյակի ուսումնասիրության արդյունքների 2016 թ-ի ապրիլի 2-ին ռազմական գործողությունների ընթացքում արձանագրվել է նաև Թալիշում չորս քաղաքացիական անձանց զոհվելու դեպքեր:

2016 թ. հունվար-հունիս ամիսների մահացության 136 դեպքերից 77-ը՝ ապրիլի 1-5-ը ընկած ժամանակահատվածում տեղի ունեցած ռազմական գործողությունների հետևանքով են, 25-ը՝ հրադադարի

ռեժիմի խախտման, 13-ը՝ դժբախտ պատահարի (4-ը՝ ավտովթարի, 1-ը՝ հոսանքահարման, 2-ը՝ մեքենաներ վարելու, շահագործելու կանոնների խախտման, 3-ը՝ բնական աղետի /1-ը՝ ձնահոսքի, 2-ը՝ ջրհեղեղի/, 2-ը՝ բլիզդաժի փլուզման, 1-ը՝ ջրահեղձման), 11-ը՝ սպանության (5-ը՝ գեներլի հետ վարվելու կանոնների, 3-ը՝ կանոնադրային հարաբերությունների խախտումների հետևանքով, 2-ը՝ դեռևս չհստակեցված հանգամանքներում, 1-ը՝ դիտավորյալ), 8-ը՝ ինքնասպանության կամ ինքնասպանության հասցնելու հետևանքով, 1-ը՝ մարտական ծառայություն կրելու կանոնների խախտման հետևանքով, և 1-ը՝ առողջական խնդիրների՝ սրտի կաթվածի հետևանքով:

Մահացության 136 դեպքերից 2-ի (1 ավտովթար և 1 ինքնասպանություն) դեպքում զինծառայողները չեն գտնվել ծառայության մեջ:

Ավտովթարի արդյունքում մահացած պարտադիր ժամկետային զինծառայողը ավտովթարի պահին գտնվել է արձակուրդի մեջ: Դեպքի մասին պաշտոնական հաղորդագրություն չի տարածվել:

ՀՀ ՊՆ N գորամասի, 2-րդ դասակի հրամանատար, կապիտան Մեսրոպ Ղուրբուդյանն ինքնասպանություն է գործել կախվելու միջոցով՝ իր տան լոգարանում: Դեպքի վերաբերյալ ՀՀ ՊՆ-ն պաշտոնական հաղորդագրություն չի տարածել, իսկ ՀՀ Քննչական կոմիտեի կողմից տարածված հաղորդագրության մեջ չի նշվում զինծառայողի ինքնասպանություն գործելու պատճառը: Հետևաբար, ինքնասպանության փաստի եւ զինծառայության հետ կապված խնդիրների միջև կապի մասին որևէ տեղեկատվություն չկա:

2016 թ-ի հունվար-հունիս ժամանակահատվածում հրադադարի ռեժիմի խախտման հետևանքով 102 (ներառյալ պատերազմական գործողությունների ընթացքում մահվան դեպքերը) մահացության դեպքերից 2-ը տեղի են ունեցել ՀՀ-ում, որոնցից մեկը Տավուշի մարզի Ճամբարակ համայնքում, իսկ մյուսը՝ Վայոց ձորի մարզում:

## Ապրիլին եղել է պայմանավորված պատերազմ. Չարուհի Փոստանջյան

06.07.2016



Ազգային ժողովի «Ժառանգություն» խմբակցության պատգամավոր Չարուհի Փոստանջյանը կարծում է, որ ապրիլին եղել է պայմանավորված պատերազմ:

«Եղել է պայմանավորված պատերազմ Սերժ Սարգսյանի եւ թշնամու միջև, ինչպես նաև երրորդ կողմ է եղել: Դա է պատճառը, որ հենց առաջին օրն ունեցել ենք հիմնական զոհերը, քանի որ չենք ունեցել պաշտպանվելու հրաման: Սակայն մեր ժամկետային զինծառայողներն ու կամավորականները խախտել են նրանց պայմանավորվածությունը, որով Սերժ Սարգսյանը պետք է

տարածքներ տար հակառակորդին: Մեր 20-ամյա զինվորները խախտեցին տարածքները տալու պայմանավորվածությունը»,- այսօր՝ հուլիսի 6-ին, լրագրողների հետ հանդիպմանն ասաց ընդդիմադիր պատգամավորը:

Չարուհի Փոստանջյանի խոսքով՝ պատահական չէր նաև այն, որ Մատադիսի զորամասի հրամանատարն այդ ընթացքում եղել է արձակուրդում. «Չորքերի նման շարժք անհնար էր չնկատել մեր արբանյակների միջոցով»:

## Ոստիկանությունը հրապարակել է զինված խմբի 31 անդամների անունները (Ֆոտո)

25.07.2016



Հայաստանի ոստիկանությունը հրապարակել է հուլիսի 17-ի վաղ առավոտյան պարեկապահակային ծառայության (ՊՊԾ) գնդի տարածքը գրաված զինված խմբի 31 անդամների անունները:

Նրանք են՝

- Պավել Մանուկյան,
- Տիգրան Մանուկյան,
- Արամ Հակոբյան,
- Արմեն Լամբարյան,
- Գագիկ Եղիազարյան,
- Արեգ Կյուրեղյան,
- Մմբատ Բարսեղյան,
- Էդվարդ Գրիգորյան,
- Արմեն Բիլյան,
- Վարուժան Ավետիսյան,
- Աշոտ Պետրոսյան,
- Թորոս Թորոսյան,
- Մխիթար Ավետիսյան,
- Թաթևուկ Թամրազյան,
- Վարդան Գերավետյան,
- Գևորգ Իրիցյան,
- Մեդրակ Նազարյան,
- Մարտիրոս Հակոբյան,
- Արթուր Սողոմոնյան,
- Արայիկ Խանդոյան,
- Մերգեյ Կյուրեղյան,
- Հովհաննես Հարությունյան,
- Հովհաննես Վարդանյան,
- Ռուբեն Գրիգորյան,

Արայիկ Հակոբյան,  
Գևորգ Մելքոնյան,  
Գառնիկ Հովակիմյան,  
Արթուր Մելքոնյան,  
Էդգար Սողոմոնյան,  
Արամ Մանուկյան,  
Տիգրան Սարգսյան:

Նշենք, որ արդեն 9-րդ օրն է, ինչ Երևանի Խորենացի փողոցում զինված խումբը գրոհով վերցրել է ոստիկանության ՊՊԾ գունդը:

Մեկ ոստիկան՝ նույն գնդի փոխհրամանատար Արթուր Վանոյանը զոհվել է: Վիրավորվել են եւս չորս ոստիկաններ՝ ոստիկանության գնդապետ Արամ Հովհաննիսյանը, փոխգնդապետ Հրաչ Խոստեղյանը, ոստիկանության ենթասպա Գագիկ Մկրտչյանը, օպերատոր Ռոբերտ Հայրապետյանը: Վիրավորում է ստացել նաև ՊՊԾ գնդի զրոհին մասնակցած անձանցից մեկը՝ Թաթևուկ Թամրազյանը:

Բոլոր 9 պատանդները զինված խումբն ազատ է արձակել:

## Քաղտեխնոլոգ. Հայաստանի առաջին ու երրորդ նախագահները դաշինք են ստեղծել Ղարաբաղի հարցի շուրջ

25.07.2016



Հայաստանի առաջին ու երրորդ նախագահները նույն բանն են ասել՝ Ոստիկանությանն ՊՊԾ գնդի գրավման շուրջ ստեղծված իրավիճակը կարող է խնդիրներ ստեղծել արտաքին քաղաքական դաշտում: Այս մասին հուլիսի 25-ին մամուլի ասուլիսի ժամանակ ասել է քաղտեխնոլոգ Վիգեն Հակոբյանը:

Եվ դա, նրա խոսքով, ամենուհին էլ զարմանալի չէ: Քաղտեխնոլոգը համաձայնել է ԱԺ ընդդիմադիր պատգամավոր Նիկոլ Փաշինյանի այն գնահատականին, որ Մերժ Սարգսյանը ու Լեւոն Տեր – Պետրոսյանը դաշինք են ստեղծել դարաբաղյան հակամարտության փուլային կարգավորման հարցում: Վիգեն Հակոբյանի կարծիքով այս պահին հիմնական խնդիրը դարաբաղյան հարցում ստեղծված փակուղին է:

Հիշեցնենք, որ ՀՀ Ոստիկանության ՊՊԾ գնդի գրավումը տեղի է ունեցել հուլիսի 17-ին: Հուլիսի 23-ին ազատ են արձակվել վերջին պատանդները՝ երկու բարձրաստիճան ոստիկաններ: Չինված խմբի անդամների պահանջները նույնն են մնում՝ արմատական ընդդիմադիր Ժիրայր Մեֆիլյանի ազատ արձակումը ու երկրի ղեկավարության հրաժարականը:

## ԼՂ հարցում ամերիկյան ակտիվությունը եկավ ձախողելու ռուսական արյունոտ պլանը. քաղաքագետ

10.07.2016



Լեռնային Ղարաբաղի հարցում ամերիկյան դիվանագիտության ակտիվությունը նպատակ ունի ձախողելու ռուսական արյունոտ պլանը, որի մասին վերջերս շատ է խոսվում: Այս մասին NEWS.am-ի հետ զրույցում նշել է Քաղաքական և միջազգային հետազոտությունների կենտրոնի փոխտնօրեն, քաղաքագետ Ռուբեն Մեհրաբյանը: Նրա խոսքով, իսկապես, մենք տեսնում ենք չափազանց մեծ ակտիվություն ամերիկյան դիվանագիտության կողմից, ինչը գալիս է նրանից, որ Հարավային Կովկասը մեծ նշանակություն է ձեռք բերել Արևմուտքի, մասնավորապես ԱՄՆ-ի համար և առաջին հերթին անվտանգության սպառնալիքների տեսակետից: «Այդ սպառնալիքներն այստեղ ոչ միայն և ոչ այնքան այն են, որ հակամարտությունները կարող են ապաստանել, այլ այն է, որ դա կարող է արվել հենց Ռուսաստանի ձեռքերով: Հենց սա է ստիպել ամերիկյան կողմին ակտիվացնել իր դիվանագիտական, քաղաքական ջարքերը, բացի դրանից ստիպել Ռուսաստանին, որպեսզի նա իր միջազգային մանդատին համապատասխան քայլեր անի, այլ ոչ թե հակամարտությունը ծառայեցնի իր կայսերակապաշտական շահերին: Իսկ դա ճանապարհ է դեպի պատերազմ»:

Քաղաքագետը նշել է, որ ամերիկյան նախաձեռնությունը լիովին համապատասխանում է Հայաստանի շահերին և Հայաստանը, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղը պետք է օգտվեն պատմական այս հնարավորությունից. «սա է ճանապարհը, որ մեզ դուրս կրերի փակուղուց»:

Դիտարկմանը, որ թեև հայկական կողմը հայտարարում է, որ այս պահին քննարկվում են միայն վստահության մեխանիզմների ներդրումը, սակայն, օրինակ, Հարավային Կովկասում և Կենտրոնական Ասիայում Հյուսիսատլանտյան դաշինքի գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչ Ջեյմս Ափաթուրայը հայտարարել է, որ բանակցային սեղանին շատ գաղափարներ կան և ստատուս քվոն չի կարող երկար շարունակվել, այն պետք է փոխվի բանակցային ճանապարհով: Այսինքն ստացվում է, որ բանակցություններում նաև բուն կարգավորումն է քննարկվում, Մեհրաբյանն արձագանքել է. «Չի կարող ջրնարկվել բուն կարգավորումը, և ստատուս քվոյի փոփոխման հարցը ևս քննարկվում է, դատելով տեղեկատվական արտահոսքերից, որոնք մենք տեսնում ենք միջնորդ երկրների բարձրագույն իշխանությունների կողմից: Պետք է ասել, որ այո, վստահության մեխանիզմների

կարևոր բաղկացուցիչ մասն էլ այդ ընթացքն է դեպի համապարփակ կարգավորում: Վարչակայում նաև Սերժ Սարգսյանը տվեց դրա պատասխանը, որ այո, ստատուս քվոն կփոփոխվի և կփոփոխվի այն ժամանակ, երբ կճանաչվի Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքը: Ի դեպ, նման բան մենք հանդիպել ենք նաև ԱՄՆ պետքարտուղարության ԼՂ-ին նվիրված հայտարարություններում: Բացի դրանից ԱՄՆ կողմից տեսնում ենք նաև առաջարկների փաթեթում այն, որ իրավաբանորեն պարտադիր հանրաքվեի ճանապարհով է խնդիրը լուծվելու, փոխադարձ զիջումների ճանապարհով: Դրա հիմքում այո ԼՂ ժողովրդի ինքնորոշման իրավունքն է: Ղարաբաղի ժողովուրդը պետք է որոշի իր ապագան»:

Քաղաքագետը նաև կարծիք է հայտնել, որ Լեռնային Ղարաբաղի հարցում ամերիկյան դիվանագիտության ակտիվությունը նպատակ ունի ձախողելու ռուսական արյունոտ պլանը, որի մասին վերջերս շատ է խոսվում: «Մա շատ լավ նորություն է, որովհետև ռուսական պլանը տանում է հակամարտության չկարգավորում, տանում է դեպի ռուսադրբեջանական գործարք՝ ի հաշվիվ հայկական շահերի: Դա հանգեցնելու էր նրան, որ այդ չկարգավորված հակամարտության գոտում պետք է տեղակայվեին Մոսկվայի ցանկությամբ, ռուսական այսպես կոչված խաղաղապահ ուժեր: Այսինքն Սաֆոնովի ռեժիմը Լեռնային Ղարաբաղում, այն ինչ մենք տեսանք ԽՍՀՄ տարիների մայրամուտին, այդ ռուսադրբեջանական ռազմական տեռորի ռեժիմը պիտի շարունակվեր: Այլ բան Ռուսաստանն իր հետ չի կարող բերել: Իսկ ամերիկյան դիվանագիտության ակտիվացումը գալիս է խափանելու ռուսական արյունոտ պլանը»,- իր խոսքն ամփոփեց նա:

## ԼՂՀ կառավարության հաշվետվությունը. Հատուկ հաշվեհամարին փոխանցվել է 4,56 մլրդ դրամ

16:13, 11.07.2016



Արցախի Հանրապետության կառավարության մի շարք անդամներ, վարչապետ Արայիկ Հարությունյանի գլխավորությամբ, հուլիսի 8-ին Ազգային ժողովի պաշտպանության, անվտանգության և օրինապահպանության մշտական հանձնաժողովին և խմբակցությունների ղեկավարներին են ներկայացրել օպերատիվ շտաբի գործունեության եռամսյակային հաշվետվությունը, որը ներառում էր նաև ապրիլի 4-ից ի վեր ԱՀ կառավարության հատուկ հաշվեհամարում



հանգանակված գումարների ծախսման վերաբերյալ գաղտնի տեղեկություններ: Քանի որ կառավարությունն ի սկզբանե պարբերաբար հրապարակում էր պարենային և իրային աջակցության մուտքի և ելքի, ինչպես նաև ֆինանսական աջակցության մուտքի վերաբերյալ ողջ տեղեկատվությունը, այժմ ստորեւ հրապարակում ենք նաև հանգանակված գումարների ծախսերի վերաբերյալ ընդհանուր տեղեկատվություն՝ առանց բացելու ռազմական գաղտնիք պարունակող մանրամասները:

2016 թվականի հուլիսի 1-ի դրությամբ՝ 6,831 ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից կառավարության հատուկ հաշվեհամարին է փոխանցվել 2,334,853,200 ՀՀ դրամ, 3,510,147 ԱՄՆ դոլար, 173,728 եվրո և 62,121,313 ՌԴ ռուբլի կամ, ընդհանուր առմամբ, 4,562,175,600 համարժեք ՀՀ դրամ:

Ապրիլի 4-ից մինչև հուլիսի 1-ը հավաքագրված գումարներից տարբեր նշանակության ծախսեր են կատարվել, որոնք ներառել են հետևյալ ընդհանրական տողերը՝ ՀՀ դրամով արտահայտված՝ փոխանցում 1.7 Հ պաշտպանության նախարարությանը՝ 597,826,000, ռազմական նշանակության տեխնիկայի և սարքավորումների ձեռքբերում՝ 736,529,100, ինժեներական աշխատանքների կատարում՝ 356,452,800, ՊԲ կարիքների համար ենթակառուցվածքների, տրանսպորտի և կապի ծառայությունների ու կապիտալ ծախսերի իրականացում՝ 198,859,700, գորակոչված քաղաքացիներին և կամավորականներին դրամական աջակցության տրամադրում՝ 532,372,100:

Հաշվի առնելով տվյալ ծախսերի գաղտնիությունը՝ կառավարությունը չի կարող ավելի մանրամասն հրապարակային տեղեկատվություն տրամադրել դրանց վերաբերյալ: Այնուամենայնիվ, կարելի էրելով հանգանակության ոչ միայն մուտքերի, այլ նաև ծախսերի թափանցիկությունը՝ գործադիր մարմինը պատրաստակամություն է հայտնում կազմակերպել ավելի մանրամասն փակ հաշվետվություն մի խումբ հասարակական-քաղաքական գործիչների առջև՝ նրանց ցույց տալու հատուկ հաշվեհամարի գումարներով կատարված աշխատանքները:

Հիշեցնենք, որ հանգանակությունը շարունակվում է, և բոլոր ցանկացողները կարող են դրամական փոխանցումներ կատարել հետևյալ բանկային հաշիվներին՝ Սպասարկող բանկ՝ «Արցախբանկ» ՓԲԸ

Հասցե՝ Կիելյան փողոց 3, Երևան, Հայաստան  
SWIFT՝ ARTSAM22

Ստացող՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների նախարարություն

Հաշվեհամարները՝

ՀՀ դրամ՝ 22300612211100,

ԱՄՆ դոլար՝ 22300110153200,

Եվրո՝ 22300200153300,

ՌԴ ռուբլի՝ 22300400153100:

Առցանց փոխանցումների (վիզա, մատթեր և արքա քարտերով) համար անցնել հետևյալ ղղմամբ:

Բացի ֆինանսական հանգանակությունից, կառավարությունը ստացել է նաև զգալի ծավալի իրային և պարենային աջակցություն, որոնք հաշվետու ժամանակահատվածում տրվել են կարիքավոր քաղաքացիներին և պաշտպանության նախարարությանը:

Դրանց շարքում, 137 նվիրաբերված մեքենաները փոխանցվել են գլխավորապես պաշտպանության նախարարությանը, ինչպես նաև մի շարք այլ պետական մարմինների: Նյութական աջակցության և ստացված մեքենաների վերաբերյալ մանրամասն հաշվետվությունները՝ կից փաստաթղթերում, իսկ ֆինանսական հանգանակության մուտքի վերաբերյալ տեղեկատվությունը՝ 1.7 Հ ֆինանսների նախարարության կայքում:

Կառավարությունը շնորհակալություն է հայտնում բոլոր այն սրտացավ մարդկանց, ովքեր Ադրբեջանի կողմից ապրիլյան ագրեսիայի օրերին և դրանից հետո իրենց ներդրումն են ունեցել Արցախի առաջնագծի և թիկունքի ամրացման կարևոր գործում՝ վստահելով հանրապետության իշխանություններին տնօրինելու իրենց նվիրատվությունները՝ հանուն Արցախի անվտանգության մակարդակի բարձրացման:

## Պավել Մանուկյանն ու նրա որդին վիրահատվել են. Նրանց վիճակը ծանր է

27.07.2016

«Սասնա ծռեր» խմբի անդամներ Պավել Մանուկյանն ու նրա որդին՝ Արամ Մանուկյանը վիրահատվել են, նրանց վիճակը գնահատվում է ծանր, բայց կայուն և վերահսկելի:

Հիվանդանոցի գործադիր տնօրեն տնօրեն Միքայել Մանուկյանը լրագրողների հետ զրույցում հայտնեց, որ «Էրբերունի» բժշական կենտրոն ժամը 1-ին տեղափոխել են երեք հիվանդների, որոնցից մեկը ոստիկանության աշխատակից է, ունի սրունքի հրազենային վնասվածք: Նրա վիճակը կայուն է, գտնվում է հիվանդասենյակում:

Պավել Մանուկյանն ու Արամ Մանուկյանը տեղափոխվել են վիրահատարան, կատարվել են վիրահատություններ, որոնք տեւել են երկու ժամ:

ԲԿ միկրովիրաբուժության բաժանմունքի վարիչ Արմեն Հովհաննիսյանը հայտնեց, որ Պավել Մանուկյանն ընդունվել է զույգ ազդրերի հրազենային վնասվածքներով: Կատարվել է վերքի առաջնային վիրաբուժական մշակում, նաև ոսկրի ֆիքսացիա: Այժմ Պավել Մանուկյանը տեղափոխվել է վերակենդանացման բաժանմունք:

Արամ Մանուկյանը ընդունվել է ձախ ազդրի հրազենային վնասվածքով: Կատարվել է վերքերի առաջնային վիրաբուժական մշակում, ոսկրերի ֆիքսացիա:

«Էրբերունի» հիվանդանոցի ինտենսիվ թերապիայի բաժանմունքի գիտական ղեկավար Հարություն Մանգոյանն էլ նշեց, թե Պավել և Արամ Մանուկյանների վիճակը գնահատվում է ծանր, սակայն կայուն և վերահսկելի: «Մենք կատարում ենք ցավազրկողների ներարկումներ, որ մինչև առավոտ լինեն հանգիստ վիճակում», - նշել է նա: Հարցին, թե ետագայում այդ վնասվածքներն ինչ ազդեցություն կունենան նրանց վրա, մանգոյանը պատասխանեց, թե դեռ վաղ է այդ մասին խոսելը:

Ըստ Միքայել Մանուկյանի, հայր և որդի Մանուկյանների կյանքին դեռ վտանգ սպառնում է, միացված են արհեստական շնչառության սարքերին, բժիշկներն անում են բոլոր միջոցառումները՝ վտանգները նվազեցնելու համար:

## ԱՄՆ Սենատի հատկացումների հանձնաժողովը հաստատել է ՀՀ-ին 24.1 մլն դոլարի օգնություն կհատկացվի

13.07.2016



ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի հատկացումների հանձնաժողովը հուլիսի 12-ին հաստատել է 2017-ի ֆինանսական տարվա պետական, արտաքին գործառնությունների եւ առնչվող ծրագրերի (SFOPS) հատկացումների օրինագիծը, որը ներառում է Հայաստանին եւ տարածաշրջանին հատկացվող օգնությունը, հաղորդում է Ամերիկայի հայկական համագումարը:

Այս օրինագիծը պահպանում ազատության աջակցման ակտի 907-րդ հոդվածը եւ ներառում է աջակցություն Հայաստանում ապաստանած սիրիացի փախստականներին: Ըստ այդմ, Սենատը հաստատել է 24.1 մլն դոլարի ոչ ռազմական օգնություն հատկացնել Հայաստանին, ինչպես նաեւ կոչ է արել շարունակել աջակցություն ցուցաբերել Լեռնային Ղարաբաղին:

Ամերիկայի հայկական համագումարի գործադիր տնօրեն Բրայան Արդունին այս առնչությամբ նշել է. «Քանի որ Կոնգրեսը պետք է լրամշակի Ներկայացուցիչների պալատի եւ Սենատի հատկացումների օրինագծերը, Ամերիկայի հայկական համագումարը շարունակելու է պնդել լրացուցիչ օժանդակություն հատկացնել Հայաստանին՝ հաղթահարելու համար Սիրիայից փախստականների ներհոսքի խնդիրը, ինչպես նաեւ խիստ անհրաժեշտ մարդասիրական օգնություն հատկացնել Լեռնային Ղարաբաղի վերակառուցման համար, որը տուժել է Ադրբեջանի կողմից սանձազերծած ապրիլյան պատերազմից»:

Ավելի վաղ [NEWS.am](http://www.news.am)-ը հայտնել էր, որ ԱՄՆ Սենատի հատկացումների հանձնաժողովը հանձնարարել էր Հայաստանին տրամադրել 24.1 մլն դոլարի, իսկ Ադրբեջանին՝ 10.9 մլն դոլարի օգնություն: Ընդհանուր առմամբ Հայաստանին հատկացվող գումարի չափը 3 մլն դոլարով ավելի է, քան նախագահ Բարաք Օբամայի բյուջետային հարցումն էր:

Նշվում է, որ ԱՄՆ Սենատի հատկացումների հանձնաժողովը հաստատել է Լեռնային Ղարաբաղին անմիջական օգնություն ցուցաբերելուն հավատարիմ մնալու իր որոշումը: Ծրագիրը 1998-ից հումանիտար օգնություն է ցուցաբերում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիներին: Սենատը նաեւ հանձնարարել է ֆինանսական աջակցություն ցուցաբերել Հայաստանի փախստականներին:

«Հանձնաժողովն աջակցում է Հայաստանում փախստականների, մասնավորապես Սիրիայում եւ Իրաքում ծագած հակամարտություններից փախած Մերձավոր Արեւելքի փախստականների համար օգնություն ցուցաբերելուն», – ասված է Սենատի՝ 2017-ի ֆինանսական տարվա ծախսերի օրինագծում:

Լեռնային Ղարաբաղի օգնության մասով հանձնաժողովը որոշել է. «Հանձնաժողովը հանձնարարում է նախորդ ֆինանսական տարիների չափով օգնություն ցուցաբերել ղարաբաղյան հակամարտության զոհերի հարազատներին՝ նրանց ընթացիկ կարիքների բավարարման համար: Հանձնաժողովը հակամարտության խաղաղ կարգավորման կոչ է անում եւ ընդունում, որ Լեռնային Ղարաբաղում բնակչության մեկ շնչի հաշվարկով ականապատ տարածքների ամենաբարձր մակարդակն է, եւ ականգրեծման աշխատանքներն արդյունավետ են եղել տեղերում, որտեղ իրագործվել են: Հանձնաժողովը կոչ է անում շարունակական ջանքեր գործադրել այդ ծրագրերի աշխարհագրության ընդլայնման համար»:

## Մահացել է բանաստեղծ Դավիթ Հովհաննեսը

19.07.2016



71 տարեկանում մահացել է բանաստեղծ Դավիթ Հովհաննեսը:

Դավիթ Հովհաննեսը ծնվել է 1945-ի փետրվարի 17-ին: Ավարտել է Երեւանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը: Աշխատել է Հայաստանի պարբերական մամուլում, «Հայֆիլմ» կինոստուդիայում, անտիկ եւ արտասահմանյան գրականության պատմություն է դասախոսել Հայաստանի մի շարք բուհերում: 1975 թվականից Հայաստանի Գրողների միության անդամ է: 1980-1990 թթ. հայկական հեռուստատեսությունում վարել է «Նորք» ամենամսյա գրական հանդեսը:

Եղել է «Արեւիկ» հրատարակչության տնօրենների խորհրդի նախագահը, 1999-2003 թթ.՝ ՀՀ Ազգային Ժողովի 2-րդ գումարման պատգամավոր:

Գրել սկսել է վաղ պատանեկան տարիքից, 1965 թվականից տպագրվել է: Հեղինակել է շուրջ 25 բանաստեղծական, մանկական եւ թարգմանական ժողովածուներ, հրապարակախոսական եւ քննադատական հոդվածներ, էսսեներ, ռադիոպիես (ռուսերեն), թարգմանական գրքեր (ռուսերենից եւ անգլերենից): Հայտնի են «Մեզանից հետո ուժեղ ու հաղթանդամ», «Քաղաքային ձմեռ», «Հավերժական հայր» եւ այլ բանաստեղծություններ:

Թարգմանել է աֆրո-ասիական, մերձբալթյան, ռուս, ուկրաինացի, ամերիկյան դասական բանաստեղծներից: Ռուսերենով եւ անգլերենով թարգմանաբար լույս են տեսել

նրա բանաստեղծական երեք ժողովածուները, ծավալուն շարքերով մշտապես ներկայացվել է հայ պոեզիայի օտարալեզու անթոլոգիաներում:

## **Fitch-ը հաստատել է Հայաստանի վարկանիշը՝ միջին (B+)–ից ցածր, կայուն կանխատեսումով 24.07.2016**



Fitch միջազգային վարկանիշային գործակալությունը հաստատել է Հայաստանի վարկային վարկանիշը B+ մակարդակի վրա՝ կայուն կանխատեսումով, հայտնում է Reuters–ը: Այս գնահատականը տրվել է օտարերկրյա ու հայրենական արժույթով երկարաժամկետ վարկանիշին (IDR):

Արտարժույթով առաջնային չափահովված պարտատոմսերի վարկանիշը մնացել է B+ մակարդակում: Երկրի առաստաղի վարկանիշը (փոխանցումների ու արժույթի կոնվերտացման ռիսկերը) մնացել է BB- մակարդակում, իսկ կարճաժամկետ IDR–ը արտարժույթով B-ի վրա:

Fitch-ը սահմանել է նաև կարճաժամկետ էմիսենտի նոր վարկանիշ՝ արդեն ազգային արժույթով՝ 'B' մակարդակի վրա: B+ վարկանիշը բխում է Հայաստանի համեմատաբար բարենպաստ բիզնես կլիմայից, բնակչության մեկ հոգուն բաժին հասնող համեմատաբար բարձր ՀՆԱ-ից, ԱՄՀ–ի հետ Extended Arrangement ծրագրով, նաև պետպարտքի երկար ժամկետներով ու ցածր դրույքներով:

Վարկանիշի վրա բացասաբար է անդրադառնում բարձր արտաքին պարտքը, նաև դրա բարձր տեսակարար կշիռը արտարժույթով: Խանգարում է նաև բանկային ոլորտի բարձր դոլարիզացումը ու հարեւան երկրների հետ լարվածությունը:

Հայաստանի տնտեսությունը շարունակում է զգալիորեն աճել, եւ Fitch-ը ակնկալում է այդ աճի շարունակություն՝ չնայած 2014-ի վերջից սկսած Ռուսաստանից ու ընդհանուր ԱՊՀ-ից բխող ցնցումներին:

Այդուհանդերձ, 2015 թ. Հայաստանի տնտեսությունը աճել է 3 տոկոսով: Արտահանման աճը օգնել է չեզոքացնել ներքին թույլ պահանջարկը: Չնայած դրամական փոխանցումների հոսքի կրճատմանը ու արտահանման պահանջարկի անկմանը՝ այդ բացասական հետեւանքները մասամբ չեզոքացվել են դրամի փոխարժեքի անկումով, արտահանման ուղղությունների դիվերսիֆիկացումով ու լեռնարդյունաբերության ոլորտում արտահանման շահույթի աճով:

2016-ի սկիզբը բարենպաստ ստացվեց: Առաջին եռամսյակում գրանցվել է 4.4 տոկոսի տնտեսական աճ: Հատկապես նկատելի է աճել արտահանումը

տարածաշրջանի սահմաններից դուրս գտնվող երկրներ՝ Իրաք՝ 8.8 տոկոսով (արտահանման ամենախոշոր հոդվածը՝ ծխախոտ-խմբ.) ու Չինաստան՝ 11.1 տոկոսով (արտահանման ամենախոշոր հոդվածը՝ պղնձի խտանյութ-խմբ.): Fitch-ի ակնկալիքներով 2016-ին տնտեսությունը կաճի 3.5 տոկոսով (վերջին կանխատեսումը՝ 2.0 տոկոս): Այդուհանդերձ, դա ցածր է B խմբի երկրներում վերջին 5 տարիներին գրանցված միջին մակարդակից (4.2 տոկոս): 2017-18 թթ. ակնկալվում է 3.6 տոկոսի միջին աճ՝ Ռուսաստանում աճի վերականգնմանը զուգընթաց, իսկ պահանջարկը տարածաշրջանում ավելի շատ կաճի:

Եթե 2014-ին ընթացիկ հաշվի պակասորդը կազմել է ՀՆԱ-ի 7.3 տոկոսը, ապա 2015-ին՝ ներմուծման զգալի կրճատման շնորհիվ ընդամենը 2.7 տոկոս էր (մինչդեռ B խմբի երկրներում միջինը 7 տոկոս է):

Դոլարային արտահայտությամբ՝ 2015-ին ներմուծումը կրճատվել է 26 տոկոսով, մինչդեռ արտահանումը շատ ավելի քիչ է կրճատվել՝ 4.2 տոկոսով: Արտահանման հարաբերական կայունությունն ուղեկցել է նաև դրա դիվերսիֆիկացումով (տես վերելում՝ Չինաստանի ու Իրաքի մասին-խմբ.):

Այդուհանդերձ, 2015-ի վերջին արտաքին պարտքը աճել է մինչև ՀՆԱ 46.8 տոկոս՝ 2014-ի 40.7 տոկոսի համեմատ (դա շատ ավելի բարձր է, քան B խմբի երկրների 18.6 տոկոսը):

Fitch-ի կանխատեսումներով, 2016-18 թթ. ՀՆԱ-ի հանդեպ վճարային բալանսի պակասորդը կկազմի միջինը ՀՆԱ-ի 2.3 տոկոսը, արտահանման զգալի ծավալների ու ներմուծման սահմանափակ աճի շնորհիվ: Դրա շնորհիվ արտաքին պարտքը մինչև 2018 թ. պետք է նվազի մինչև ՀՆԱ 40.7 տոկոս:

Երկրի արտաքին ռեզերվները 2015-ի վերջին աճել էին մինչև 1.8 մլրդ դոլար, ինչը համարժեք է ընթացիկ արտաքին վճարների 4.2 ամսվա: Դա ավելի բարձր է քան B խմբի միջին 3.6 ամիսը: Fitch-ն ակնկալում է, որ 2016-18թթ. արտաքին ռեզերվները կմնան ընթացիկ արտաքին վճարների 4.6 ամսվա մակարդակում:

2015-ին բյուջեի եկամտա-ծախսային պակասորդը աճել է մինչև ՀՆԱ-ի 4.8 տոկոս, ծրագրված 2.3 տոկոսի դեպքում (B խմբի երկրների համար միջին ցուցանիշը մի քիչ ցածր է՝ 4.3): Պակասորդի բացասական դինամիկան շարունակվել է նաև 2016-ի սկզբին՝ հիմնականում որովհետև հակամիջոցառումների համար պետությունը հատկացրել է 64.4 մլրդ դոլար՝ 2015-ի նույն ժամանակահատվածում հատկացված 40.3 մլրդ դոլարի փոխարեն:

Fitch-ի կանխատեսումներով, 2016-ին ՀՆԱ-ի հանդեպ Կառավարության պարտքի հարաբերակցությունը կաճի մինչև 52.4 տոկոս՝ 2015-ի 48.7 տոկոսից (B խմբում միջին ցուցանիշը 51.8 տոկոս է):

Հայաստանի վարկանիշի վրա շարունակում են ազդել Ադրբեյջանի հետ լարված հարաբերությունները: Գործակալության կարծիքով դարաբաղյան հակամարտությունը տեսանելի ապագայում սառեցված կմնա:

Իրավիճակը բանկային ոլորտում կառավարելի է մնում՝ նույնիսկ այն պայմաններում, երբ վարկերի դոլարիզացումը գերազանցում է 65 տոկոսը: Վատացել է ակտիվների որակը, ու մայիսի վերջին չաշխատող վարկերի տոկոսը հասել է 10 տոկոսի: Բանկերի եկամտաբերությունը մնում է

սահմանափակ, բայց պետք է աստիճանաբար աճի՝ հայրենական տնտեսության բարելավմանը զուգընթաց: Արժույթային ռիսկերը սահմանափակվում է այն հանգամանքը, որ բանկերը չեն կարող կապիտալի 40 տոկոսը գերազանցող բաց արժույթային դիրքեր պահել, իսկ SDR գամբյուղից դուրս (այսինքն դոլարից, եվրոյից, ֆունտից, յուանից ու իենից բացի մյուս արժույթները, նաև SDR-ում չընդգրված շվեյցարական ֆրանկը) արժույթներով բաց դիրքերը կապիտալի միայն 10 տոկոսն են կազմում:

Բացի դրանից արտարժույթով պարտավորությունների ռեզերվավորման բարձր պահանջները, որոնք ներդրվել են 2014-ի դեկտեմբերին, օգնել են լիկվիդային ակտիվները պահպանել կարճաժամկետ պարտավորությունների 100 տոկոսից նկատելիորեն բարձր մակարդակի վրա: Բանկերի արտաքին պարտավորությունները բարձր են (արտասահմանյան ֆինանսավորումը կազմում է պարտավորությունների ավելի քան 30 տոկոսը՝ ամենաբարձր մակարդակը ԱՊՀ-ում ու Վրաստանում), բայց այդ պարտավորությունների 75 տոկոսը երկարաժամկետ են, ու հիմնականում միջազգային ֆինանսական կազմակերպություններից ու արտասահմանյան բաժնետերերից:

Բանկային ոլորտի կապիտալիզացիան նորմալ է՝ մայիսի վերջին ակտիվների նկատմամբ կապիտալի 17.2 տոկոս հարաբերակցությամբ: Fitch-ի կանխատեսումներով այդ մակարդակը պետք է այսուհետ էլ աճի, քանի որ աճելու են նվազագույն պահանջները բանկային կապիտալի հանդեպ, որը 2017-ին 5-ից մինչև 30 մլրդ դրամ կաճի (10 մլն դոլարից մինչև ավելի քան 60 մլն դոլար- խմբ.):

Այսպիսով, ակնկալում է, որ Հայաստանում կպահպանվի սոցիալական ու քաղաքական կայունությունը: Գործակալության ակնկալիքներով ռուսաստանյան տնտեսությունը 2016-ին կկրճատվի 0.7 տոկոսով, իսկ 2017-ին կաճի 1.3 տոկոսով:

## Սարի թաղում տուժած 17-ամյա տղայի աչքը հեռացրել են

30.07.2016



Սարի թաղում ոստիկանական գործողությունների հետևանքով տուժած 17-ամյա Սայաթ Հարությունյանի աչքը հեռացրել են: Այդ մասին NEWS.am-ի թղթակցին հայտնել է նրա հորեղբայր Կարո Հարությունյանը:

Նա պատմեց, որ Սայաթը Վարդենիսից է եկել քույրերին տեսակցելու, որոնք Երևանում են ապրում, իսկ այսօր Սարի թաղ էր եկել բարեկամներին տեսնելու: Ըստ հորեղբոր, նա որևէ ցուցի չի մասնակցել: Սայաթ Հարությունյանին տեղափոխել էին «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» հիվանդանոց:

Հիվանդանոցից NEWS.am-ին հայտնեցին, որ 17-ամյա պատանու վիճակն այս պահին բավարար է: Ինչպես ավելի վաղ հայտնել էր NEWS.am-ը, Երևանի «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» հիվանդանոցում ժամը 1:30-ի դրությամբ գտնվում է Սարի թաղում տեղի ունեցած բախումների հետևանքով տուժած 42 քաղաքացի, ընդհանուր տուժածների թիվը վերջին տվյալով 60 է: Նրանցից մեկի վիճակը ծանր է, նա 17 տարեկան երիտասարդ է, որի աչքը վիրահատել են: Մյուսների վիճակը գնահատվում է կայուն:

## Այս պահի դրությամբ հիվանդանոցներ են տեղափոխվել 60 տուժածներ. ԱՆ խոսնակ

02:18, 30.07.2016

Խորենացի փողոցում եւ Սարի թաղում տեղի ունեցած միջադեպի հետևանքով, նախնական տվյալներով, շտապ օգնության մեքենաներով մայրաքաղաքի 5 բժշկական հաստատություն են տեղափոխվել կամ դիմել տարբեր վնասվածքներով 60 տուժած: Այդ մասին Facebook-ի իր էջում գրել է առողջախառության նախարարության մամուլի խոսնակ Անահիտ Հայթայանը:

«Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոնում այս պահին գտնվող 42 տուժածից մասնագետները ծանր են գնահատում 2-ի վիճակը: Նրանցից մեկի աչքն է վիրահատվում, մյուսի մոտ այրվածքներ են: Զննարկվում է նրա տեղափոխման հարցը մասնագիտական կենտրոն: Ծանր է գնահատվում նաև «Էրեբունի» բժշկական կենտրոն տեղափոխված 12 տուժածներից մեկի վիճակը: Այստեղ գտնվող տուժած 5 ոստիկանից 1-ին՝ որովայնի հրազենային վնասվածքով, այս պահին վիրահատում են:

Մնացած տուժածների վիճակը բավարար է: Ինչ վերաբերում է մամուլում շրջանառվող մանկահասակ երեխաներ հոսպիտալացնելուն, ապա հայտնում ենք, որ Երևանի որևէ հիվանդանոց, ինչպես նաև «Շտապբուժօգնությունը» այդ փաստը չհաստատեց:

## Սարի թաղում լրագրողներ եւ օպերատորներ են տուժել

29.07.2016

Սարի թաղում այսօր՝ հուլիսի 29-ին, ուշ երեկոյան ոստիկանության և ցուցարարների բախումը լուսաբանող լրագրողներ են տուժել (Փոտոռեպորտաժ):

«Ազատություն» ռադիոկայանը հայտնում է, որ իր նկարահանող խմբի անդամներ Կառլեն Ապալյանն ու Հովհաննես Մովսիսյանը ծեծի են ենթարկվել քաղաքացիական հագուստով անձանց կողմից, որոնք, ըստ ռադիոկայանի, եղել են ոստիկաններ:

Սարի թաղում ՍիվիլՆեթի լրագրողի եւ օպերատորի ոտքերի տակ պայթուցիկ է պայթել, ինչի հետևանքով նրանք վնասվածքներ են ստացել: Այրվածքներ է ստացել նաև Ա1+-ի թղթակցից: Սարի թաղում վիրավորվել են նաև «Առաջին լրատվական»-ի լրագրող Մարիամ Գրիգորյանն ու օպերատոր Դավիթ Հարությունյանը:

Panorama.am-ի օպերատոր Հովիկ Գրիգորյանը տուժել է պայթուցիկից: Տուժել է նաև Լրագիր.am-ի օպերատորը: Սարի թաղում իրադարձությունները լուսաբանելու ժամանակ ծեծի են ենթարկվել «Արմենիա»


հեռուստաընկերության «Ժամը» լրատվականի թղթակից Ադվան Ասոյանը և օպերատոր Ալբերտ Գալստյանը:

Նշենք, որ Սարի թաղում ցուցարարներին ցրելու համար ոստիկանները ծխանոնակներ են նետել ցուցարարների վրա: Տարածքում նաև հրդեհ է բռնկվել, թերեւս այդտեղից անցնող գազատարի վրա: Նախնական տեղեկություններով կան տուժածներ:

Իրավիճակը խիստ թեժ է նաև Խորենացի փողոցում, որտեղ մեծ բազմություն է հավաքվել: Ոստիկանության փոխգնդապետ Այվազյանը դիմելով ցուցարարներին՝ հայտարարել է, թե հավաքն անօրինական է և կոչ է արել դադարեցնել այն: Որոշ ժամանակ անց ոստիկանները հարձակման են անցել:

## Երթը գնաց Սարի թաղով. Ոստիկանական փոքր պատը չդիմացավ ճնշմանը

29.07.2016



Ազատության հրապարակից դեպի Խորենացի փողոց երթ անող բազմությունը անսպասելիորեն փոխել է ճանապարհն ու Նարդոսի փողոցից մտել է Սարի թաղ:

NEWS.am-ի թղթակիցը հայտնում է, որ երթի մասնակիցների մի մասը սկսել են վանկարկել «Դեպի ձախ», Նարդոսի փողոցի միջնամասից անսպասելիորեն ձախ են մտել և տների բակերով քայլում են: Մի փոքր խումբ ոստիկաններ փորձեցին պատ կազմել, սակայն ցուցարարները ճեղքել են փոքր խմբին և առաջ են գնում:

## Արայիկ Խանդոյանը՝ «Միայնակ գայլը», վիրավոր է

16:48, 29.07.2016



Ոստիկանության ՊՊԾ գունդը գրոհած «Սանա ծներ» զինված խմբի անդամ Արայիկ Խանդոյանը՝ «Միայնակ գայլը», վիրավոր է: Այս մասին հայտնում է «Հիմնադիր խորհրդարանը»:

«Սասնա ծներ» խմբից Վարուժան Ավետիսյանը [in.am](http://in.am)-ին հայտնել է, որ Արայիկ Խանդոյանը վիրավորվել է ոտքից:

Նրա խոսքով, Արայիկ Խանդոյանը «մոտեցել է պարզելու, թե ինչ են նետում անօդաչու թռչող սարքից՝ դա արդյո՞ք ռումբ է . թե ոչ, այդ պահին դիպուկահարից արձակված կրակոցից Խանդոյանը ոտքից վիրավորվել է»:

Ոստիկանությունից հաստատել են այս տեղեկությունը՝ նշելով. «Ի խախտումն իրավապահների պահանջի՝ ՊՊԾ գնդում քիչ առաջ կրակահերթեր և կրակոցներ են հնչել, ինչին իրավապահները պատասխանել են, որի արդյունքում կրակահերթ արձակողներից մեկը՝ Արայիկ Խանդոյանը, վիրավորվել է»:

Հիշեցնենք, որ հուլիսի 17-ի առավոտյան «Սասնա ծներ» զինված խումբը Էրեբունիում գրոհով վերցրել է ՊՊԾ գունդը և պատանդ են վերցրել ոստիկանության ծառայողների: Մեկ ոստիկան՝ նույն գնդի փոխհրամանատար Արթուր Վանոյանը գոհվել է: Վիրավորվել են ևս չորս ոստիկաններ և ՊՊԾ գնդի գրոհին մասնակցած անձանցից մեկը՝ Թաթուլ Թամրազյանը: Հուլիսի 23-ին «Սասնա ծներն» ազատ են արձակել վերջին 4 պատանդներին, այդ թվում ՀՀ փոխոստիկանապետ Վարդան Եղիազարյանին և և Երեւանի փոխոստիկանապետ Վալերի Օսիպյանին:

Ըստ ոստիկանության, հուլիսի 26-ի առավոտյան ոստիկանության և զինված խմբի միջև փոխհրաձգության ընթացքում վիրավորվել է մեկ ոստիկան և «Սասնա ծներից» Աշոտ Պետրոսյանն ու Հովհաննես Հարությունյանը, նրանք տեղափոխվել են հիվանդանոց:

Հուլիսի 27-ին, ոստիկանության փոխանցմամբ, հրաձգության ընթացքում վիրավորվել են «Սասնա ծներից» Պավիկ Մանուկյանը, նրա որդին՝ Արամ Մանուկյանը, ինչպես նաև իրավապահները ձերբակալել են զինված խմբից Արամ Հակոբյանին և Գագիկ Եղիազարյանին:

## «ՀԺ». Վարդգես Գասպարիին բերման ենթարկելուց հետո աղբանոց են տարել

29.07.2016



Armtimes.com-ի գրուցակիցն է քաղաքացիական ակտիվիստ Վարդգես Գասպարին:

Պարոն Գասպարի, Ձեզ էլ էին չէբերման ենթարկել վերջին օրերին:

Այո, երեկ:

Այն ուղեկցվե՞ց բռնությամբ:

Ուրեմն ինձ Խորենացիում բռնեցին, ոստիկանական մեքենա կար, տարան շարտեցին ինձ էնտեղ, եկավ Երանոսյանը, փորձեց ինձ սաղրել՝ բա էնտեղ լավ ես գոռոզում, ասա տեսնեմ ինչ ես ասում: Ես իրեն իհարկե արժանի չհամարեցի պատասխանեմ: Ինձ գցել էին ոստիկանական մեքենայի մեջ՝ մոտ 40-50 սմ-անոց մի խուց, դրա հատակին նստած, իսկ ոտքերս դուրսն էր, եթե չեմ սխալվում՝ Երանոսյանն էր,

ասաց, որ ոտքերս շրջեն դեպի առաստաղ, ու իմ վնասված ողնաշարով, ինձ երկու տակ արած, փակեցին էդ խցի մեջ: Տեսական ժամանակ ինձ պահեցին այդ վիճակում: Հետո արդեն բաժնում ինձ ստիպում էին, որ իմ ոտքով գնամ, ինձ ասեցին բավական է կապիկություն անես, մեկ է՝ կլաուզնիկ ես: Հետո տարան բաժին, կողքը զուգարան կար, գնում էին լվացվելու, գալիս ձեռքներն իմ վրա թափ տալիս:

### Ոստիկանության ներքին զորքե՞ր էին տարել:

Չէ, ինձ Կենտրոնի բաժին էին տարել, մոտ 4 ժամ պահեցին, հետո առաջարկեցին լքել ոստիկանության տարածքը, ես բնականաբար չգնացի, ասեցի ոնց բերել եք, նենց էլ տարեք: Իրենք տարան ոստիկանության շենքի հետնամասում գտնվող աղբանոցը, դրեցին էդ աղբանոցում: Այլ մարդկանց նկատմամբ ֆիզիկական ու հոգեբանական բռնություններ էին կատարում, չէի տեսնում, բայց լսում էի, որ հատկապես տարեց մարդկանց ահաբեկում էին, թե ի՞նչ է, եկել եք ահաբեկիչներին՝ ես սատարում: Ինձ թվաց, որ այդ զրույցների ընթացքում մի տարեց մարդու ապտակեցին, բայց դե ինչպես գիտեք էդ մարդիկ սովորաբար չեն արտահայտվում:

### Տեղյակ եք երեւի, որ երեկ բերման էին ենթարկել հայտնի կանադահայ դերասանուհի Արսինե Խանջյանին, ինչը կանադական մամուլում սկանդալի է վերածվել, ըստ Ձեզ չե՞ն ճանաչել վերջինիս, թե՞ հրաման էին ստացել, պետք է կատարեին:

Ամեն անարխիստի մեջ էլ կա մի տրամաբանություն, մենք եւ նրանք, ես կասեի՝ մենք-ը Արսինե Խանջյանն է, իսկ իրան բերման ենթարկողը ոստիկան Մագան է: Մա է մեր սահմանը:

Մեր ազատամարտիկները՝ Սասնա Ճռերը Մոնթեի շառավիղներն են, Մոնթեի բարոյականության կրողն են, որ պատանդներից մեկի բաց են թողնում, որովհետեւ պերզիա ունի, մյուսին բաց են թողնում, որովհետեւ նշանդրեքն է: Իսկ իրավապահները տասնապատիկ անգամ ստոր ու անմարդկային վերաբերմունք էին դրսևորում, սակայն մեր տղաներն իրենց մարդկային դրսևորմամբ ցույց են տվել, որ Մոնթեի շարունակությունն են»:

### Ինքնահրկիզման դեպք Բաղրամյան պողոտայում, ցուցարարների մեջ

23:30, 30.07.2016



Բաղրամյան պողոտայում սկզբնամասում, որտեղ այս պահին ցուցարարների մեծ բազմություն է հավաքվել եւ նստացույց է ընթանում, ինքնահրկիզման դեպք է գրանցվել: NEWS.am-ի թղթակիցը, վկայակոչելով ակնատեսներին, հայտնում է, թե մոտ 50 տարեկան մի տղամարդ հայտարարություն է արել, բենզինը լցրել իր վրա եւ այրել:

Նրա կողքին գտնվող ցուցարարներն անմիջապես օգնության են հասել, մարել կրակը, եւ փորձել են օգնություն ցուցաբերել:

Տղամարդը գիտակից վիճակում է եղել, հրաժարվել է ոստիկանության մեքենայով հիվանդանոց գնալուց: Ցուցարարները նրան հիվանդանոց են ուղարկել տաքսի մեքենայով:

### Ալեք Ենիգոմջյանին կալանավորեցին երկու ամսով

30.07.2016



«Հիմնադիր խորհրդարան»-ի անդամ Ալեք Ենիգոմջյանին այսօր՝ հուլիսի 30-ին կալանավորել են:

Փաստաբան Նիկոլայ Բաղդասարյանը Facebook-ում գրառում է արել. «Բիչ առաջ ավարտվեց Ալեք Ենիգոմջյանի վերաբերյալ խափանման միջոց կալանք ընտրելու դատական նիստը, որը վարում էր Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների դատավոր Մեսրոպ Մակյանը: Դատավարությունն առանձնահատուկ էր նաեւ դատավոր Մ.Մակյանի վարկածով, տպավորությունս այն էր, որ Ալեք Ենիգոմջյանը հանցագործություն է կատարել իր դեմ եւ դատավորը պատեհ պահ է գտել իրեն պատժելու: Մակյանի պատկերացումը. «Կանգնեք ես Ձեզ ասում եմ», «Կնստեք, երբ ես եմ Ձեզ ասում» (ցավոք դատավորի տոնը չեմ կարում արտահայտել) հաշմանդամություն ունեցող մարդու նկատմամբ բացարձակապես չէր տեղավորվում անաչառ դատավորի կերպարի մեջ: Դատավորության արդյունքում, նա որոշեց կալանավորել Ենիգոմջյանին՝ երկու ամիս ժամկետով»:

Հիշեցնենք, որ Ալեք Ենիգոմջյանը ձերբակալվել է հուլիսի 27-ին: Նա կասկածվում է գինված խմբին օժանդակելու մեջ:

### Հրանտ Բագրատյանը կաթված է ստացել

30.07.2016



Հրանտ Բագրատյանը սույն թվականի հուլիսի 19-ին մեկնել է արտասահման բուժման: Բուժման ընթացքում հուլիսի 29-ին նա գլխուղեղի կաթված է ստացել: Ներկայումս նա ապաքինվում է Լիսաբոնի Բրիտանական Հոսպիտալում:

«Ազատություն» Կուսակցության լրատվական ծառայությունից հայտնում են, թե Հրանտ Բագրատյանը Երևան կվերադառնա կաթվածից հետո առաջին բուժման կուրսն ավարտելուն պես:

## ՊՊԾ գնդից արձակված կրակոցից ոստիկան է սպանվել.



ՊՊԾ գնդի տարածքից զինյալ դիպուկահարի կողմից կրակ է բացվել: Այդ մասին Facebook-ի իր էջում հայտնել է ոստիկանության լրատվության վարչության պետ Աշոտ Ահարոնյանը:

Նրա խոսքով, ոստիկանը սպանվել է ՊՊԾ գնդից 350-400 մետր հեռավորության վրա, ավտոմեքենայի մեջ գտնվող ոստիկանության զորքերի ծառայող, 1986 թ. ծնված Յուրա Տեպանոսյանը:

Մայր Աթոռը կոչ էր անում մերժել հակամարտությունը, ընթանալ երկխոսության ճանապարհով  
30.07.2016



Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում հուլիսի 30-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ տեղի ունեցավ Վանական խորհրդի ընդլայնված նիստ, որին հրավիրված էին Մայր Աթոռում պաշտոնավարող և հայաստանյան թեմերի առաջնորդ եպիսկոպոսները: Անդրադառնալով մայրաքաղաքում ստեղծված կացությանը՝ ժողովականները հանդես եկան հետևյալ ուղերձով:

«Երեւանում վերջին օրերին ծավալվող իրադարձությունները խաթարել են մեր կյանքի խաղաղությունը: Խորապես ցավ ենք ապրում, որ լարված իրավիճակը երեկ երեկոյան հանգեցրեց նոր բախումների, ինչի հետեւանքով վիրավորվեցին տասնյակ մարդիկ՝ ցուցարարներ, ոստիկաններ և լրագրողներ: Անընդունելի ենք համարում ամեն կարգի անօրինական քայլ ու բռնության միտված գործողություն, որոնք կարող են պատճառ դառնալ արյունահեղության և վտանգել մեր պետականության սպազան:

Մտահոգված սրտով, բայց նաև մեր ժողովրդի ողջախոհության հանդեպ հավատով կոչ ենք անում՝ չտրվել զգացմունքայնությանը, մերժել հակամարտությունը, կամք դրսևորել՝ ընթանալու երկխոսության ճանապարհով: Մեր երկրում, հիրավի, մեր հասարակությանը հուզող և լուծման կարոտ շատ խնդիրներ ու մարտահրավերներ են ծառայում, որոնց հաղթահարումը պետք է իրագործվի որքան հնարավոր է շուտ և բացառապես խաղաղ գործընթացներով, փոխըմբռնման ոգով: Մենք բոլորս նույն ժողովրդի զավակներն ենք, նույն տեսիլքն ունենք հզոր ու պայծառ Հայրենիքի և որպես հարագատ ժառանգները մեր հայրենաշեն նախնիների՝ պարտավոր ենք առաջնորդվելու համագաղային շահերի նախանձախնդրությամբ:

Հրավիրում ենք մեր զավակներին՝ շարունակելու հանապազօրյա աղոթքները, որպեսզի իրավիճակի կարգավորման բոլոր ջանքերը Աստծո առաջնորդությամբ պսակվեն բարի արդյունքներով:

Աղոթքով առ Ողորմածն Աստված՝ շուտափույթ սպաքինում ենք մաղթում վիրավորներին, հավատքի ամրություն՝ մեր սիրելի ժողովրդին:

Անսանք Եկեղեցու սուրբ հայրերի պատգամին՝ «միություն կարևոր հարցերում, երկրորդականներում՝ ազատություն է ամեն ինչում՝ սեր»:

Աստծո սերն ու օրհնությունը մեզ ամենքիս. ամեն»:  
Ժողովի ավարտին որոշում կայացվեց վաղը՝ հուլիսի 31-ին, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցիներում հատուկ աղոթք բարձրացնել մեր հայրենիքի և մեր ժողովրդի խաղաղության, անսասանության ու բարօրության և վիրավորների շուտափույթ սպաքինման համար:

## Հավաքների ազատության իրավունքները պետք է հարգվեն. ՄԱԿ-ը՝ Երեւանում տեղի ունեցածի մասին

30.07.2016



Հայաստանում Միավորված ազգերի կազմակերպությունը մեկնաբանել է Երեւանում վերջերս տեղի ունեցող իրադարձությունները:

«Մենք ուշադիր հետևում ենք հուլիսի 17-ին Էրեբունու պարենակապահակային ծառայության գնդի գրավումից ի վեր Երեւանում զարգացող իրադարձություններին:

Հայաստանում Միավորված ազգերի կազմակերպությունը մտահոգված է անցյալ գիշեր բազմաթիվ կալանավորումների և ուժի կիրառման արդյունքում տուժածների մասին տեղեկություններով: Իրենց գործառնությունները իրականացնող լրագրողների նկատմամբ ուժի կիրառումը երբեք չի կարող ընդունելի լինել:

Մենք միանում ենք անհապաղ հետաքննություն անցկացնելու, բոլոր կողմերի զսպվածության և

հանդուրժողականության դրսևորելու մասին ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի եւ այլ միջազգային կազմակերպությունների կոչերին: Հավաքների ազատության եւ կամարտահայտման ազատության իրավունքները պետք է հարգվեն, իսկ կամայական կալանավորումները չեն կարող ընդունվել:

Մենք ցավակցում ենք Էրեբունու իրադարձություններում իր կյանքը կորցրած ոստիկանական սպայի (Արթուր Վանոյանի) ընտանիքին: Մենք նաև դատապարտում ենք բուժաշխատողների պատանդառության քայլը, որը երբևէ չի կարող արդարացվել:

Հույս ենք հայտնում, որ իրավիճակը շուտափույթ եւ խաղաղ կերպով կհանգուցարկվի: Մենք նաև խրախուսում ենք գործունակ մեխանիզմներ ներդնել՝ լայն քաղաքացիական հասարակության եւ իշխանությունների միջև կառուցողական երկխոսություն ապահովելու համար»,- ասվում է ՄԱԿ հայտարարության մեջ:

## Արմեն Մարտիրոսյանը ձերբակալվել է գանգվածային անկարգություններ կազմակերպելու կասկածանքով. պաշտպան 30.07.2016



«Ժառանգություն» կուսակցության փոխնախագահ Արմեն Մարտիրոսյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 225 հոդվածի առաջին մասով սահմանված՝ գանգվածային անկարգություններ կազմակերպելու կասկածանքով: Այս մասին NEWS.am-ի թղթակցի հետ զրույցում նշեց նրա փաստաբան Գիվի Հովհաննիսյանը:

Նրա խոսքով, Արմեն Մարտիրոսյանը չի ընդունում առաջադրված մեղադրանքը: «Նա միշտ խաղաղության աղավնի է եղել եւ երեկ էլ փորձել է հանդարտեցնել կողմերին: Սադրիչներին գտել է, փորձել է այնպես անել, որ բախումներ չլինեն: Դրա վերաբերյալ կան տեսագրությունները»,-ասաց փաստաբանը:

Ավելի վաղ հայտնվել էր, որ հուլիսի 29-ի երեկոյան Խորենացի փողոցում եւ Սարի թաղում ոստիկանությունն ուժային գործողությունների է դիմել: ՊՊԾ գնդի առջև գտնվող տարածքը (Սարի թաղ) ազատելու մասին նախազգուշացումից հետո ոստիկանությունը հատուկ միջոցներ է կիրառել, հարձակվել մարդկանց վրա: Պաշտոնական տվյալներով, 60-ից ավելի մարդ մարմնական վնասվածքներ է ստացել եւ տեղափոխվել հիվանդանոցներ: Ակցիայի ընթացքում նաև բազմաթիվ լրագրողներ են տուժել:

Ոստիկանության փոխանցմամբ բերման է ենթարկվել 165 մարդ, որից 26-ը ձերբակալվել են: Ձերբակալվածների թվում է նաև Անդրիաս Ղուկասյանը:

## Արցախահայերը ստեղծում են Համահայկական ազգային խորհուրդ. մոտ օրերս կգան Երևան. Բաղասյան

13:51, 31.07.2016



ԼՂՀ ԱԺ պատգամավոր Վահան Բաղասյանը հայտարարություն է տարածել, որում ասվում է, որ մի խումբ արցախահայեր որոշել ու ստեղծել ենք ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ եւ մոտ օրերս կգան Երևան:

Հայտարարությունում, մասնավորապես, ասվում է.

«Հայրենակիցներ.1998թ,2003թ,2008թ ՀՀ նախագահական ընտրակեղծումներն ամրագրելու,հանրության արդարացի բողոքները ճնշելու,Արցախի իշխանությունների կողմից ՀՀ իշխանություններին ավելորդ եւ հանցավոր աջակցելու նպատակով իբր թե գաղտնի, բայց այսպես կոչված ազատամարտիկներից, բաղկացած ջոկատներ են կազմակերպել ու տարել մայրաքաղաք Երևան: Մա գաղտնիք չէ,այլ արդեն իսկ անցյալի ողբերգական ու դառը ճշմարտություն:

Վերջին օրերիս Արցախի ազատամարտի միությունը սովեց իր հերթական, հակապետական, ամոթալի, սակայն հոգուտ հայաստանյան աննարունակ իշխանության հայտարարությունը:

Արցախի Ազգային Ժողովի գրեթե բոլոր խմբակցությունները հետևեցին վերոնշյալ միությանը: Հայենակիցներ.այս օրերին,երբ սեղանի վրա է դրված տարածքների զիջման հարցը, արցախահայության անվտանգության հարցը, ինչպես նաև առկա փաստ է Հայաստանում բնակչության ծանր սոցիալական վիճակը,իրավունքի, օրենքի ու սահմանադրության կոպիտ ոտնահարումը,սպա մեր ազգի լավագույն տղաները դիմելով ծայրահեղ քայլի,սակայն արդարացիորեն ասպտամբել են:

Նրանց միացել է ողջ հայ ժողովրդի ողջամիտ, մտահոգ, արժանի մարդիք: Ցավոք իշխանությունը շարունակում է պատվանդանից չիջնել, ականջալուր չլինել, չերկխոսել ժողովրդին հետ: Փոխարեն որոշել է հատուկ պատժել ժողովրդին,ժողովրդի գավակներով,որպեսզի խարխիլ մեր համար այնքան թանկ ազգային – հասարակական համերաշխությունը:

Ուստի պահանջում ենք Արցախի նախագահ Բակո Սահակյանից կամ հետ վերադարձնել մեր գավակներին Երևանից Արցախ կամ անձամբ հերքել, մեզ հավաստիացնել դրա իրականության հետ չհամընկնելը:

Հայրենակիցներ հայտնում ենք,որ ստեղծված ծանր ու պայթուցավտանգ իրավիճակից ելնելով, մի քանի տասնյակ ու ողջախոհ արցախահայեր որոշել ու ստեղծել ենք ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ,որի նպատակն է համախմբել ողջ հայ ժողովրդին,այս վիճակից դուրս գալու,Ազատ Միասնական Հայաստան կերտելու: Խորհրդի նպատակն է միավորել բոլոր ազգային ու առողջ



պետականամետ ուժերին, հանուն ՀԱՅԱՍՏԱՆԻ: Խորհուրդը բաց է բոլոր կուսակցականների, շարժման անդամների, մտածողների եւ ընդհանրապես բոլորի համար: Մոտ օրերս կլինենք Երեւանում»:

## «Մասնա ծեռը» հանձնվում են. հայտարարություն

20:30, 31.07.2016



«Մասնա ծեռը» խումբը, որը 15 օր գրավված էր պահել ՊՊԾ գունդը, այսօր՝ հուլիսի 31-ին հանձնվում են ոստիկանությանը:

Խմբի անդամ Վարուժան Ավետիսյանը «Առաջին րատվականի» հետ զրույցում ասել է, թե «ոստիկանությունը այս վերջին օրերի ընթացքում որդեգրել էր մարտիկներին շարքից հանելու մարտավարություն, ոտքից հարվածելու միջոցով, այսօր արդեն մեր ընկերոջը կրծքավանդակից վիրավորեցին դիպուկահարի միջոցով: Մենք թվով էապես նվազել ենք, մոտավորապես 20-ն ենք, երեկ գիշեր գրոհեցին, մեքենայով պատը ջարդեցին հետո կանգնեցրին, ինչ-ինչ նկատառումներով բանակցություն սկսեցինք: Այսօր ինտենսիվ կրակոցներ հնչեցին, ձայնային ռումբերից, գրահատեխնիկայով ներխուժեցին տարածք:

Ունենք երկու տարբերակ՝ մարտի բռնվել ոստիկանության և այլ ծառայողների հետ, հեղելով այն մարդկանց արյունները, որոնք քիչ առնչություն ունեն ռեժիմ հետ, մյուսը՝ չզնայ արյունահեղության, կամ մնալ ռազմագերու կարգավիճակում, ծանր որոշում էր մեր համար, ռազմագերու կարգավիճակը:

Ժողովրդական ընդվզումը համարում ենք կատարված, կա ժողովրդական շարժում, նոր գոհեր չտալու համար, մեր դեմ կանգնած են մարդիկ, որոնք պարտականություն են կատարում, որոշեցինք, որ այդ մարդկանց արյունը չենք ուզում, ռազմագերու կարգավիճակով շարունակում ենք պայքարել, ժողովրդական ընդվզումը շարունակվում է, մեր ժողովուրդը պետք է պայքարի, չենք թողնի որ մեր երկիրը դառնա ռուսական նահանգ: Չգում ենք, որ հաղթանակը մոտ է, կոչ ենք անում հայ ժողովրդին որոշումը ընդունել՝ դրական քայլ:

Հայ ժողովրդի արգանդը չի չորացել, մենք ընդամենը կայծն ենք տվել, ժողովուրդը կշարունակի:

Ցավոք, այդպես չեղավ. ժողովուրդը դանդաղ շարժվեց: Հաստատական ենք շարունակելու ենք մեր պայքարը: Հեղափոխականները հայտնվում են բանտերում, հետո հաղթանակած դուրս գալիս: Դա էլ է պայքարի մի ձև: Սիրում ենք ձեզ հայ ժողովուրդ, մեզ ոչինչ չի կարող բաժանել, չենք ուզում արյուն թափվի, չենք կարող գենք բարձրացնել այն զինվորի վրա, որ հրաման է կատարում, թեև սխալ հրաման է,

թող այս պայքարը, մեր գոհաբերությունը դառնա սնունդի այն արմատին որը ծիլ է տալու նոր պայքարի»,- նշել է Ավետիսյանը:

## ԱՄԾ հայտարարությունը. ՊՊԾ գնդի տարածքն ամբողջությամբ ազատված է

21:24, 31.07.2016

Հայաստանի Ազգային անվտանգության ծառայությունը հայտարարություն է տարածել՝ «Մասնա ծեռը» խմբի» հանձնվելու վերաբերյալ: Հայտարարության մեջ խմբի անդամներին ԱՄԾ-ն կրկին «ահաբեկիչներ» է անվանել:

«Հ Ազգային անվտանգության ծառայությունը հայտարարում է, որ սույն թվականի հուլիսի 30-ին եւ 31-ին ՀՀ Ոստիկանության պարեկապահակային ծառայության (ՊՊԾ) գնդի տարածքի ազատագրմանն ուղղված հակահաբեկչական օպերացիան ավարտվել է:

ՀՀ իրավասու իրավապահ մարմինների հատուկ նշանակության ստորաբաժանումներն իրենց հետևողական եւ համաձայնեցված գործողություններով ստիպել են զինված խմբի անդամներին վայր դնել զենքը եւ հանձնվել իշխանություններին: Ձերբակալվել է 20 ահաբեկիչ: ՊՊԾ գնդի տարածքն ամբողջությամբ ազատագրված է»,- նշել են ԱՄԾ-ից:

## Ժիրայր Սեֆիյանի պահանջները. Նոր հայտարարություն

31.07.2016



«Հիմնադիր խորհրդարանը» տարածել է արդեն շուրջ մեկ ամիս անազատության մեջ գտնվող Ժիրայր Սեֆիյանի նամակը:

Այն ներկայացնում ենք ամբողջությամբ.

«Քանի որ ինձ առ այսօր հնարավորություն չի տրվում Մասնա Ծեռի հետ անմիջական հանդիպման ընթացքում ճշտել նրանց առաջադրած պահանջների շուրջ նրանց դիրքորոշումը, եւ ես արդեն իսկ տեղեկացված եմ, որ իշխանությունը որեւէ ողջամիտ քայլ չի կատարում արյունահեղությունից խուսափելու համար, իսկ ժողովուրդն իսկապես պետք է տեղյակ լինի բանակցային այն բովանդակությունից, որ ես առաջարկում եմ որպես ոսկե միջին, ապա ես հնարավորինս հակիրճ բնութագրեմ, թե որ հարցերն են, որոնց շուրջ, իմ պատկերացմամբ, ես ի վիճակի կլինեմ Մասնա Ծեռ խմբի տղաներին համոզել զենքը վայր դնել:

Սրա համար ինձ հարկավոր է նրանց ուղղակիորեն հանդիպել, իսկ եթե իշխանություններն ունեն որեւէ մտավախություն, որ ես դուրս չեմ գա գնդի տարածքից եւ

ինքս զենք կվերցնեն, ապա ես պատրաստ եմ ընդունել նրանց կողմից առաջադրվելիք ցանկացած երաշխիքի պահանջ: Ես այս լարված իրավիճակում պատրաստ եմ եւ բազմիցս հայտնել եմ այն մասին, որ խնդրի խաղաղ եւ անարյուն կարգավորման համար պատրաստ եմ ձեռնարկել ամեն հնարավորը:

• Ներքեւում նշված պահանջների բավարարման կամ դրանց բավարարմանն ուղղված քայլերի նպատակով անհրաժեշտ է լինելու ժողովրդի վստահության կառավարություն, որի կազմմանը պետք է օր առաջ ձեռնամուխ լինել: Այն զբաղվելու է հիմնականում այս քայլերի անխոչընդոտ իրականացմանն ուղղությամբ:

## Արցախ

- Այս գերխնդրում հիմնական գիծն այն է, որ պետական ամբողջ գործունեության նպատակն է Արցախն իր մինչ 2016թ.-ի ապրիլի 1-ն ունեցած սահմաններով Հայաստանի Հանրապետության անբաժանելի մաս հայտարարելը եւ դրա միջազգային իրավական ամրագրումներին հասնելը: Սա այն ընդունելի շեմն է, որը չի կարելի նվազեցնել:

- Հայ-ադրբեջանական հակամարտության լուծման տեսլականի իրագործմանն ուղղությամբ ռազմավարական եւ մարտավարական քայլերի մանրամասները եւ ներկայացնելու եւ ըստ անհրաժեշտության:

## Պաշտպանության եւ անվտանգության դրոշմներ

### Բանակ

- Արմատապես փոփոխվի մարտական հերթապահության մարտավարությունը, որի հիմնական նպատակն է ավելի քիչ մարդկային ուժերով Հայաստանի եւ Արցախի սահմանների պաշտպանությունը:

- Բացառել զորակոչիկների կողմից ուղղակի մարտական հերթապահության կրելը: Այդ ծառայությունը պետք է իրականացվի բացառապես կամավորության հիմունքներով պայմանագրային զինծառայողների կողմից: Չավակներ չունեցող պայմանագրային զինծառայողներին պետք է արգելվի մարտական հերթապահության կրելը:

### Ոստիկանություն

- Ոստիկանության հրամանատարական ամբողջ կազմի փոփոխություն: Ոստիկանապետն ու իր բոլոր տեղակալները պետք է հեռացվեն իրավապահ համակարգից անվերադարձ եւ իրենց գործողությունների համար պետք է կանգնեն քրեական արդարադատության առաջ: Ոստիկանության նոր պետը պետք է լինի ոստիկանության համակարգից դուրս անձնավորություն:

- Ոստիկանության կազմը պետք է էականորեն փոփոխվի՝ ժողովրդի դեմ վարձկանների զորամասեր պահելու փոխարեն, այդ զորամասերի անձնակազմին պետք է անհասպաղ հնարավորություն տրվի ավելի բարձր աշխատավարձով պայմանագրային զինծառայության անցնել՝ հայրենիքին արտաքին վտանգից պաշտպանելու նպատակով, բանակում պայմանագրային զինծառայողի կարգավիճակում՝ իրենց կոչումների պահպանմամբ:

- Ոստիկանության նոր պետը եւ նրա տեղակալները պետք է որեւէ առնչություն չունենան վերջին դեպքերի եւ մարտի 1-ի գործողություններին, որպես ուղերձ մնացած բոլորին, որ ժողովրդի արյան վրա ձեռք տաքացնել չի լինելու այլեւս Հայաստանում եւ յուրաքանչյուրը պետք է պատժվի:

## Պաշտպանության եւ ինքնիշխանության դրոշմ

- պետք է անմիջապես սկսել բանակցություններ ՌԴ սահմանապահ զորամիավորման կողմից Հայաստանի

սահմանների հսկողությունը դադարեցնելու ուղղությամբ՝ ՌԴ զինված ուժերի մնացյալ զորախմբի հարցը թողնելով ապագայում լուծման: Հայաստանի արտաքին սահմանները պետք է հսկվեն միայն Հայաստանի զինված ուժերի եւ հատուկ ծառայությունների կողմից:

- ՌԴ սահմանապահները պետք է Հայաստանին փոխանցեն Հայաստանի սահմանների հսկողության համար իրենց տրամադրված ողջ ռեսուրսը, ներառյալ նաեւ հետախուզական եւ հակահետախուզական ցանցերը, որքանով որ դա հնարավոր կլինի:

• Հայաստանում բոլոր քաղաքնապետների ազատ արձակում: Մասնավորապես՝

• Հայկ Կյուրեղյան, Ծանթ Հարությունյան եւ մյուսներ, Վորոյա Ավետիսյան, Գեւորգ Սաֆարյան: Այս ցանկը սպառնիչ է: Այս պահին բոլորի անունները չեմ մտաբերի:

• Վերջին օրերի իրադարձությունների կապակցությամբ (Մասնա Ծոեր խմբին ի պաշտպանություն կազմակերպված հավաքների առնչությամբ) ձերբակալված բոլոր անձանց նկատմամբ խափանման միջոցները պետք է փոխվեն եւ նրանց համար սպահովվի արդարության բոլոր պահանջների բավարարմամբ դատաքննություն:

• Պետք է դադարեցվեն բոլոր հալածանքները եւ հետապնդումները, որոնք կապված են վերջին իրադարձությունների հետ:

• Բացի քաղաքնապետների հարցից, Հայաստանում արդար դատաքննության իրավունքի համատարած խախտումների պայմաններում պետությունը պետք է լրջորեն քննարկի եւ դիմի աննախադեպ եւ ընդարձակ համաներման՝ հաշվի առնելով Սահմանադրությամբ նախատեսված սահմանափակումները: Յմահ բանտարկյալների համար պատժից պայմանական-վաղաժամկետ ազատումը պետք է իրական հնարավորություն լինի՝ օրենքով նախատեսված չափանիշներին բավարարելու դեպքում:

### Իշխանությունը պետք է վերադարձվի ժողովրդին

- ընտրական օրենսդրության բարեփոխում, մասնավորապես, գլխավորապես եւ առաջին հերթին ընտրողների կողմից ստորագրված ցուցակների բացարձակ հասանելիություն ժողովրդին եւ յուրաքանչյուրին: Այս ցուցակները ցանկացած իշխանության օրինակարգության վկայականն են, որը 1996թ.-ից ի վեր որեւէ իշխանություն Հայաստանում չի ունեցել: Առանց այդ վկայականի որեւէ մեկը կամ որեւէ խումբ իշխանության հավակնելու իրավունք չունի: Այլապես իր արածը իշխանության յուրացում է, ինչին ականատես ենք արդեն քսան տարի:

### 6. Արդարադատության դրոշմ

• Պետական կառավարման, արդարադատության եւ օրենսդիր համակարգի բոլոր օղակներից պետք անվերադարձ հեռացվեն բոլոր այն անձինք, ովքեր առնչություն են ունեցել ա) մարտի 1-ին ժողովրդի դեմ ուժ կիրառելուն եւ հետագայում քաղաքական բանտարկություններին: Եթե նրանք այդ արել են որեւէ սպառնալիքի կամ հարկադրանքի ներքո, ապա պետք է հրապարակային կերպով, ամենայն մարմանությամբ պարզաբանեն այդ հանգամանքները՝ նշելով անուններ եւ մյուս տվյալները եւ հրապարակայնորեն ներողություն խնդրեն այդ անելու համար: Եւ բ) բոլոր այն պետական պաշտոնյաները, որոնք առնչություն են ունեցել ապօրինի

բռնություն գործադրելուն վերջին օրերի ընթացքում, պետք է կանգնեն դատարանի առջև:

• Հանձնաժողովի ստեղծում, որը կուսումնասիրի Հայաստանում պետության կարիքների համար մարդկանց ունեզրկման վերաբերյալ վերջին տասնամյակի բոլոր գործերը, եւ այդ կապակցությամբ կառավարությանը կներկայացվի առաջարկներ՝ արդարության վերականգնման նպատակով (Գլխավոր եւ Հյուսիսային պողոտաներ, Լոռվա եւ Սյունիքի մարզեր, եւ այլն):

• *Մոցիսյանի եւ Բնասպահյանական*

- Հայաստանի ընդերքի եւ բնության հոշոտումը պետք է դադարեցվի: Ընդերքը պետք է զգուշորեն օգտագործվի եւ բացառապես ու միայն պետական շահերի ամենախիստ պաշտպանությամբ, ստվերային ամբողջ շրջանառության բացառմամբ եւ հանրության վերահսկողության տակ գտնվող կազմակերպությունների կողմից: Ձեւերը մասնագետները պետք է հուշեն:

- Կառավարությունն ու Կենտրոնական բանկը պետք է անմիջապես ձեռնամուխ լինեն աղքատ եւ աղքատության եզրին գտնվող ընտանիքների վրա դրված վարկային բեռի թեթեւացմանն ուղղված գործունեությանը:

- Էլեկտրաէներգիայի եւ գազի ռեսուրսների արդյունավետ օգտագործման նկատմամբ վերահսկողությամբ հասնել դրանց սակագների նվազման: Այս ոլորտներում կառավարությունը պետք է անմիջապես վերսկսի բանակցություններ՝ այս ռազմավարական ոլորտներում հիմնական դերակատար կազմակերպություններում բաժնեմասերի Հայաստանի սեփականությունը վերականգնելու ուղղությամբ՝ հաշվի առնելով իր ստանձնած պարտավորությունները:

• *Տնտեսական որոտ*

- Փոքր բիզնեսը պետք է ազատվի ուղղիղ հարկերից:

- Միջին բիզնեսը պետք է ազատվի ուղղիղ հարկերից մինչեւ երկու տարի ժամկետով:

- Մենաշնորհները պետք է վերացվեն, բացառությամբ նրանցից, որոնք ունեն ռազմավարական նշանակություն եւ սահմանվելու են Ազգային ժողովի կողմից: Այս մենաշնորհային իրավունքները պետք է պատկանեն բացառապես պետական կազմակերպությունների:

- Հարկային եւ մաքսային վարչարարությունը պետք է իրականացվի բացառապես քաղաքացիական եւ հանրային լայն վերակսկողության ներքո գտնվող մարմինների կողմից՝ հավասարության, օրինականության եւ թափանցիկության սկզբունքների խստիվ պահպանմամբ:

Այս պահանջների ի կատար ածումը համազգային անվտանգության խնդիր է այլևս: Սրանք պահանջներ չեն, որոնք կարելու են համարում միայն ես: Սրանք պահանջներ են, որոնց մասին եւ երկար ժամանակ քննարկումներ են ունցել Մասնա Շռերի տղաների հետ եւ վստահ եմ, որ իրենց մոտեցումները նույնական են: Տարիներ շարունակ ժողովուրդն ու դրա տարբեր հատվածներ նույնպես ներկայացրել են այս պահանջները, սակայն մնացել են անտեսված եւ արհամարված:

Սրանք պահանջներ են, որոնք ներկայացված են եղել իշխանությանը՝ հանուն Հայաստան պետության: Սրանք պահանջներ են, որոնց չկատարումը կամ կատարման հետաձգումը, իսկ որ ավելի վատ է՝ կատարման նմանակումը քանդում է պետությունն՝ այն վերածելով տգետների եւ

ամբարտավանների կողմից կառավարման ենթակա խառնամբոխի:

Ես կոչ եմ անում մեր ժողովրդին եւ քաղաքական կուսակցություններին, վերցնել այս պահանջները եւ բարձրաձայնել իրենց անունից, չթողնել այս պահանջի առաջադրման ծանրությունը Մասնա Շռերի տղաների վրա: Նաև դրանով ժողովուրդը կձեւավորի այս պահանջների օրինակարգ ներկայացման հնարավորություն, որպեսզի չստացվի, թե որեւէ մեկը փորձում է զենքի ուժով պահանջ պարտադրել Հայաստանում,- ասվում է Ժիրայր Մեֆիլյանի նամակում, որը նա ուղարկել է «Վարդաշեն» ՔԿՀ-ից, այսօր՝ հուլիսի 31-ին:

## Սյունիքի մարզում գյուղացիները փակել էին ճանապարհը՝ ի աջակցություն «Մասնա ծռերի» վիրավոր անդամի

31.07.2016



Սյունիքի մարզի Մպանդարյան գյուղում գյուղացիները այսօր՝ հուլիսի 31-ին մի քանի ժամ փակ են պահել Մեղրի-Երեւան միջպետական մայրուղին՝ այդ կերպ իրենց բողոքը հայտնելով իրենց համագյուղացուն վիրավորելու եւ ձերբակալելու դեմ:

Մպանդարյան գյուղից է «Մասնա ծռեր» խմբի անդամներից Մեղրակ Նազարյանը, որն այսօր վիրավորվել էր կրծքի հատվածում եւ տեղափոխվել էր հիվանդանոց:

Ճանապարհը փակելուց հետո բազմակիսյալ տարանոց խցանում էր առաջացել: Գյուղացիների հետ բանակցելու համար ոստիկաններ էին ժամանել, նաև Սյունիքի մարզպետ Մուրիկ Խաչատրյանը:

Գյուղապետ Մպարտակ Սիմոնյանը NEWS.am-ի թղթակցի հետ զրույցում նշեց, թե գյուղացիները վրդովվել էին Մեղրակի հետ կատարվածից: Բանակցություններից հետո միջպետական ճանապարհը բացվել է:

Լուսանկարները՝ Facebook-ի օգտատեր Վահագն Գեորգյանի էջից

## Պավլիկ Մանուկյանին երկու ամսով կալանավորեցին

31.07.2016

«Մասնա ծռերի» անդամ Պավլիկ Մանուկյանին այսօր՝ հուլիսի 31-ին, երկու ամսով կալանավորեցին: Այս մասին լրագրողների հետ զրույցում ասաց Պավլիկ Մանուկյանի փաստաբան Ինեսսա Պետրոսյանը՝ նշելով, որ դատարանը բավարարել է նախաքննական մարմնի միջնորդությունը:

Ավելի վաղ տեղեկացրել էինք, որ այսօր «Շտապօգնության» մեքենայով պատգարակով Երևանի «Էրերունի» հիվանդանոցից դատարան է տեղափոխվել Պավլիկ Մանուկյանը: Նրան դատարանից տեղափոխել են «Դատապարյալների հիվանդանոց» ԶԿՀ:



Նշենք, որ Պավլիկ Մանուկյանը գտնվում էր Երևանի «Էրերունի» հիվանդանոցում:

Ավելի վաղ առողջապահության նախարարության մամուլի ծառայությունից NEWS.am-ին հայտնել էին, թե Պավլիկ Մանուկյանն ինքնուրույն է շնչում, սակայն դեռևս գտնվում է Վերակենդանացման բաժանմունքում, քանի որ բուժման անհրաժեշտություն կա այնտեղ:

Հիշեցնենք, ըստ ոստիկանության հաղորդագրության, Պավլիկ Մանուկյանն եւ նրա որդին ուղքերի հատվածում հրազենային վիրավորում են ստացել ՊՊԾ գնդում տեղի ունեցած փոխհրաձգության հետևանքով: Հուլիսի 27-ին Պավլիկ Մանուկյանին մեղադրանք է առաջադրվել Քրեական օրենսգրքի 219-րդ հոդվածի 3-րդ մասով, որը սահմանում է շենքեր, շինություններ, տրանսպորտի, հաղորդակցության կամ կապի միջոցներ զավթելը և 235-րդ հոդվածով՝ ապօրինի կերպով զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելը, իրացնելը, պահելը, փոխադրելը կամ կրելը:

Ըստ մեղադրանքի՝ մի դեպքում նախատեսվում է 6-12, մյուս դեպքում 3-8 տարվա ազատազրկում:

## Համակարգող Խորհուրդը դադարեցնում է իր գործունեությունը. Ալբերտ Բաղդասարյան

31.07.2016



Հակահրահրամային համակարգող Խորհուրդը դադարեցնում է իր գործունեությունը: Այս մասին Facebook-ի իր էջում գրել է այդ խորհրդի անդամ, Գերագույն Խորհրդի պատգամավոր Ալբերտ Բաղդասարյանը:

Նա մասնավորապես, նշել է.

«Համակարգող Խորհուրդը, որի անդամն եմ նաև ես, հայտարարել է իր գործունեության դադարեցման մասին, ելնելով այն բանից, որ մեծ մասը՝ նաև Ալեք Ենիգոմյանը, կալանված կամ ձերբակալված են, մի մասն էլ ինչ-ինչ պատճառներով ի վիճակի չեն շարունակել իրենց գործունեությունը:

«Մասնա ծռերից» Վարուժան Ավետիսյանի հայտարարած վստահության արժանի գործիչները ձերբակալված են: Ձերբակալված է նաև վստահության աղբյուր Ալեք Ենիգոմյանը: Ուստի համարում եմ աննպատակահարմար, ոչ արդյունավետ ու նաև անօգտակար՝ իմ կողմից «Մասնա ծռերի» գործողությունով պայմանավորված Շարժումը կողորդիկացնող Խորհրդի անունից գործելը:

Կրկին անգամ դիմում եմ հանրային վստահություն ունեցող անձանց, այդ թվում նաև պատգամավորների.- ստանձնել ստեղծված Շարժման առաջնորդումը, չթողնել «Մասնա ծռերին» միայնակ:

Անհրաժեշտության դեպքում պատրաստ եմ իմ հնարավորությունների չափով օգտակար լինել Շարժմանն ու Հայաստան Պետության վերակերտման պայքարին»:

## Ամենայն պատասխանատվությամբ տեղեկացնում ենք՝ ոստիկանը մեր կրակոցից չի սպանվել. Վարուժան Ավետիսյան

31.07.2016



Ամենայն պատասխանատվությամբ տեղեկացնում ենք, որ ոստիկանը մեր կրակոցից չի սպանվել: Քիչ առաջ [lin.am](http://lin.am)-ի հետ զրույցում նշել է «Մասնա ծռեր» խմբի անդամ Վարուժան Ավետիսյանը:

«Տվյալ վայրը մեզ համար տեսանելի չէ, ամենայն հավանականությամբ, նա սպանվել է հենց իրենց աջուձախ արձակած դիպուկահարի կրակոցից: Չեմ ուզում ասել՝ միտումնավոր, բայց որ մեր կողմից չի եղել, վստահեցնում եմ», - ընդգծել է Ավետիսյանը:

Ավելի վաղ՝ նախօրեին, ոստիկանության ոստիկանության լրատվության վարչության պետ Աշոտ Ահարոնյանը: Facebook-ի իր էջում գրել էր, որ ՊՊԾ գնդի սարածքից զինյալ դիպուկահարի կողմից կրակ է բացվել: Նրա խոսքով, ոստիկանը սպանվել է ՊՊԾ գնդից 350-400 մետր հեռավորության վրա, ավտոմեքենայի մեջ գտնվող ոստիկանության զորքերի ծառայող, 1986 թ. ծնված Յուրա Տեպանոսյանը:

## Կնեսետի Կրթության եւ մշակույթի հանձնաժողովը ճանաչել է Հայոց ցեղասպանությունը

01.08.2016



Իսրայելի խորհրդարանի՝ Կնեսետի կրթության, մշակույթի եւ սպորտի հանձնաժողովը ճանաչել է Հայոց ցեղասպանությունը: Խորհրդարանի պաշտոնական կայքի փոխանցմամբ՝ այս մասին հայտարարել է հանձնաժողովի ղեկավար Յակով Մարգին («Շաս»):

«Հայոց ցեղասպանությունը ճանաչելը մեր բարոյական պարտականությունն է»,- հայտարարել է Մարգին: Նա ասիստանք է հայտնել, որ Իսրայելը մինչեւ հիմա Օսմանյան կայսրությունում 500 հազարից մինչեւ 1.5 մլն հայ բնակչության կոտորածը ցեղասպանություն չի ճանաչել: Նա Կնեսետի նախագահ Էդելշթեյնին կոչ է արել ուղղել սխալը:

Հայոց ցեղասպանության ճանաչման օգտին հանդես են եկել նաեւ հանձնաժողովի անդամներ Չահավա Գալյոնը («Մերեց»), Դով Հանինը (Միացյալ արաբական ցանկ), Չուիեյր Բապուլը եւ Նահման Շայր («Միոնական ճամբար»): Հանձնաժողովի հանդիպման նախաձեռնող Չահավա Գալյոնը հայտարարել է. «Մենք ամեն տարի դեռ հույս ենք դնում այստեղ նստած մարդկանց վրա: Կնեսետի համար ամոթ է տարեցտարի շարունակել այս հարցի քննարկումն ու որոշում չկայացնել այն մասին, որ Իսրայել պետությունն ու իսրայելական օրենսդիր մարմինը ճանաչում են հայ ժողովրդի ցեղասպանությունը»:

Հարկ է նշել, որ անցյալ ամիս Կնեսետում Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված արարողության ժամանակ խորհրդարանի խոսնակը նույնպես սատարել է ճանաչման գաղափարը: Հայոց ցեղասպանության ճանաչման ամենավաղ կողմնակիցներից մեկն Իսրայելի նախագահ Ռեուվեն Ռիվլինն է:

## Դեսպանը հայոց ցեղասպանության ճանաչման մասին. Եգիպտոսի խորհրդարանը լրջորեն քննարկում է այդ հարցը

21:44, 01.08.2016

Եգիպտոսի խորհրդարանը լրջորեն քննարկում է այդ հարցը (Հայոց ցեղասպանության ճանաչման, խմբ.): Այդ մասին NEWS.am-ի հետ զրույցում հայտնել է Հայաստանում Եգիպտոսի Արաբական Հանրապետության Արտակարգ եւ լիազոր դեսպան Թարեք Մաստին:

Ներկայումս, նրա խոսքով, Եգիպտոսի կառավարությունն առայժմ այդ հարցի վերաբերյալ որոշում չի կայացրել: «Բայց Եգիպտոսի խորհրդարանը, որը երկրի նոր Սահմանադրության համաձայն, շատ լայն լիազորություններով է օժտված, լրջորեն քննարկում է այդ

հարցը: Հաջորդ օրերի ընթացքում մենք կտեսնենք, թե ինչ որոշում կընդունվի: Որպես Հայաստանում Եգիպտոսի դեսպան, ձեր երկրին լավագույնն եմ մաղթում», - հավելել է Թարեք Մաստին:



Հիշեցնենք, որ Եգիպտացի պատգամավոր Մուստաֆա Բաքրին խորհրդարանին եւ կառավարությանը կոչ է արել ճանաչել Հայոց ցեղասպանությունը: Նա եւ 336 պատգամավոր խորհրդարանին կոչ են արել հավանություն տալ 1915 թվականին Օսմանյան կառավարության ձեռքով 1,5 մլն հայի կոտորածը Հայոց ցեղասպանություն կոչելու օգտին բանաձեռի ընդունման նախագծին:

## Կոնգրեսական. Հավանականություն կա, որ ԱՄՆ-ն կճանաչի Հայոց ցեղասպանությունը

01.08.2016



Հավանականություն կա, որ Միացյալ Նահանգները կճանաչի Հայոց ցեղասպանությունը: Այս մասին NEWS.am-ի թղթակցի հետ զրույցում հայտարարեց ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի անդամ Ջիմ Կոստան:

Նրա խոսքով՝ այդ ուղղությամբ աշխատող կոնգրեսականները շարունակում են լրացուցիչ աջակցություն ստանալ այս հարցում:

«Ես շատ հուզված էի Հայոց ցեղասպանության զոհերի հուշարձան այցի ժամանակ, ծաղիկներ խոնարհեցի անմար կրակի մոտ: Ֆրեզնոյում իմ համալսարանը միակն է ԱՄՆ-ում, որտեղ 20-րդ դարի առաջին ցեղասպանության 100-րդ տարեկիցին նվիրված տպավորիչ հուշարձան կա: Մենք կշարունակենք ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատ Հայոց ցեղասպանության ճանաչման մասին բանաձեռի նախագիծ ներկայացնել, եւ ես հավատում եմ, որ ինչ-որ ժամանակ հաջողություն կարձանագրենք»,- ընդգծեց Կոստան:

## Մերժ Սարգսյանի ելույթը. Չենքով եւ բռնությամբ Հայաստանում հարցեր չեն լուծվելու (Փոտո)

18:39, 01.08.2016



«Նախագահ Մերժ Սարգսյանն այսօր նախագահի նստավայրում հանդիպում է ունեցել հասարակության տարբեր շերտերի ներկայացուցիչների՝ մշակույթի գործիչների, առողջապահության ոլորտի, գանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների, հասարակական, քաղաքական գործիչների, Հանրային խորհրդի անդամների, ինչպես նաև օրենսդիր եւ գործադիր մարմինների ներկայացուցիչների, ՀՀ օրենքով ստեղծված մշտապես գործող մարմինների ղեկավարների, Ամենայն Հայոց Կաթողիկոսի գլխավորությամբ հոգևոր դասի ներկայացուցիչների հետ: Հանրապետության նախագահը հանդես է եկել ելույթով:

«Նախագահի խոսքը հասարակության, իշխանությունների եւ հոգևոր դասի ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ Վեհափառ Տեր,

Հարգելի՛ գործընկերներ,

Երեկ վերջապես հանգուցալուծվեց ոստիկանության պարեկապահակային ծառայության գնդի վրա զինյալների խմբի կատարած հարձակման հետեւանքով ստեղծված իրավիճակը: Հանգուցալուծվեց բոլորիս համար, թերեւս, ամենաընդունելի ճանապարհով. Ազգային անվտանգության ծառայությունը, Ոստիկանությունը, Պետական պահպանության ծառայությունը, Ներքին գործերն իրենց հետեւողական եւ համադրված գործողություններով ստիպեցին զինված խմբի անդամներին վայր դնել գնքը եւ հանձնվել իշխանություններին: Անչափ գոհ եմ, որ մեզ հաջողվեց խուսափել նման իրավիճակների համար դասական համարվող լուծումից, որի իրականացման մանրակրկիտ ծրագիրն, իհարկե, նույնպես մշակված էր:

Ունեցանք երկու գոհ եւ բազմաթիվ վիրավորներ: Իմ ցավակցությունն եմ հայտնում ոստիկանության գործերի զինծառայող, ենթասպա Յուրի Տեփանոսյանի ընտանիքին, հարազատներին եւ բարեկամներին: Մեր հիացմունքն ու հարգանքն ենք փոխանցում նաև ոստիկանության գնդապետ Արթուր Վանոյանի ընտանիքին՝ իրական նվիրյալի, ով անվարան անցավ Արցախյան գոյամարտից մինչև սպիրիտի պատերազմ, բայց ընկավ հայրենակցի գնդակից հայրենիքի հանդեպ պարտքն անմնացորդ կատարելու պահին: Փա՛ռք քեզ, հպարտ գնդապետ:

Ինչպես նշեցի, այս ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության իշխանության մարմինները ձեռնարկեցին բոլոր հնարավոր միջոցները մարդկային կորուստներից խուսափելու համար: Այդ առումով առաջին հերթին շնորհակալություն եմ հայտնում իրավապահ մարմինների ներկայացուցիչներին՝ իրենց աշխատանքի համար: Սառնասրտությունը եւ մեծահոգությունը պրոֆեսիոնալիզմի եւ սեփական ուժի գիտակցման ցուցիչներն են:

Դուք դրանք լիովին ցույց տվեցիք: Ծնորհակալ եմ գրագետ աշխատանքի համար:

Ծնորհակալ եմ Հիպոկրատին երդում տվածներին՝ մեր բժիշկներին ու բուժաշխատողներին, նրանց՝ հիացմունքի արժանի կեցվածքի համար, զույս եմ խոնարհում նրանց պրոֆեսիոնալիզմի, նրանց ոգու արիության առաջ:

Ծնորհակալություն եմ հայտնում այս օրերին ողջախոհության խորհրդանիշ դարձած մեր գեներալին՝ Արցախի հերոս Վիտալի Բալասանյանին:

Հարգելի՛ գործընկերներ,

Անընդունելի իրավիճակն ավարտվել է, սակայն ամբողջական հանգուցալուծումը դեռևս առջևում է: Առաջին հերթին պետք է իրականացվի մանրագին հետաքննություն, համակողմանի եւ անաչառ քննություն, բաց դատավարություն: Յուրաքանչյուր ոք պետք է պատասխան տա իր արարքների համար միայն ու միայն օրենքի առաջ: Որեւէ այլ դրսեւորում չի լինելու, անձնական վրեժխնդրության բոլոր փորձերը կասեցվելու են օրենքի ուժով: Հայաստանի Հանրապետությունում ծավալվող բոլոր գործընթացները տեղի են ունենալու բացառապես մեր պետության Սահմանադրության եւ օրենքների շրջանակներում:

Եկել է եզրակացություններ կատարելու ժամանակը: Այս իրադարձությունների ամբողջական վերլուծությունը դեռ երկար ժամանակ կպահանջի: Սակայն մի բան ակնհայտ է. ներհայաստանյան հասարակական եւ քաղաքական կյանքում անհրաժեշտ է արագացնել արմատական փոփոխությունների գործընթացը: Առաջին հերթին իսպառ պետք է վերացնենք բռնությամբ հարցեր լուծելու աղետալի մտայնության գոյությունն իսկ: Մենք այլևս իրավունք չունենք հանդուրժելու գնքով հարցեր լուծելու որեւէ միտում անգամ. հաջորդը կարող է կործանարար լինել մեր երկրի համար:

Անցած երկու շաբաթը եւ այդ ընթացքում մեր ունեցած կորուստներն անթույլատրելի են՝ մարդկային, հասարակական, արժեքային կորուստներից սկսած մինչև այն հսկայական հարվածը, որ հասցվեց մեր տնտեսությանը: Աշխարհի որեւէ երկիր նման բան իրեն թույլ տալու իրավունքը չունի: Առավել եւս դրա իրավունքը չունի Հայաստանը:

Այսուհետ եւս մենք որեւէ մեկին թույլ չենք տալու, որ պատանդ առնի մեր երկիրը:

Մենք որեւէ մեկին թույլ չենք տալու, որ քայքայի մեր պետության հիմքերը: Չենքով եւ բռնությամբ Հայաստանում հարցեր չեն լուծվելու:

Երեւանը Բեյրութ կամ Հայեպ չէ: Նախորդ դարաշրջանի՝ Սառը պատերազմի տարիների լուծումները թող ոչ մեկը չփորձի Մերձավոր Արևելքից ներմուծել Հայաստան: Թող սա չհասկացողները ուսումնասիրեն Լիբանանի քաղաքացիական պատերազմի պատմությունը կամ այսօր դեռ ծավալվող Սիրիայի քաղաքացիական պատերազմի հետեւանքները եւ իրենց եզրակացությունները կատարեն դրանցից:

Ես շնորհակալ եմ բոլոր այն քաղաքական գործիչներին, ովքեր իսկապես իրենց դրսեւորեցին որպես քաղաքական-պետական գործիչներ են, հասկանալով այս ամենը, առաջին իսկ օրվանից ձայն բարձրացրին տեղի ունեցողի անընդունելի լինելու մասին: Նրանք, ի տարբերություն շատ քիչ կարճատեսների, լավ են հասկանում՝ որտեղ է ավարտվում քաղաքական մրցակցության սահմանը եւ սկսվում Հայրենիքի անվտանգության հարթությունը: Մուր իրավիճակները հաճախ լակմուսի դեր են կատարում՝ հասարակության եւ պատմության համար մատնացույց անելով հասուններին եւ տարանջատելով կարճատեսներին ու պատեհապաշտներին:

Ես շնորհակալ եմ մեր մշակույթի երեւելիներին, մեր հասարակական գործիչներին, մեր իրական մտավորականներին, ովքեր շատ լավ հասկացան, որ հրապարակավ դատապարտելով անընդունելին, սթափեցնող խոսք հասցնելով զինյալներին, իրականում նպաստում են խնդրի անարյուն լուծմանը, իրականում մատնանշում են այդ մարդկանց փրկության ճանապարհը: Վիտոս, որ անհիմն ոգևորողները, հստակ գիտակցելով, որ նպաստում են զինյալների

կործանմանը, չկարողացան զսպել իրենց մեջ կուտակած մաղձը, լիուլի թափեցին այն՝ միայն թե քառս լինի, միգուցե ավելոծումները պատահաբար կեղտը մակերես հասնեն: Չզվեյի է: Փա՛ռք Աստծո, որ առողջ բանակախոնությունը գերիշխում է մեր երկրում:

Հայաստանում գերիշխեց մեկ պարզ ճշմարտություն, որը, թվում էր, կասկածի առարկա չպետք է լիներ ի սկզբանե: Եվ այդ ճշմարտությունը արժեքային դաշտում է, մեր շխարհընկալման, մեր տեսակի, մեր ժառանգության մեջ է: Ցանկացած որ կարող է չսիրել իշխանություններին, կարող է չսիրել կառավարությանը, չսիրել նախագահին եւ կտրուկ դեմ լինել այն քաղաքականությանը, որն իրականացվում է, բայց չսիրելն ամենեւին հիմք չէ հերոսացնելու համար զենքով հարցեր լուծողին: Իշխանությունները կզան ու կզնան, ահաբեկչության խրախուսումը քաղցկեղի պես կմնա ու կտարածվի, կոչնչացնի մեր ժողովրդի կողմից ստեղծած ամեն ինչ: Մրանից սարսափել է պետք, սա հիմնովին արմատախիլ անել է պետք: Տիկնա՛յք եւ պարոնա՛յք, սիրելի՛ երիտասարդներ, ահաբեկչությունը խրախուսելը մահացու մեղք է: Որեւէ պատճառով, անգամ ամենահիմնավոր պատճառով, հեռու՛ մնացեք այդ սարսափից: Ո՛չ ասեք ահաբեկչությանը եւ դրա ցանկացած դրսևորմանը, որտեղ էլ որ այն տեղի ունենա: Ո՛չ ասե՛ք մեր երկրի, մեր ժողովրդի, մեր սերունդների եւ մեր հայրենիքի համար: Ո՛չ ասե՛ք այդ քաղցկեղին: Հեռու՛ վանե՛ք մեզմից: Շատ հեռու:

Հարգելի՛ բարեկամներ, Ես շնորհակալ եմ մեր լրագրողներին իրենց անմնացորդ աշխատանքի համար եւ անարյուն հանգուցալուծմանը նպաստելու համար: Ես նաեւ ներողություն եմ խնդրում մեր լրագրողներից հուլիսի 29-ի՝ լույս 30-ի գիշերվա դեպքերի համար. սա մեր ամենահավանական բացթողումն էր այս օրերի ընթացքում: Բոլոր հետևություններն, անուշտ, արվելու են: Ձեր ներողամտությունը հայցելով՝ միայն լրագրողներին, բայց ոչ իրավապահներին, խնդրում եմ մոռանալ այդ դեպքերի մասին, քանի որ իրոք վստահ եմ, որ այլևս նման բան չի կրկնվելու, եւ նաեւ ուզում եմ, որ այդ դեպքերն այսուհետ անգամ ենթագիտակցական որեւէ ազդեցություն չունենան ձեր ազատ գործելաոճի վրա:

Հիմա հնչող քննադատության մասին: Խոսքս, իհարկե, ընդգծված ահաբեկչական ձեռագրով գործող, իրենց մտադրությունները հայրենասիրական եւ սոցիալական արդարության կոչերի ներքո թաքցնող զինյալների մասին չէ, խոսքս մեր ժողովրդի մի հատվածի մտահոգությունների մասին է: Այո՛, Հայաստանի իշխանությունները կատարյալ չեն: Այո՛, Հայաստանում շատ թերի հարցեր եւ բարդ խնդիրներ կան: Մեր նպատակը դրանց լուծումներն արագացնելն է:

Այս փուլում մեր նպատակը նաեւ ազգային համաձայնության իշխանություն ձեւավորելն է, որտեղ լուծումների իրականացումը կլինի լայն համաձայնության դաշտի պատասխանատվության ներքո: Սահմանադրական բարեփոխումները հենց դրա մասին էին, հենց այդպիսի իշխանություն ձեւավորելու հիմքն է դրվել այդ բարեփոխումներով: Ազգային համաձայնության կառավարությունն իրեն չգտած ինչ-որ մեկի՝ դեպի աթոռ սողոսկելու մասին չէ, այն քաղաքական պատասխանատվության հնարավորինս լայն տեղաբաշխման եւ կիսելու մասին է, ինչի ինստիտուցիոնալ ողջ հենքը մենք արդեն ապահովել ենք: Վստահաբար պնդում եմ, որ ընդամենը ամիսներ անց մենք ունենալու ենք հենց այդպիսի կառավարություն, հենց այդպիսի իշխանություն:

Մենք այդ ճանապարհով ենք գնում, եւ այդ ճանապարհը քաղաքական ուժերի, քաղաքական գործիչների դերակատարման մասին է: Կրկնում եմ քաղաքական գործիչների, այլ ոչ թե զենքով ահաբեկչության գնացողների եւ նրանց սատարողների: Փա՛ռք Աստծո, պետություն եւ երկիր կառուցելու արժեհամակարգը կիսող քաղաքական գործիչների պակաս, ինչպես տեսաք, մենք այսօր չունենք: Այդպիսիք շատ են քաղաքական բոլոր հոսանքներում: Եվ դա մեր երկրի հարստությունն է:

Եվս մի խնդրի անդրադառնամ, որի մասին բազմաթիվ անգամներ մենք խոսել ենք: Խոսքս Ղարաբաղի հիմնահարցի եւ, այսպես ասած, «ձողեր հանձնելու» մասին է: Արդեն թերեւս անհաշվելի են

մեր հստակ դիրքորոշման հրապարակային հնչեցումներն անձամբ իմ կողմից: Կրկնում եմ՝ Լեռնային Ղարաբաղի խնդրի կարգավորման ճանապարհին միակողմանի զիջումներ չեն լինելու: Բացառվում է: Լեռնային Ղարաբաղը երբեք չի լինելու Ադրբեջանի կազմում: Բացառվում է: Մեկ անգամ եւս կրկնում եմ՝ բացառվում է: Ես իմ ողջ գիտակցական կյանքը իրականում նվիրել եմ այս խնդրին: Եվ իմ ժողովրդի համար ընդունելի տարբերակի հասնելու համար միշտ պատրաստ եմ եղել գոհաբերել ոչ միայն ցանկացած պաշտոն, այլեւ կյանքս: Դա այդպես է եղել երեկ, այդպես է այսօր, այդպես է լինելու վաղը:

Հարգելի՛ գործընկերներ, Ամփոփելով շեշտեմ՝ մենք, որպես պետություն, այս փորձությունից դուրս եկանք ավելի ուժեղացած: Եվ մենք այսօր շատ ավելի նպատակադրված ենք երկրում դրական փոփոխությունների մեր օրակարգը բազմապատիկ արագությամբ առաջ տանելու համար: Իսկ այդ մասին մենք շատ ավելի մանրամասն կխոսենք առաջիկայում: Շնորհակալ եմ ուշադրության համար:

## Կոչ ենք անում հնարավորինս մեղմ գտնվել «Մասնա ծռերին» պատժելու գործում. Հանրային խորհուրդ

01.08.2016



Հանրային խորհուրդը հանդես է եկել հայտարարությամբ, որտեղ կոչ է արել մեղմ գտնվել «Մասնա ծռերի» նկատմամբ: Հայտարարությունում, մասնավորապես, ասվում է.

«Վերջին շաբաթներին Երևանում տեղի ունեցած իրադարձությունները լուրջ մարտահրավեր ու փորձություն էին մեր երկրի համար, որի ընթացքում մեր հասարակությունը ենթարկվեց ֆիզիկական ու հոգեբանական լուրջ ցնցումների: Ցավոք, չհաջողվեց խուսափել նաև զոհերից ու վիրավորներից, ինչի կապակցությամբ մեր խորին ցավակցությունն ենք հայտնում զոհված զնդապետ Արթուր Վանոյանի և ենթասպա Յուրա Տեպանոյանի հարազատներին և շուտափույթ ապաքինում մաղթում այս իրադարձությունների հետևանքով վիրավորված բոլոր անձանց: Ակնկալում ենք սպանությունների անաչառ հետաքննություն և գործի ամբողջական բացահայտում:

Դատապարտելով զենքի ուժով հարցեր բարձրացնելու և փոփոխություններ պահանջելու ճանապարհը՝ միաժամանակ գտնում ենք, որ բոլորս պարտավոր ենք հաշվի նստել այդ իրողության հետ, քանի որ դա արտացոլում է մեր երկրում առկա խորքային լուրջ խնդիրները: Դատապարտում ենք նաև հուլիսի 29-ին ցույցի մասնակիցների նկատմամբ ոստիկանության առանձին

ծառայողների և կասկածելի քաղաքացիական անձանց կողմից կիրառված անհամաչափ ուժը, լրագրողների մասնագիտական գործունեության խոչընդոտումը, մարդու իրավունքների կոպիտ խախտումները, քաղաքացիներին անհիմն բերման ենթարկելու բազմաթիվ դեպքերն ու ձերբակալությունները, որոնք լրջորեն հարված հասցրեցին մեր երկրի ժողովրդավարական արժեքներին ու միջազգային հեղինակությանը: Գտնում ենք, որ իշխանությունները պետք է հետամուտ լինեն և բացահայտեն տեղի ունեցածը՝ մեղավորներին պատժելով օրենքի ողջ խստությամբ:

Միաժամանակ դատապարտում ենք մի խումբ անձանց արկածախնդիր որոշումները, որոնց սադրիչ գործողությունների հետևանքով ցույցի մասնակիցները հայտնվեցին վտանգավոր ու անկանխատեսելի իրավիճակում:

Կարծում ենք, որ և՛ իշխանությունները, և՛ հասարակությունը պետք է լրջորեն մտորեն վերջին օրերին ծավալված իրադարձությունների մասին: Ակնկալում ենք, որ իշխանությունները հետևություններ կանեն, հանգամանորեն կվերլուծեն տեղի ունեցածը, համարժեք գնահատականներ կտան և համապատասխան քայլեր կձեռնարկեն՝ մեր երկրի առջև դնելով որակապես նոր պետություն ունենալու տեսլական և սկսելով լուրջ բարեփոխումներ երկրի ներսում: Ինչպես շեշտել էինք ա.թ. հուլիսի 19-ին կայացած ՀԽ արտահերթ նիստում, իրադրության կարգավորումից հետո պետք է ապահովվի լայն երկխոսություն իշխանությունների և հասարակության տարբեր շերտերի միջև Հայաստանի առջև ծառայած խնդիրների՝ հատկապես Ղարաբաղյան հիմնահարցի վերաբերյալ: Իշխանությունները պետք է հնարավորինս բաց և թափանցիկ ձևով հասարակության հետ քննարկեն Ղարաբաղյան հիմնահարցի կարգավորմանն ուղղված քայլերն ու հեռանկարները՝ ապահովելով երկխոսության լայն հարթակ և հասարակության համար չթողնելով մուրթ կետեր ու կասկածներ:

Դրական ենք գնահատում զինյալ խմբի գործողությունների նկատմամբ իշխանությունների զսպվածությունը, որը կանխեց խնդրի հանգուցալուծման առավել ծայրահեղ հետևանքները:

Դրական ենք համարում նաև զինյալ խմբի որոշումը՝ վայր դնել զենքը հետագա առճակատումից խուսափելու համար: Միաժամանակ, հորդորում ենք խմբավորման աջակիցներին իրենց պայքարը տեղափոխել առավել քաղաքակիրթ դաշտ՝ համախմբվելով գաղափարական և հստակ տեսլական ունեցող ծրագրային պայքարի շուրջ:

Հաշվի առնելով զինյալ խմբի անդամների կողմից առանց արյունահեղության հանձնվելը՝ պատկան մարմիններին կոչ ենք անում հնարավորինս մեղմ գտնվել պատժի սահմանման գործում՝ առանձին քննելով տեղի ունեցած սպանություններն ու մեղավորների նկատմամբ համապատասխան պատժի սահմանումը»:

## **Շավարշ Քոչարյանը չժխտեց, որ «Սասնա ծռերի» գործողություններն ազդել են ԼՂ հարցի վրա. «Դժվարանում են ասել»**

04.08.2016

ԼՂ բանակցություններն ընթանում են, թեև Ադրբեջանը բանակցային սեղանի շուրջ խոսում է մի բան, իսկ հետագայում բոլորովին այլ բաներ է ներկայացնում: Այս մասին, այսօր՝ օգոստոսի 4-ին, լրագրողների հետ

հանդիպման ժամանակ նշել է ԱԳ փոխնախարար Շավարշ Քոչարյանը՝ հավելելով, որ Ադրբեջանի կողմից արդեն քայլեր են կատարվել այդ բանակցությունների արդյունքները վիժեցնելու ուղղությամբ:



Հարցին, թե օգոստոսի 10-ին Ռուսաստանում կայանալիք Սարգսյան-Պուտին հանդիպումից հետո դարաբաղյան հարցում ակնկալում են որևէ փոփոխություն Շավարշ Քոչարյանը պատասխանեց. «Այնտեղ ամեն ինչ շատ հստակ է: Կա երկու հարթություն, մի հարթությունը վերաբերում է նրան, ինչ արձանագրվեց Վիենայում, դրանից հետո Սանկտ Պետերբուրգում: Այսինքն՝ խոսքը վստահության մթնոլորտի ստեղծման մասին է, որն առաջարկել են համանախագահող երկրները: Իսկ դա, առաջին հերթին, նշանակում է՝ շփման գծում չպետք է լինեն սադրանքներ, կրակոցներ եւ այլն: Երկրորդ հարթությունը բուն բանակցային գործընթացն է, որը կարող է առաջ մղվել այն դեպքում, երբ այս բոլոր հարցերը լուծվեն»: «Սասնա ծռերի» գործողություններն ի՞նչ ազդեցություն կարող են ունենալ ԼՂ բանակցությունների վրա, այս հարցին էլ Քոչարյանն, ըստ էության, չժխտեց, որ «Սասնա ծռերի» գործողություններն ինչ-որ կերպ ազդեցություն են ունենալու Ղարաբաղյան հարցում, նշելով. «Պահանջներից մեկը, որը նրանք բարձրացրել էին, նաեւ կապված էր ղարաբաղյան հիմնախնդրի հետ, դա կա: Թե ինչպես դա կազդի, դժվարանում են ասել»: Ճշտող հարցին, թե ազդել է ինչ-որ կերպ, նա նորից կրկնեց. «Դժվարանում են ասել»: Արդյոք հայկական կողմը ճնշումների ենթարկվում է Ռուսաստանի կամ այլ պետության կողմից, փոխարտգործնախարարը պատասխանեց. «Ցանկացած բանակցային գործընթացում միջնորդները փորձում են կողմերին բերել ընդհանուր հայտարարի, իսկ դա նշանակում է, որ կողմերից պահանջում են որոշակի զիջումներ, որպեսզի մոտեցումները մերձենան: Սա շատ բնական է ցանկացած բանակցային գործընթացում, բայց դա ճնշում չէ, միջնորդություն է»:

## **Կոմկուս. Երկրում լուրջ բարեփոխումներ անելու ժամանակն է**

04.08.2016

Անընդունելի է Հայաստանում զինված ապստամբության միջոցով իշխանափոխություն անելը: Այս մասին օգոստոսի 4-ին մամուլի ասուլիսի ժամանակ հայտարարել է Հայաստանի Կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեի առաջին քարտուղար Տաճատ Սարգսյանը՝ անդրադանալով Ոստիկանության ՊՊԾ գնդի գրավման եւ դրան հաջորդած իրադարձություններին: Նրա խոսքով՝ արտագաղթը, աղքատությունը, օրենքների չգործելը, սոցիալական անարդարությունը, իհարկե, բոլորի,



այդ թվում՝ զինված խմբի անդամների դժգոհությունն են առաջացրել:



«Հանրապետությունում իրոք լուրջ խնդիրներ կան: Այդ մասին ինքը՝ նախագահն էլ հայտարարեց հասարակության սեկտորի ներկայացուցիչների հետ հանդիպմանը»,- նշել է Մարգարյանը:

«Բնականաբար, բոլորս էլ ցանկանում էինք, որ իրավիճակը խաղաղ ճանապարհով լուծվեր, եւ, բարեբախտաբար, այդպես էլ եղավ: Մենք ինչպես հանրապետության իրավապահ մարմիններին, այնպես էլ իշխանություններին կոչ ենք անում լռորեն վերաբերվել ստեղծված իրավիճակին եւ միջոցառումներ ձեռնարկել համանման իրադարձությունների կրկնողություն թույլ չտալու համար»,- ասել է կոմկուսի ԿԿ առաջին քարտուղարը՝ հավելելով, որ լուրջ բարեփոխումների ժամանակն է:

## Արևմտյան Հայաստան

### Արշեհիրի հայկական եկեղեցին եւ պատմական բաղնիքն ավերակ վիճակում են

06.07.2016



Թուրքիայում ավերված վիճակում են գտնվում Արշեհիրի հայկական եկեղեցին եւ Գյավուր անունը կրող պատմական բաղնիքը: Այդ մասին, ըստ [Akunq.net](http://Akunq.net)-ի, հաղորդում են թուրքական լրատվամիջոցները:

Ըստ այդմ, Գյավուր անվամբ բաղնիքն արդեն քանդվելու վտանգի տակ է, իսկ պատմական եկեղեցու պատերին մեծ ճաքեր են առաջացել: Սույն եկեղեցու վերականգնման ուղղությամբ տարիներ շարունակ ոչ մի զարգացում չի արձանագրվել, եկեղեցի, որի սեփականության վկայականը պատկանում է Արշեհիրի քաղաքապետարանին:

Արշեհիրում 19-րդ դարում տեղի հայկական համայնքի կողմից կառուցված եւ հետագայում ժամանակ առ ժամանակ մշակութային միջոցառումների նպատակով օգտագործված այս եկեղեցին այդպես էլ չի վերականգնվել թուրքական

իշխանությունների կողմից՝ չնայած բազմիցս տրված խոստումներին:

Ինչպես ընդգծվում է հրատարակման մեջ, պատմական եկեղեցին եւ Գյավուր կոչվող բաղնիքն անհետ կորչելու վտանգի տակ են:

### Ստամբուլում հրատարակվել է համշենահայերի «Գոր» ամսագրի 4-րդ համարը 04.08.2016



Ստամբուլում հրատարակվել է համշենահայերի «Գոր» ամսագրի 4-րդ համարը: Այդ մասին հաղորդում է [Akunq.net](http://Akunq.net)-ը:

Աղբյուրի փոխանցմամբ՝ ինչպես հանդեսի նախորդ, այնպես էլ սույն համարում թուրքերենով եւ հայոց լեզվի՝ Համշենի բարբառով հրատարակվել են համշենահայերի պատմության, լեզվի եւ մշակույթի մասին նյութեր:

Հիշեցնենք, որ 2014 թ. սեպտեմբերից տպագրվող «Գոր» ամսագիրը լույս է տեսնում տարեկան 2 անգամ՝ վեցամսյա պարբերականությամբ: Այն բաղկացած է երեք հիմնական բաժիններից.

1. Գիտական բաժին, որում ներկայացվում է Համշենի եւ համշենահայության պատմությունը:
2. Լեզվի բաժին, որի նպատակն է Համշենի բարբառին չտիրապետող համշենցիներին սովորեցնել մայրենի բարբառը:
3. Բանահյուսության բաժին, որտեղ հայոց լեզվի Համշենի բարբառով ներկայացվում է Համշենի բանահյուսությունը:

### Թուրքիայում հայկական եկեղեցու բակում բացվել է երկրում առաջին արձանների թանգարանը

12.07.2016



Թուրքիայի Էսքիշեհիր նահանգի Միվրիհիսարի շրջանում գտնվող հայկական եկեղեցու բակում բացվել է Թուրքիայի առաջին արձանների թանգարանը:

Թուրքական Habersol կայքի փոխանցմամբ՝ Միվրիհիսարի հայկական եկեղեցու բակում տեղադրվել են Օսմանյան կայսրության ու Թուրքիայի հայտնի գործիչների արձանները, որոնց թվում են Հայաստանի կողմից «Գրիգոր Նարեկացի» հուշամեդալ ստացած Յաշար Քեմալը, միջնադարյան հայտնի թյուրք գրող Յունուս Էմրեն, Թուրքիայի հանրապետության հիմնադիր Աթաթուրքը եւ այլք։ Նշենք, որ Միվրիհիսարի հայկական եկեղեցու բակում արձանների թանգարան ստեղծելու գաղափարը ծագել է 2011 թվականին, Թուրքիայի այն ժամանակվա Մշակույթի նախարար Էրթուրուլ Գյունայի աջակցությամբ։

## Թուրքիայում հայտնաբերվել է Աբգար թագավորի ընտանիքի դամբարանը

00:04, 15.07.2016



Թուրքիայի տարածքում գտնվող Ուրֆա քաղաքի ամրոցի շուրջը տեղի ունեցող պեղումների ընթացքում ժայռափոր դամբարաններ ու խճանկարներ են հայտնաբերվել։

Թուրքական Karar.com կայքի փոխանցմամբ՝ Ուրֆայի քաղաքապետարանի կողմից Ուրֆայի ամրոցի շուրջ իրականացվող պեղումների ընթացքում հնագետները ենթադրում են, որ հայտնաբերել են Աբգար թագավորի ընտանիքի դամբարանը։ Հնագետները նշել են, թե իրենց գտած դամբարանում թաղված են Աբգար թագավորի ընտանիքի 10 անդամներ։

Ուրֆայի ամրոցի ժայռափոր դամբարաններում պեղումներ իրականացնող հնագետներն արդեն մաքրել ու այցելությունների համար պատրաստել են բազմաթիվ դամբարաններ։

Նշենք, որ ըստ Մովսես Խորենացու Օսրոյենեի (Եղեսիա) թագավոր Աբգարը 1-ին դարի առաջին քրիստոնյա թագավորն է։

Ըստ ավանդության անբուժելի հիվանդ Աբգար թագավորը նամակ էր գրել Քրիստոսին՝ խնդրելով գալ իր քաղաք, բնակվել եւ բժշկել իրեն։ Քրիստոսը սուրհանդակի հետ Աբգար թագավորին է ուղարկում Քրիստոսի անձեռակերտ սրբապատկերը։ Քրիստոսի համբարձումից հետո Մուրբ Թադեոս առաքյալն է մեկնում Եղեսիա եւ բժշկում Աբգարին ու մյուս բոլոր հիվանդներին։



## Անին ընդգրկվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի մշակութային ժառանգության ցանկում

15.07.2016



Միջնադարյան Հայաստանի մայրաքաղաք Անին ընդգրկվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի մշակութային ժառանգության ցանկում։ Այս մասին իր ֆեյսբուքյան էջում գրել է ՀՀ արտաքին գործերի նախարարի մամուլի խոսնակ Տիգրան Բալայանը։

«Բագրատունյաց Հայաստանի մայրաքաղաքը՝ Անին, որը համարվում է «1000 եւ 1 եկեղեցիների քաղաք», ընդգրկվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի մշակութային արժեքների ցանկում»,- գրել է Տիգրան Բալայանը։

## «Ակոս»-ի խմբագիրն առաջարկել է Մուշ նահանգը Տարոն անվանակոչել

04.08.2016



Թուրքիայի հարավ-արևելյան քրդաբնակ երկու նոր նահանգների անվանափոխման արձագանքել է Ստամբուլի հայկական «Ակոս»-ի գլխավոր խմբագիրը Եթվարդ Դանգիկյանը:

«Ակոս»-ի գլխավոր խմբագիրը Twitter-ի իր էջում գրել է. «Թող Մուշն էլ որպես Տարոն անվանափոխեն»:

Նշենք, որ թուրքական իշխանությունները որոշել են քրդաբնակ Հաքարի եւ Շրնաք նահանգները վերանվանեն Նոյ եւ Ջուլամերիկ, իսկ նահանգային կենտրոններ դարձնել Ջիզրե ու Յուսեբոլա քաղաքները:

## Միյուռք

### Ջավախքում սպանված հայ ընտանիքի անդամների դիերը մասամբ այրված են եղել

11.07.2016

Ջավախքի Ախալքալաքի շրջանի Վաչիան գյուղում հուլիսի 10-ին սեփական տան մեջ սպանված հայտնաբերված հայ ընտանիքի չորս անդամների դիերը մասամբ այրված են եղել: Գյուղացիների խոսքով հանցագործը՝ 37-ամյա Օֆելյային եւ նրա երեք երեխաներին սպանելուց հետո, փորձել է այրել՝ հետքերը թաքցնելու համար:

NEWS.am-ի հետ զրույցում Վաչիանի բնակիչներից Գուրգենը նշեց, որ Քաչոտյանները նորմալ եկամուտներով ապրող ընտանիք էին, զբաղվում էին գյուղատնտեսությամբ, թշնամիներ չունեին:

Ընտանիքին սպանելու վարկածներից մեկն այն է, որ հանցագործն իմացել է, որ տան տղամարդը Ռուսաստանի Դաշնությունում է եւ գողության նպատակով մտել է տուն եւ սպանել նրանց:

Ավելի վաղ տեղեկացվել էր, որ Ջավախքի Ախալքալաքի շրջանի Վաչիան գյուղում Քաչոտյանների ընտանիքի 4 անդամներին՝ մորը եւ 7, 16, 18 տարեկան երեխաներին, հուլիսի 10-ին, հարեւանները հայտնաբերել են սպանված:

Նախնական տեղեկություններով, հանցագործը մորն ու աղջիկներին սպանել է բույժ գործիքի հարվածներով, իսկ տղային խեղդամահ է արել:

Նշենք, որ Վաչիանը Ջավախքի Ախալքալաքի շրջանի հայաբնակ գյուղերից է, Վաչիանի կողքով է անցնում նորարաց թուրք-վրացական միջպետական սահմանը:

Մահացածներին զանազան պահին տան իրերը՝ սեղան ու աթոռները հատակին ընկած են եղել, իսկ տունը ծխից մրտսված:

Նշենք, որ ընտանիքի հայրը՝ Վաղինակ Քաչոտյանը, Ռուսաստանի Դաշնությունում է՝ արտագնա աշխատանքի:

Թուրքիայում հայ պատգամավորը հայտնել է հեղաշրջման փորձից հետո փոքրամասնությունների խնդիրների մասին  
5.08.2016



Ստամբուլից Ժողովրդա-հանրապետական կուսակցության ցուցակով ընտրված հայ կին պատգամավոր Սելինա Դողանը Թուրքիայի Ազգային մեծ ժողովում բարձրացրել է հեղաշրջման փորձից հետո Թուրքիայում առաջացած քաղաքական մթնոլորտում փոքրամասնությունների անապահով զգալու հարցը: Այդ մասին հաղորդում է Akunq.net-ը:

Աղբյուրի համաձայն՝ Թուրքիայի խորհրդարանում եզդիների խնդիրների ուսումնասիրության վերաբերյալ առաջարկի քննարկումների շրջանակներում Սելինա Դողանը շեշտել է Թուրքիայում բոլոր փոքրամասնությունների խնդիրների անդրադառնալու անհրաժեշտության մասին:

Հայ կին պատգամավորը նաեւ նշել է, թե երբ այս երկրում հետզհետե նվազող որևէ փոքրամասնության խնդիր է բարձրաձայնվում, անմիջապես բարձրացվում են «Հո՛ղ են ուզում», «Փոխհատուցո՞ւմ են պահանջում» տիպի հարցեր:

Սելինա Դողանը հայտնել է, թե հասել է ժամանակը, որ եզդիների հետ մեկտեղ քննարկվեն նաև Թուրքիայում ապրող մյուս փոքրամասնությունների հարցերը, և ընդգծել, որ վերջիններս այստեղ աստեղծության թիրախ են դարձել: Դողանը, ուշադրություն հրավիրելով այն հանգամանքի վրա, որ դրան արգելք չիներու համար փոփոխություններ են անհրաժեշտ ոչ միայն օրենքներում, այլ նաև՝ թուրք հասարակության մտայնության մեջ, ասել է. «Նախ եւ առաջ, մեր ելույթների նկատմամբ պետք է մենք՝ քաղաքական գործիչներս, ուշադիր լինենք: Այն դեպքում, երբ իշխանավորներն ասում են՝ «Կներեք արտահայտությանս համար՝ հայ», պատկերացրեք, թե ինչ կասի կամ կմտածի հասցեատեր զանգվածը...»:

Նշենք, որ Թուրքիայի խորհրդարանում եզդիների խնդիրների ուսումնասիրության վերաբերյալ առաջարկը մերժվել է «Արդարություն և զարգացում», ինչպես նաև՝ «Ազգայնական շարժում» կուսակցության պատգամավորների պատճառով: Առաջարկին կողմ են քվեարկել միայն «Ժողովրդահանրապետական» եւ «Ժողովուրդների դեմոկրատական» կուսակցության պատգամավորները:

# Միջազգային

## Թուրքիայում հեղաշրջման փորձի զոհ է դարձել 290 մարդ

17.07.2016



Թուրքիայում պետական հեղաշրջման փորձի զոհ է դարձել 290 մարդ: Երկրի ԱԳՆ տվյալներով՝ զոհերի թվում 190 քաղաքացի է ավելի քան 100 խռովարար կա: Ավելի քան 1400 մարդ վիրավորվել է: Նշվում է, որ իշխանությունները շուրջ 6000 մարդու են ձերբակալել:

### Ինչո՞ւ Թուրքիայում հեղաշրջումը ձախողվեց. Süddeutsche Zeitung

11:06, 17.07.2016

Թուրքիայում զինվորականները բնակչության շրջանում այնպիսի բարձր հեղինակություն են վայելում, ինչպիսին չունեն ՆԱՏՕ-ի անդամ մյուս երկրների զինված ուժերը: Մական այն միաձայնությունն ու եռանդը, որով Թուրքիայի հասարակությունը այս անգամ ռազմական հեղաշրջման դեմ դուրս եկավ, գարմանայի էր: Այս մասին գրում է գերմանական Süddeutsche Zeitung պարբերականը՝ դիտարկելով Թուրքիայում հեղաշրջման փորձի ձախողման պատճառները:

**Զինվորականները.** Պարզվեց, որ հեղաշրջման փորձն աջակցություն չի գտել բոլոր զինվորականների շրջանում: Ընդհակառակը, խռովարարները ռազմաօդային բազայի տարածքում փակել էին Գլխավոր շտաբի պետ Հուլուսի Աքարին, որն Էրդողանի վստահելի անձանցից է: Գեներալների մեծ մասը բացահայտ դեմ դուրս եկավ հեղաշրջմանը: F-16 կործանիչները կրակ բացեցին հեղաշրջման առաջնորդների տանկերի վրա, ռազմական ուղղաթիռ խոցեցին: Շտաբի պետ Աքարը, իրականացրած գործողությունների արդյունքում, ազատ արձակվեց: Նախագահ Էրդողանի և վարչապետ Յըլդըրըմի՝ զինվորականներին ուղղված կոչեր հնչեցին:

**Ընդդիմությունը.** Քրդական «Ժողովուրդների դեմոկրատական կուսակցության», «Ազգայնական շարժման» ներկայացուցիչները, քեմալականները, որոնք իշխող «Արդարություն և զարգացում» կուսակցության հետ ավելի քան 10 տարի բախումների մեջ են, մերժեցին հեղաշրջումը: Քաղաքացիական հասարակության բոլոր կազմակերպությունները, ՀՀ-ները, սոցիալական մեդիայի ներկայացուցիչները Էրդողանին բռնի տապալելու դեմ դուրս եկան: Ոչ մի հեռուստալրագրող կամ թերթի լրագրող,

այսինքն՝ նրանք, ովքեր բոլորից շատ են տուժում Էրդողանի բռնապետական ռեժիմից, չանցավ ապստամբների կողմը: Ընդհակառակը, համացանցում հայտնված տեսանյութում երևում է, թե ինչպես են նրանք համոզում խմբագրությունը գրաված զինվորներին հրաժարվել հեղաշրջման գաղափարից:

**Մզկիթները.** Ստամբուլում և Իզմիրում կեսգիշերից հետո երկար ժամանակ միմյուրեքներից Էրդողանին հավատարիմ մնալու կոչեր էին հնչում: Քաղաքացիները փողոց էին դուրս եկել և զինվորներին ստիպում լքել ռազմավարական կարենոր կետերը, որոնք նրանց հսկողության տակ էին: Շատ դեպքերում մարդիկ ինքնադատաստան էին տեսնում խռովարարների հետ:

Էրդողանն իր ելույթներից մեկի ժամանակ հեղաշրջումն Աստծո պարզեւ անվանեց: Հիմա նա հնարավորություն ունի մաքրել զինվորական շրջանակները՝ Գյուլենական շարժման ազդեցությունը կանգնեցնելու համար: Էրդողանը ժամանակ չի կորցնում. Թուրքիայում այս պահին պաշտոնանկ է արվել 2.7 հազար դատական համակարգի աշխատող, աշխատանքից ազատվել է 5 գեներալ և 28 գեղապետ, ձերբակալվել շուրջ 3 հազար զինվորական: Արյունոտ գիշերվա հաջորդ առավոտյան պարզ դարձավ. Թուրքիային մոռալ ժամանակներ են սպասվում, եզրափակում է թերթը:

### Մեծ Բրիտանիայի ԱԳ քարտուղարի թուրք նախապապ Ալի Քեմալը, դատապարտել էր Հայոց ցեղասպանությունը

12:05, 19.07.2016



Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նորանշանակ քարտուղար Բորիս Ջոնսոնի թուրք նախապապը՝ Ալի Քեմալը, ընդդիմացել էր Հայոց ցեղասպանությունն իրագործած ղեկավարներին և 1922թ. դաժանաբար սպանվել ռասիստական ուժերի կողմից: Այս մասին հաղորդագրություն է տարածել Ամերիկայի հայկական համագումարը:

Հաղորդագրությունում, մասնավորապես, ասվում է. «Մեծ Բրիտանիայի նորանշանակ արտաքին գործերի քարտուղար Բորիս Ջոնսոնը հայտնի է որպես Լոնդոնի քաղաքապետ, վառ անհատականություն և հունիսի հանրաքվեի Brexit քարոզարշավի առաջնորդ: Ավելի քիչ տեղեկություններ են հայտնի նրա անձնական կենսագրությունից, որում արտացոլվում է բրիտանացու բազմաշերտ էթնիկ ժառանգության խառնուրդ, այդ թվում՝ թուրք նախահոր՝ Ալի Քեմալի: Վերջինս իրապես աչքի է ընկել իբրև ամենահամարձակ ձայներից մեկը, ով

ընդդիմացավ 1915-1923թթ. Հայոց ցեղասպանությունն իրագործած ղեկավարներին եւ 1922թ. դաժանաբար սպանվեց ռասիստական ուժերի կողմից:

Որպես լրագրող իր կյանքի համար անհանգստանալով՝ 1909թ. Ալի Քեմալը փախավ Անգլիա՝ տարագրության մեջ լինելով կնոջ՝ Ուինիֆրեդի եւ դստեր հետ: Սակայն որդու ծննդից կարճ ժամանակ անց նրա կինը մահացավ հետծննդային տենդից Դորսեթի կոմսության Բորնուլթ քաղաքում: Մի քանի տարի անց 1912թ. նա վերադարձել էր Օսմանյան կայսրություն եւ կրկին ամուսնացել մի օսմանցի փաշայի դստեր՝ Սաբիհա Հանիմի հետ: Ալի Քեմալի առաջին կնոջից ունեցած երեխաները, որոնք դեռ ապրում էին Անգլիայում, ընդունել էին իրենց մայրական տատի օրիորդական ազգանունը՝ Չոնսոն: Ալի Քեմալի որդին, Բորիս Չոնսոնի պապը, ով ի սկզբանե Օսման անունն էր կրում, հետագայում սկսեց օգտագործել իր երկրորդ անունը՝ Վիֆրիդ:

Չոնսոնի նախապապ Ալի Քեմալն Օսմանյան պետության բնաջնջողական քաղաքականության առավել նշանավոր թուրք քննադատն էր: Ալի Քեմալը լրագրող եւ հասարակական բանախոս էր, ով նույնիսկ մի կարճ ժամանակահատված 1919թ. հետպատերազմյան Օսմանյան կառավարության նախարարի պաշտոնում էր եղել:

Դոկտոր Վահագն Դադրյանը, ում բազմաթիվ հրապարակումներ բացահայտել են Հայոց ցեղասպանության վերաբերյալ գերմանական եւ օսմանյան ապացույցների լայնածավալությունը, ներկայացրել էր երիտթուրքական ժամանակաշրջանի քաղաքականության մեջ Ալի Քեմալի դերակատարության ազդեցիկ նկարագրությունը: Ալի Քեմալն ազատական գաղափարների կողմնակից էր, որոնք ճնշվում էին թե Երիտթուրքական ժայռահեղականների, թե Մուսթաֆա Քեմալի գլխավորած Թուրք ազգայնականների կողմից:

Ալի Քեմալն, առավել պոռթկուն քան որեւէ այլ թուրք, դատապարտել է հայերի դեմ իրականացված ցեղասպանությունը եւ սուր քննադատության ենթարկել իթթիհադական ցեղապետերին՝ որպես այդ հանցագործության հեղինակների, անողորմաբար պահանջելով նրանց հետապնդումը եւ պատիժը: Այս վերաբերմունքին համապատասխան՝ նա պայքար էր մղում նաեւ Քեմալական շարժման դեմ, որն այն ժամանակ սատարում էին տապալված Իթթիհադի գաղտնի պարտիզանները: Նրան առեւանգեցին Ստամբուլում Թոքթայան հյուրանոցի վարսավիրանոցից եւ մոտորանավակով տարան քաղաքի Ասիական մասը, ուղեւորվելով դեպի Անկարա՝ դավաճանության համար մեղադրանքով դատի: Սակայն Իսմիթի մոտ խումբը կանգնեցվեց Մուսթաֆա Քեմալի հետ միավորված այդ ժամանակվա Առաջին գործի հրամատարի՝ գեներալ Նուրեդինի կողմից: Ալի Քեմալը գեներալի հրահրմամբ Լինչի դատաստանի ենթարկվեց ամբոխի կողմից: Նրա գլուխը ջախջախված էր մահակներով, եւ նրան քարկոծելով սպանեցին: Նուրեդին անձամբ այսպես է նկարագրել տեղի ունեցածը Ռիզա Նուրին (ով Իսմեթի [Ինոնյու] հետ Լոզան էր ուղեւորվում խաղաղության բանակցություններ վարելու Դաշնակից պետությունների հետ): ՏՆրա արնաշաղախ մարմինն այնուհետ կախաղան բարձրացվեց եւ տապանագիր կախվեց նրա կրծքավանդակին, որի վրա գրված էր «Արթին Քեմալ»:

Չոհին հանպատրաստից հայի անուն շնորհելով՝ գտարյուն թուրքին մեծագույն արհամարհանքի ենթարկեցին՝ որպես անարգված ազգի անդամ:

Պատմականորեն անարգվելով Թուրքիայում իբրեւ դավաճան՝ փորձեր են արվել վերանայելու Ալի Քեմալի ժառանգությունը՝ Բորիս Չոնսոնի ճանաչվածության բարձրացման հետ մեկտեղ: Նա վերագնահատվեց իբրեւ այլախոս եւ փոքրամասնությունների իրավունքների պաշտպան: 2004թ. Թուրք լրագրողների ասոցիացիան Ալի Քեմալի անունը նշել էր Թուրքիայի Հանրապետությունում նահատակված լրագրողների շարքում: Այդ ցուցակը շուտով համալրեց Հրանտ Դինքը, ով սպանվեց 2007թ. Հայոց ցեղասպանության հետ հաշտվելու թուրքերի ուղղված կոչերի համար, եւ ում սպանության հետաքննությունները դեռեւս ավարտված չեն պաշտոնական հստակ հանցակցության պատճառով: 2011թ. Թուրք լրագրողների ասոցիացիան 1915թ. սպանված 10 հայ լրագրողների անուններ ավելացրեց, որոնց թվում էր նաեւ հայտնի գրող եւ իրավաբան Գրիգոր Չոհրապը, ով սպանության պահին Օսմանյան խորհրդարանի պատգամավոր էր:

Հայերը եւ հեղինակավոր պատմաբանները Քեմալ Ալիի հիշում են որպես բացառիկ անձնավորության, ով իրապես արդարամիտ ու քաջարի թուրք անվանի մարդկանցից մեկն էր Հայոց ցեղասպանության ժամանակաշրջանում եւ դրանից հետո: Կապը Մեծ Բրիտանիայի նոր արտաքին գործերի քարտուղար Բորիս Չոնսոնի հետ ուշագրավ է:

## Իրանը աշնանը կգործարկի Նախիջեւանի հետ երկաթգծային հաղորդակցությունը

01.08.2016



Իրանական Մեշհեդ քաղաքի ու Նախիջեւանի միջեւ երկաթգծային ճանապարհը շահագործման է հանձնվելու այս տարվա աշնանը: Այս մասին հայտարարել է Ադրբեջանում Իրանի դեսպան Մոհսոն Պակայինը, հայտնում է «Թեքնոլոգի»:

Դեսպանը նշել է, որ երկաթգծային հաղորդակցության բացումը կնպաստի երկու երկրների միջեւ զբոսաշրջության զարգացմանը: Նրա խոսքով, տոմսերը վաճառվելու են թե Իրանում թե Ադրբեջանում: Տոմսերի գների մասին տեղեկություններ դեռ չկան:

Դեսպանը պատմել է Բաքու- Մեշհեդ, Բաքու- Շիրազ նոր ավիաչվերթների գործարկման հետագա ծրագրերի մասին: Նա հույս է հայտնել, որ Մեշհեդ- Բաքու- Շեմհեդ ու Շիրազ- Բաքու- Շիրազ թռիչքները գործարկվելու են գալիք աշնան վերջին:

# Հասարակական

**Պատճառը հասարակական դժգոհությունն է և Հայաստանի իշխանության թուլությունը. Մոդեստ Կոլերով**

*«Առաջին լրատվական»-ի գրուցակիցն է ռուսական «Ռեզնում» լրատվական գործակալության գլխավոր խմբագիր, քաղաքական վերլուծաբան Մոդեստ Կոլերովը:*



Քաղաքագետ Մոդեստ Կոլերովն անդրադարձավ Էրեբունու ՊՊԾ գնդի գրավումից հետո Երևանում ստեղծված քաղաքական ճգնաժամին և դրա խորքային պատճառներին:

Մեկնաբանելով պաշտոնական Մոսկվայի հայտարարությունը, թե Ռուսաստանը աջակցում է Հայաստանի իշխանությունների գործողություններին, Կոլերովը կարծիք հայտնեց, որ Ռուսաստանը մտահոգված է իր գործընկերոջ կայունությամբ:

**– Պարոն Կոլերով, Ձեր կարծիքով ի՞նչը հանգեցրեց այսօրվա ճգնաժամային իրավիճակին Երևանում: Որո՞նք են պատճառները:**

– Այս ճգնաժամի առաջացման պատճառների շարքում տեսնում եմ երկու գլխավորը. առաջին՝ սոցիալական լայնածավալ ճգնաժամ Հայաստանում, որը իշխանությանը ընդդիմացող ցանկացած մեկին տալիս է առաքինի հեղափոխականի և գուցե նույնիսկ Ռոբին Հուդի կերպար: Երկրորդ պատճառը գործող իշխանության թուլությունն է, և հենց իշխանության թուլությունն էր պատճառը, որ ոստիկանական գուևնդը գրավողները ստացան այսպիսի վառ ընդգծված փողոցային աջակցություն և աջակցություն սոցիալական ցանցերում ու զանգվածային լրատվամիջոցներում:

Դա անհնարին կլինեք աշխարհի որևէ այլ քաղաքակիրթ երկրում: Մեր աչքի առջև են վերջին ահաբեկչական գործողությունները, օրինակ, Փարիզում, որտեղ որևէ մեկն անգամ մեկ վայրկյան չհասկացավ, միանգամից պարզեցին ահաբեկիչներին և ոչնչացրեցին: Մեր աչքի առջև է երեկվա ահաբեկչական հարձակումը Մյունխենում: Այնտեղ նույնպես ոստիկանությունը որևէ մեկի թույլտվությունը չհարցրեց, սկսեց փնտրել այդ մարդուն և պատրաստվում է վերացնել նրան: Իսկ Միացյալ Նահանգներում առավել ևս այդպիսի հակաահաբեկչական գործողություններն իրականացվում են ավտոմատ կերպով: Իսկ Հայաստանում դժգոհությունը և իշխանության թուլությունը այնպիսի վիճակի են հասել, որ սովորական քրեական գործը քաղաքական հնչեղություն ստացավ:

**– Այսինքն՝ Դուք զինված խմբի անդամներին ահաբեկիչ չեք համարում:**

– Ոչ, դուք ինձ ճիշտ չհասկացաք, ես նրանց համարում եմ ահաբեկիչներ, նույնիսկ եթե նրանք հայրենասերներ են: Նրանք ահաբեկչություն են իրականացրել, բայց հասարակության դժգոհությունը և իշխանության թույլ լինելը թույլ չեն տալիս նրանց անվանել ահաբեկիչներ: Մա ցույց է տալիս, որ հասարակությունը

պատրաստ չէ նայել իրադարձություններին նույնքան հեշտությամբ, որքան ահաբեկչական գործողություններին նայում են Միացյալ Նահանգներում, Ֆրանսիայում, Գերմանիայում և այլն: Ահաբեկչական գործողությունը Երևանում ոչնչով չի տարբերվում այլ ահաբեկչական գործողություններից: Ահաբեկչությունը ուժի գործադրումն է և վերջնագրի ներկայացումը իշխանությանը՝ քաղաքական նպատակներին հասնելու համար: Վերջ: Եվ արդեն կարևոր չէ, թե ինչ շարժառիթներ ունի այդ գործողությունը:

**– Իսկ ի՞նչ արտաքին քաղաքական պատճառներ կան: Մա ինչ-որ կերպ կապվա՞ծ է Ղարաբաղյան հիմնախնդրի հետ: Որոշ փորձագետներ ասում են, թե այս իրադարձությունները միտված են տապալելու բանակցությունները Ղարաբաղյան հակամարտության կարգավորման շուրջ:**

– Անշուշտ սա թուլացրել է թե՛ Հայաստանի և թե՛ Լեռնային Ղարաբաղի դիրքերը կարգավորման գործընթացում: Ինչպես Ռոգոզինի և Մեդվեդևի հայտնի հայտարարությունները ապրիլյան պատերազմից հետո ոչնչացրին Ռուսաստանի բարոյական կապիտալը Հայաստանում, որը ստեղծվում էր 25 տարի, ճիշտ նույն ձևով այս ահաբեկչական գործողությունը ոչնչացրեց Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի բարոյական կապիտալը կարգավորման գործում: Մա ցույց տվեց իշխանության թուլությունը, և հիմա ցանկացած որ աշխարհում, ով հետևում է այս իրադարձություններին, գիտի, որ եթե Երևանում ինչ-որ որոշում կայացվի, կամ Երևանը համաձայնի հիմնախնդրի ինչ-որ կարգավորման, ապա դա կարող է որևէ նշանակություն չունենալ, որովհետև կհավաքվի մարդկանց խումբ, Աստված մի արասցե, կգրավի Օպերայի շենքը կամ ինչ-որ թանգարան, կինոթատրոն, և վերջ, իշխանությունը կգնա և կսկսի երկխոսել նրանց հետ: Մա վատ է, սա մեծ վնաս է հասցնում պետության դիրքերին ընդհանրապես, ոչ թե իշխող ռեժիմի, կոնկրետ նախագահի, այլ պետության դիրքերին:

**– Ոստիկանական խմբի անդամներն ասում են, որ այդ քայլին գնալու պատճառներից մեկը եղել է այն, որ Հայաստանի ղեկավարությունը պատրաստվում էր տարածքային զիջումներ անել Ադրբեյջանին:**

– Ես չգիտեմ որևէ կոմպետենտ մարդու այն խմբից, որը հարձակվել է ոստիկանական գնդի վրա: Նրանք ակադեմիկոսներ են, նրանք տեղեկություն ունեն. ոչ, նրանք սովորական քաղաքական ակտիվիստներ են: Նրանցից որևէ մեկը չի կարող ասել, թե տարածքները հանձնում են կամ չեն հանձնում:

**– Բայց դա որոշակի տրամադրություն է հասարակության մեջ:**

– Հասարակության տրամադրությունը երբեք չի փնտրում իրական ստատեր, այն մշտապես առաջանում է առանց փաստերի և որևէ փաստի կարիք չունի:

**– Իսկ ի՞նչ կասեք Մոսկվայի, Եվրամիության և Վաշինգտոնի՝ ստեղծված իրավիճակի վերաբերյալ գնահատականների մասին: Օրինակ, Մոսկվան հայտարարեց, թե աջակցում է Հայաստանի իշխանություններին, նախաձեռնած գործողություններին: Ինչպե՞ս կարելի է հասկանալ այս հայտարարությունը:**

– Կարծում եմ՝ Մոսկվան անհանգստանում է իր գործընկերոջ կայունության համար: Իսկ Միացյալ Նահանգները և Եվրամիությունը փարիսեցիություն են անում, երբ ասում են, թե պետք է զգույշ գործել զինյալների նկատմամբ: Միացյալ Նահանգներում, Գերմանիայում կամ Ֆրանսիայում տեղի ունեցած ահաբեկչական գործողությունների ժամանակ ինչ-որ մեկը կոչ արե՞ց այդ երկրների կառավարություններին բանակցել ահաբեկիչների հետ:

– Ոչ, որովհետև իրավիճակը միանգամայն տարբեր է:

**– Ինչո՞ւ է տարբեր: Ո՞րն է տարբերությունը:**

– Տարբերությունն այն է, որ չի կարելի այս մարդկանց համեմատել Նիսի կամ Գերմանիայի ահաբեկիչների հետ: Ձեր կարծիքով տարբերություն չկա՞ ընդհանրապես:

**– Իսկ սրանք մարդ չե՞ն սպանում: Ոչ ոք չի՞ զոհվել: Ոստիկանը ինքն իրեն սպանեց:**

– Չոհվել է զինված բախման հետևանքով:

– Այդ մարդիկ հարձակվել են ոստիկանական զննի վրա: Վերջ: Չի կարելի հարձակվել իշխանության ներկայացուցչի վրա: Ցանկացած ոք, եթե հարձակվեր իշխանության ներկայացուցչի վրա ԱՄՆ-ում, Փրանսիայում կամ Գերմանիայում, տեղում կսպանվեր: Եթե կարծում եք, թե ամերիկացիները, Ֆրանսիացիները և գերմանացիները այդքան լավ գիտեն իրավիճակը Հայաստանում, ապա ինքնախարեությունը եք գրադրում: Ոչ որ Ամերիկայում, Փրանսիայում և Գերմանիայում չեն կարծում, որ այս մարդիկ մի փոքր տարբեր են: Նրանք այլ կերպ են իրենց պահում Հայաստանի պարագայում այլ պատճառով:

– **Այո, բայց Վաշինգտոնը հայտարարեց, որ քաղաքական խնդիր է, որը չի կարելի լուծել բռնության ճանապարհով: Ամերիկացիները փաստացի արձանագրեցին, որ կա քաղաքական խնդիր:**

– Իսկ ԱՄՆ դեսպանը զսպվածության կոչ արեց Հայաստանի իշխանություններին: ԱՄՆ դեսպանը թող զսպվածության կոչ անի իր Բարաք Օբամային այն ժամանակ, երբ Ամերիկայում սկսում են մարդ սպանել: Ինչո՞ւ Օբաման զուսպ չի գործում Ամերիկայում՝ նմանատիպ իրավիճակների դեպքում:

– **Այդ դեպքում ի՞նչ է ասում Մոսկվան, որ եկեք հարձակվե՞ք և ոչնչացնե՞ք այդ մարդկանց: Մոսկվան իրահրում է հարձակվա՞ն Հայաստանի իշխանություններին:**

– Մոսկվան ասում է այն, ինչ ասում է ողջ աշխարհը այսպիսի իրավիճակների ժամանակ, որոնք տեղի են ունենում ամենուրեք՝ բացի Հայաստանից: Նրանք ասում են, որ չի կարելի պայմանավորվել ահաբեկիչների հետ: Ռուսաստանը 25 տարի տառապում է ահաբեկչությունից, Ռուսաստանը փորձում էր պայմանավորվել ահաբեկիչների հետ, բայց որևէ լավ արդյունք չեղավ:

– **Իսկ ընդհանրապես կոռե՞կտ է այն, որ Մոսկվան քննադատում է Եվրամիության հայտարարությունը Հայաստանում ստեղծված իրավիճակի մասին:**

– Կարծում եմ՝ դա Ռուսաստանի իրավունքն է: Դուք գիտեք, որ ես Ռուսաստանի ԱԳՆ-ի երկրպագուն չեմ, բայց ես չեմ կարող ասել, թե մեր ԱԳՆ-ն իրավունք չունի նման բան ասել:

– **ՀԱԳԿ օպերատիվ արձագանքման հավաքական ուժերը, որոնք նախատեսված են արտակարգ իրավիճակներին, ահաբեկչությանը հակազդելու համար, Ձեր կարծիքով՝ կարո՞ղ են միջամտել այս իրադարձություններին: Դա իրատեսակա՞ն է:**

– Դա իրատեսակա՞ն է, եթե տվյալ երկիրը ինքը իրավիճակի այդ ուժերին:

– **Դուք կարծում եք՝ Սերժ Սարգսյանը կզիմ՞ այդ ուժերի օգնությանը, թե՛ կփորձի լուծել խնդիրը Հայաստանի ուժերով:**

– Եթե Հայաստանը պաշտոնապես դիմեր, ապա այդ հարցը պաշտոնապես կքննարկվեր:

## Մշակութային

### ԱՐԵՎԵԼԱՀԱՅ ԵՎ ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ԼԵԶՈՒՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԵՂԱԾ ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Արևմտահայերենի ուղղագրությունները շարունակում է մնալ ավանդականը կամ գրաբարյանը: Հայաստանի Հանրապետությունում, նպատակ ունենալով գրությունը հնարավորին չափ մոտեցնել արտասանությանը, մշակվել են ուղղագրական մի շարք կանոններ, որոնց իմացությունը պարտադիր է:

Երկու գրական լեզուների ուղղագրության հիմնական տարբերությունները հանգում են հետևյալին.

Այ-ա

Արևելահայերենում ա-ից հետո բառավերջում յ հնչյունն արտասանվում է գրվում է միայն սակավաթիվ միավանկ բառերում, ինչպես, օրինակ՝ հայ, ճայ, բայ, վայ: Մնացած դեպքերում ա-ից հետո յ-ն չի գրվում, եթե չի արտասանվում: Օրինակ՝ տղա, արքա, շղթա, վկա, ընծա, խաղա, կարդա եւ այլն:

Վարժություն 37: Հետևյալ բառերը գրել՝ նոր ուղղագրությամբ.

քահանայ, ներկայ, հարկայ, գորանայ, փեսայ, լումայ, փիլիսոփայ, վերանայ, պողոտայ, վախեցայ, քուրայ, շուկայ, կաթսայ, Հայկայ, Վանայ, մոտակայ, ծննդայ, անխնայ, մանանայ, ծառայ, մեքենայ, ակամայ, ամիրայ, ունենայ, հիանայ, մայրանայ:

Ոյ-ո

Այդպես է միայն մի քանի միավանկ բառերի վերջում է ո-ից հետո գրվում յ տառը, ինչպես՝ Նոյ, գոյ, խոյ, բոյ, իսկ մնացած դեպքերում, եթե չի արտասանվում, չի էլ գրվում:

Օրինակ՝ հուսո, սիրո, հրո, ձուլածո, Կամո, Մարո եւ այլն:

Վարժություն 38: Հետևյալ բառերը գրել՝ նոր ուղղագրությամբ.

երեկոյ, կոփածոյ, ներքոյ, բարեհուսոյ, կռածոյ, աստծոյ, վերջիվերջոյ, հանածոյ, պահածոյ, Մարոյ, Մեքաստիոյ, լուսոյ, սգոյ, Մշոյ, Կարնոյ, Կ. Պոլսոյ, մարմնոյ, Կիկոյ, Գունոյ, թվոյ, հաշվոյ, պատվոյ:

Ոյ-ույ

Գրաբարում արդեն ոյ երկբարբառը (երկու հնչյունից կազմված տառակապակցությունը) բաղաձայնից առաջ արտասանվում էր ույ: Ժամանակակից արևելահայերենում ույ արտասանելիս ույ էլ գրում ենք:

Օրինակ՝ լույս, քույր, գույն, թույն, կույր, բույր եւ այլն:

Վարժություն 39: Հետևյալ բառերը գրել՝ նոր ուղղագրությամբ.

սառոյց, երեւոյթ, երեկոյթ, ծածկոյթ, համբոյր, ճանճոյրթ, գրոյց, հոյն, կոյս, խնջոյք, հանգոյց, իսկոյն, ծոյլ, գոյժ, նժոյգ, մշակոյթ, անփոյթ, գայոյթ, հրապոյր, մատոյց, սոյն, նոյն, միեւնոյն, թոյլ, կոյտ, մակոյկ, կապոյտ, բոյս, պիտոյք, հոյգ, հոյս, ողջոյն:

Եա-յա

Եա երկբարբառը գրաբարում իսկ յա էր արտասանվում, այդ արտասանությամբ էլ մտել է նոր գրական լեզու:

Բառամիջում յա արտասանելիս արևելահայերենում գրում ենք յա եւ ոչ թե եա:

Օրինակ՝ մատյան, մեհյան, սենյակ, առաքյալ, դոյակ եւ այլն:

Վարժություն 40: Հետևյալ բառերը գրել՝ նոր ուղղագրությամբ.

վայրկեան, մանեակ, քաջութեան, պատանեական, ցորեան, առեան, ուրախութեան, դարձեալ, արեան, ուրացեալ, պատեան, միմեանց, հեռացեալ, լեարդ, սարեակ, այժմեան, կրթութեան, հորելեան, քառեակ, կեանք, եղեամ, արեւելեան, պաշտոնեայ, քրիստոնեայ, առօրեայ, բացօթեայ, հավիտեան, Արուսեակ, Մամիկոնեան, Պետրոսեան, Թումանեան:

Իւ-յու

Արդեն գրաբարում իւ երկբարբառը բաղաձայնից առաջ յու էր արտասանվում: Ժամանակակից արևելահայերենում յու արտասանելիս գրում ենք յու եւ ոչ թե իւ:

Օրինակ՝ արյուն, բյուր, սյուն, գյուղ, աղբյուր եւ այլն:

Վարժություն 41: Հետևյալ բառերը գրել՝ նոր ուղղագրությամբ.

Առիժ, ճիւղ, մեծութիւն, հիւթ, միւս, հնչիւն, ալիւր, ուրախութիւն, իւրովի, նմանութիւն, ճիւն, թիւր, իւրաքանչիւր, գիտութիւն, հիւսն, ավիւն, անկիւն, եղջիւր, իւր, հիւր, թնդիւն, պայթիւն, ուղղութիւն, գորութիւն:

Ի-վ

Արեւելահայերենի այբուբենում ւ (վյուն) տառը չկա, այն փոխարինվել է վ-ով (վեվ):

Օրինակ՝ նավ, ավագ, թիվ, հիվանդ, շառավիղ, Գավիթ եւ այլն:

Վարժություն 42: Հետևյալ բառերը գրել՝ նոր ուղղագրությամբ.

աղանի, անբաւ, աւար, կռիւ, աւանդ, բաւիղ, գաւիթ, շաւիղ, հազիւ, բնաւ, խաւար, կամաւոր, դաւանան, պատիւ, հաւանել, ագռաւ, հաւասար, դիւական, պարսաւանք, խորհրդաւոր, աւան, հովիւ, հաւք, հաւասարակշռութիւն:

ՈԻ-Վ

Գրաբարում ու ձայնավորից առաջ վ էր արտասանվում. ժամանակակից արեւելահայերենում այն փոխարինվել է վ-ով:

Օրինակ՝ գվարթ, նվեր, թվական, հեռվից, նվագ, դժվար եւ այլն:

Վարժություն 43: Հետևյալ բառերը գրել՝ նոր ուղղագրությամբ.

արուեստ, հատուած, գգուել, թուլալ, անուան, մահուան, լեզուական, կռուարար, լուանալ, նուաստ, նուագ, չուել, ազատուել, կալուածք, կատուի, փորուածք, մանուածք, դրուագ, պատուաստ, թշուառ, բեռնուածութիւն, Նուարդ:

Է-ե

Արեւելահայերենում բառարմատների մեջ եւ վերջում, երբ արտասանվում է է հնչյունը, գրվում է ե տառը:

Օրինակ՝ հանդես, պարտեզ, ցորեն, զենք, բագե եւ այլն:

Վարժություն 44: Հետևյալ բառերը գրել՝ նոր ուղղագրությամբ.

սէր, դէմք, երբէք, արդէն, զէր, երէ, տէր, կէս, վրէժ, նուէր, հրաւէր, ապավէն, հանդէպ, սէգ, վէմ, սէգ, անէծք, փոխարէն, հոտավէտ, տխրադէմ, մարգարէ, թոպէ, աղուէս, դէգ, կէտադրութիւն, երբեւիցէ, անգէտ, տնօրէն, ինչեւիցէ, նոյնապէս:

Օ-ո

Բառարմատներում, երբ արտասանվում է օ հնչյունը, գրվում է ո եւ ոչ թե օ:

Օրինակ՝ նոր, գործ, հզոր, գորք, շորորալ, լոր եւ այլն:

Վարժություն 45: Հետևյալ բառերը գրել՝ նոր ուղղագրությամբ.

ակօս, խօսք, ամօթ, ծանօթ, գրօսանք, կօշիկ, շատախօս, տօն, սօթ, փառատօն, ցօղ, կարօտ, եղբօր, մօր, ձօն, զօրական, խօսակցական, մօրուք, աղօտ, մօտ, պաշտօն, թօթափել, կարճաօտ, զօրութիւն:

Յ-հ

Բառակազմում հ արտասանելիս արեւելահայերենում գրում ենք հ եւ ոչ թե յ, ինչպես արեւմտահայերենում: Այդպես եւ բառամիջում ենք գրում հ, եթէ բարդ կամ ածանցավոր բառի երկրորդ բաղադրիչը հ-ով է սկսում:

Օրինակ՝ հայտնի, հիշել, հարկ, անհայտ, բարեհիշատակ, վերնահարկ եւ այլն:

Վարժություն 46: Հետևյալ բառերը գրել՝ նոր ուղղագրությամբ.

յիշատակ, յարգել, յաղթահարել, յանդիման, յառնել, յապաղել, յարութիւն, յանախել, յոյժ, յանգչել, յամառ, յօրինել, յօգուտ,

յանդուգն, յանցանք, բազմայարկ, անյարմար, յաջող, անյաջող, անյիշատակ, յիսուն, յաղթել, անյաղթելի, յարգելի, անյարգելի:

## «Ուտք, որը մնաց այնտեղ»

Թարգմանիչ՝ Էմմա Բեգիջանյան

Իրան-իրաքյան 8-ամյա պատերազմի թեման Իրանի ժամանակակից գրականության մեջ իր ուրույն տեղն ունի: Մեծ թվով բանաստեղծներ ու արձակագիրներ, ովքեր պատերազմի մասնակից են եղել, իրենց գրականության առյուծի բաժինը հենց այդ թեմային են նվիրել: Բացի այդ, զգալի են նաեւ պատերազմական հուշագրությունները: 2011թ. լույս է տեսել է Սեյեդ Նասեր Հոսեյնիփուրի «Ուտք, որը մնաց այնտեղ» 768 էջանոց գիրքը, որտեղ զետեղված են հեղինակի հուշերն Իրաքի Սալահըդդին գորանոցին կից ռազմագերիների ճամբարից, որոնք վերածվել են մնայուն գործի: Գիրքը տպագրել է «Սուրեհ-ե Մեհր»

հրատարակչությունը եւ շատ կարճ ժամանակահատվածում վերահրատարակվել շուրջ 20 անգամ:

Սալահըդդին գորանոցին կից ռազմագերիների ճամբարում, որը գտնվում էր Թաքրիտից (Սադամի ծննդավայրը) 15 կմ հեռավորության վրա, 4500 ռազմագերի է եղել, որոնցից 320-ը զոհվել են: Այնուհետեւ նա իր գրառումները շարունակել է տարբեր բանտերում եւ ճամբարներում: Հոսեյնիփուրը 16 տարեկանում տնից փախել եւ կամավոր ռազմաճակատ է մեկնել Քոհգիլուե եւ Բոեյեր-Ահմադ նահանգից: Ռազմական գործողությունների ժամանակ պատանին վերավորվել, կորցրել է մի ոտքը: Վիճակը թեթեւանալուց հետո տեղափոխել են ռազմագերիների ճամբար: Նրան ներկայացրել են իբրեւ իրանցի զոված գեներալ Ալի Հաշեմի սուրհանդակ, այդ պատճառով էլ ենթարկվել է ամենադաժան կտտանքների: Հեղինակը «Մոջահեդին-ե խալը»<sup>1</sup> կազմակերպության մասին գրքերի վերջին էջերից, օրաթերթերի եզրերից ու ծխախոտի թղթերից պատրաստած ծոցատետրում յուրաքանչյուր օր կողավորված գրի է առել տվյալ օրվա դեպքերը, ինչպես նաեւ 780 ռազմագերիների անունները, տեղադրել ձեռնափայտերի մեջ եւ 1980թ. հուլիսի 4-ին, ազատ արձակվելով, կարողացել է բերել իր հետ: Ստորեւ ներկայացնում են գրքից մի հատված:

<sup>1</sup> - Իրանի Բարսական վարչակարգի զինված ընդդիմադիր «Մոջահեդինե խալը» (հսմուն ժողովրդի մարտնչողներ) (ՄԻՐ) վտարանդի կազմակերպություն է, որը 1980-ից տեղակայված է Իրաքում եւ վայելում էր Սադամ Հոսեյնի վարչակարգի լայնածավալ հովանավորությունը: ՄԻՐ-ն իրան-իրաքյան պատերազմի ընթացքում իրաքցի զինվորների կողքին կռվում էր ընդդեմ սեփական հայրենիքի, ավելին՝ իրականում այն միահյուսվել էր Սադամի վարչակարգի անվտանգության ուժերի հետ: Ուստի ՄԻՐ-ն ոչ միայն Իրանի բնակչության շրջանում հեղինակություն չունի, այլեւ նրան խիստ դեմ են տրամադրված նաեւ իրաքցիները: Թեքուս դա էր պատճառը, որ իրաքյան պատերազմի ընթացքում անզոր-աներկյան ուժերի թիրախ դարձան նաեւ ՄԻՐ-ի բազաները: ՄԻՐ-ն ընդգրկված է ԱՄՆ, Մեծ Բրիտանիայի եւ Եվրամիության ահաբեկչական կազմակերպությունների ցանկում, որի խտտովանությունը տարեկան 300 ահաբեկչական գործողություն էր իրականացնում Իրանում:



## Մի սափոր ջուր

### 1988թ. հուլիս . Բաղդադի Ալ Ռաշիդ բանտում

Երրորդ օրն էր, ինչ Ալ Ռաշիդ բանտում էի: Անցյալ գիշեր ծարավը շատ տանջեց, բայց ոտքիս հարցում հանգիստ էի, քանի որ ոչ ոք քացով չէր խփել: Պարզվում է, որ ազդրիս հետամնասում բեկոր կար: Ես մինչև այսօր չէի նկատել, սեղմեցի, թարախը դուրս ժայթքեց:

Առավոտյան ժամը 8-ն էր, որ մեզ դուրս տարան: Կողքի ճամբարից մի խումբ վիրավոր ռազմագերիների բերել էին մեզ մոտ: Ծանոթացա Թալախի, Չաֆիր, Չազայեր եւ Հարավային ու Հյուսիսային Մաջնուն շրջաններից գերի ընկածների հետ: Թեև կանոնավոր բանակից գերեվարվածների մեծամասնությունը մեզանից աջ գտնվող ճամբարում էր, սակայն մեր՝ կամավորականների ճամբարում էին 92-րդ զրահապատ դիվիզիայից մի խումբ տղաներ, որոնք գերի էին ընկել Քուշք եւ Թալախի շրջաններում: Պարեկները ռազմագերիներից մեկի հոնքերը ծխախոտի կրակով այրել էին, նրա միակ մեղքը մորուք ունենալն էր:

Ինձ խնամելու պարտականությունն ստանձնել էր հայ զինվորը

Այսօր առավոտյան աշխատանքի բանժանում էին կատարել եւ յուրաքանչյուր առողջ գերի իր վրա էր վերցրել վիրավորներից մեկին խնամելու պարտականությունը: Ինձ եւ Յադոյահ Մազրուիի նման վիրավորներին, որոնց վիճակն ավելի ծանր էր, երկու հոգի էին խնամում: Ինձ խնամում էին Ամու Հասանը եւ հենց այն բարյացակամ ու պատասխանատվության բարձր զգացողությամբ հայ զինվորը:

Անցյալ օրը ողջ գիշեր նա խնամում էր ինձ: Չնայած այդ պայմաններում ոչ մի բան չէր կարող անել, բայց հենց ողջ գիշերը կողքիս նստելը հուսադրում էր, ուժ տալիս:

Առավոտյան, երբ գերիներին դուրս էին տանում, նա ինձ գուգարանից դուրս հանեց եւ ամեն ինչ անում էր, որ հանկարծ մեկը չդիպչի ոտքիս:

Մարգիս Դավիթյանցը, ում համակրեցի հենց առաջին իսկ օրվանից

Այդ դժվարին ու ծանր օրերն, ես ինձ լավ էի զգում, երբ խնամում էր հայ զինվորը:

Նա գերեվարվել է Քուշք կամ Թալախի շրջանում: Հետեւակի զինվոր էր, ծառայում էր 92-րդ զրահապատ դիվիզիայում: Հենց առաջին հանդիպումից համակրեցի նրան: Անունը հարցրի, ասաց.

- Ես Մարգիս Դավիթյանցն եմ:

Առաջին մեկ-երկու օրերին դժվարությամբ էի արտասանում նրա անունը. բայց հետո սովորեցի:

Այն օրը, երբ խիստ ծարավի պատճառով հրաժարվեցինք նախաճաշից

Ճաշից առաջ էր: Իրաքցիներն առողջ գերիներին բանտի բակում նստեցրել էին կիզիչ արևի տակ: Դավիթյանցը կողքիս էր: Տղաները խիստ ծարավի պատճառով հրաժարվել էին նախաճաշից: Իրաքցիներն ուզում էին նախորդ օրվա նման մեզ տանջել ծարավ պահելով: Պարեկներն ու քննիչները ցանկանում էին մեր վիճակը ավելի ծանրացնել, քանի որ տղաները չէին հայտնել իրենց հարամնատարների անունները:

Դավիթյանցը եկավ մի սափոր ջրով Ճաշից առաջ էր, երբ Դավիթյանցը գնաց իրաքցի մի պահակի մոտ եւ վերադարձավ ջրով լիքը սափորը ձեռքին: Ծատ զարմացա, որ իրաքցի պահակը ջուր էր տվել նրան, հարցրի.

- Էդ ինչպե՞ս եղավ, որ քեզ ջուր տվին:

Դավիթյանցը, որ ինքն էլ շատ ծարավ էր, պատասխանեց.

- Մի կեպ վերցրի, բայց այնպես խմեք, որ բոլոր վիրավորներին հասնի:

Դավիթյանցն ինքը ջուր չիմեց.

Չնայած ջուր սառը չէր, բայց փրկություն էր: Դավիթյանցն ինքն ջուր չէր խմում: Ես էլ խմեցի ու հարցրի.

- Դավիթյանց, պարեկները ոչ մեկին ջուր չեն տալիս, սա ո՞նց պատահեց:

- Պահակներից մեկը հայ է, ինձ լավ է նայում, ջուրը նա է տվել:

Դավիթյանցը սիրալիր, անձնուրաց անձնավորություն էր: Նա ինքն էր սափորը մոտեցնում վիրավորների բերանին, որ մի քանի կուլ խմեն: Իրաքցի հայ պահակը հարգանքով էր վերաբերվում Դավիթյանցին եւ թվում էր, թե մյուս պահակներին էլ զգուշացրել էր, որ լավ վերաբերվեն նրան: Նրանք էլ, հարգելով իրենց գործընկերոջը, հանգիստ էին թողնում Դավիթյանցին: Եթե նրա փոխարեն ուրիշը լիներ իրաքցիները երբեք թույլ չէին տա, որ վիրավորներին ջուր տար: Սակայն հաջորդ օրերին սահամանափակվեց նրա ազատությունը, այլևս չէր կարողանում առաջվա պես մեզ օգնել:

Դու հայ ես, ինչու՞ ես հանուն Խոմեյնիի կռվում

Այդ օրն իրաքցիները եկան Դավիթյանցի մոտ եւ սկսեցին խոսել հետը: Նրանց հետ էր նաեւ իրաքցի հայ պահակը: Նրանց ավագը Դավիթյանցին հարցրեց.

- Դու հայ ես, ինչու՞ ես հանուն Խոմեյնիի կռվում:

- Ճիշտ է, ես հայ եմ, բայց իրանցի եմ, զինվոր եմ, ծառայում եմ բանակում:

Ավագի ու մյուս պահակների դեմքերն այլապեցին: Չգացի, որ Դավիթյանցի խոսքերը նրանց բնավ դուր չէկան: Նրանք ցանկանում էին, որ Մարգիսը զոչար եւ Իրանին ու Էմամին հավատարիմ չլիներ: Ավագը, որ հայ պահակի խնդրանքով լավ էր վերաբերում նրան, շարունակեց.

- Դասալքվեիր, փախչեիր Իրաք, գիտես թե ինչքան շատ հայեր են ապրում Իրաքում: Մենք՝ իրաքցիներս, հայերի հետ գործ չունենք,- ասա մեզ մատնացույց անելով, ասաց.

- Մենք սրանց հետ գործ ունենք՝ Խոմեյնիի պահապանների: Սրանք են ուզում Իրաքը ոչնչացնել, ուզում են պարտության մատել մեզ: Խոմեյնին ուզում է Իրանից զատ նաեւ Իրաքի նախագահը լինի: Սրանք են մեր թշնամիները, ոչ թե հայերը...

Իրանահայերն իրաքցիների հետ կապված լավ հիշողություններ չունեն

Չգուց էի, որ Դավիթյանցը չի ցանկանում բանավեճի մեջ մտնել, գուցե լռում էր հանուն այն հայ պահակի, որն իրեն օգնել էր, սիրալիր էր եղել նրա հանդեպ: Թվում էր, թե ինչ-որ բան տանջում էր նրան, հոգոց հանելով, շատ կարճ ու հակիրճ պատասխանեց.

- Իրանահայերը լավ հուշեր չունեն իրաքցիների հետ կապված: Դուք Թավրիզում Փանոսյանների ու Հարությունյանների ընտանիքներին սպանեցիք քնած ժամանակ: Մի հոգի անգամ կենդանի չի մնացել:

# چکیده کتاب تاریخ آرتساخ (قره باغ)

(۴)

نگارش: دکتر ادیک باغداساریان

## رویدادهای آرتساخ (قراباغ) در سالهای ۱۹۲۳-۱۹۱۷

بدین سان به موجب این التیماتوم از جمهوری ارمنستان خواسته می‌شود سپاهیان خود را که از آرتساخ پیوند یافته به مام میهن بر پایه حق تعیین سرنوشت، پشتیبانی و دفاع می‌کردند، از "مرزهای آذربایجان" خارج نماید. بدین معنی که آرتساخ بخشی از قلمرو دیگران محسوب می‌شود.

دولت آذربایجان شوروی طی اعلامیه رادیویی خود در روز هشتم ماه مه خطاب به دولت ارمنستان، قاطعانه تقاضای خروج سپاهیان ارمنی از قراباغ را مطرح نمود و دولت ارمنستان در تلگراف پاسخ خود اعلام کرد که دولت آذربایجان، اراده خواست و حقوق زحمتکشان قراباغ و زانگورور را پایمال کرده است. بر اساس اسناد تاریخی دولت ارمنستان که از آن روزها باقی مانده است سیاست دولت آذربایجان شوروی مبنی بر نابودی جمهوری ارمنستان و اجرای تمایلات آذربایجان مساواتی به منظور پیوستن به ترکیه، افشا می‌شود. در نامه وزارت امور خارجه ارمنستان به شماره ۲۸۹۸ مورخ ۱۲ ماه مه، خطاب به مردم آذربایجان و م. حسین اف کمیسر خلق در امور خارجی (رونوشت آن برای لنین و چیچرین) آمده است: "...حملات دولت شما دولت ارمنستان را بر آن قرار داد تا به شما اعلام کند که مفهوم و مراد اصلی انقلاب آذربایجان را خلق ارمنی و دولت آن به خوبی درک کرده‌اند. چنانکه پیدا است این انقلاب به عنوان تحول دولت مساواتی خان بیگی، از طرف دولت انقلابی سوسیالیستی تغییری در زندگی حکومتی و سیاسی آذربایجان نداده است. نخستین اقدام این دولت به اصطلاح سوسیالیستی قرار دادن روستائیان و زحمتکشان ارمنی قراباغ و زانگورور بر خلاف میل آنان تحت یوغ حکومت آذربایجان بود. التیماتومی که روز دوم پس از استقرار دولت شما به ارمنستان داده شد با ماهیت تجاوزگرانه خود هیچ تفاوت و وجه تمایزی با یادداشت‌های دولت مساواتی نداشت. اگر پیوند و پیمان موجود بین دولت شما و رهبران امپریالیست ترکیه، مصطفی کمال... و سازماندهندگان حیات حکومتی کشور شما یعنی انور، خلیل و نوری پاشاها و کشتارهای وحشتناکی را که این پاشاها در قبال ارمنیان قفقاز و ترکیه سازمان داده‌اند، در نظر بگیریم، در اینصورت پر واضح خواهد شد که دولت ارمنستان نمی‌تواند دولت فعلی آذربایجان را دموکراتیک و سوسیالیستی به حساب آورد... در برابر اتهاماتی که درباره تعدی و فشارهای اعمال شده از سوی ارمنستان بر ساکنان مسلمان در یادداشت خود متذکر شده‌اید ما نمی‌خواهیم در مورد کشتارهای جمعی ساکنان ارمنی نوخی، آرش، گنجه، شماخی و ساکنان بی گناه قراباغ و گفتار پیردازیم".

لشکر ۳۲ توپخانه ارتش یازدهم سرخ در آغاز ماه مه ۱۹۲۰ بدون در نظر گرفتن خواسته‌های ارمنیان آرتساخ از یولاخ به سمت آرتساخ به حرکت در آمد. در این روزها هیئت اعزامی ارتش پانزدهم سرخ به ریاست ساهاک ترگابریلیان در روستای قارابولاغ واراندا با درو (Dro) ملاقات کرد و از او قاطعانه تقاضا کرد نظامیان ارمنی را از آرتساخ خارج کند. درو کانایان پاسخ داد که این کار با اصل حق تعیین سرنوشت ملل اعلام شده از سوی روسیه شوروی مغایرت دارد. ارمنیان آرتساخ به مام میهن پیوسته‌اند لیکن اکنون درخواست می‌شود آن را جدا کرده به آذربایجان ملحق نمایند.

این امر نیز جالب توجه است که در همان روزها، تقریباً تمام عساکر ارتش سابق مساواتی در آرتساخ به صفوف لشکر ۱۱ ارتش سرخ پیوسته بی درنگ یونیفورم‌های خود را تغییر داده بودند.

۱۲ ماه مه ۱۹۲۰، هنگ ۲۸۱ لشکر ۳۲ ارتش یازدهم سرخ، به فرماندهی ابوزرف و رهبری گایدارف کمیسر جنگ وارد شوشی شد. روز ۱۸ مه، خود س. ک. ارجنیکیدزه رئیس شورای نظامی جبهه قفقاز به شوشی رسید و گزارشی در مورد کارهای انجام شده روز ۲۲ ماه مه به لنین تلگراف کرد.

بدین ترتیب آرتساخ از سوی سپاه ۱۱ ارتش سرخ به عنوان بخشی از آذربایجان شوروی اعلام شد. این امر کلاً غیر منصفانه و نقض شدید اصل حق تعیین سرنوشت ملل بود.


دولت موقت آرتساخ تصمیم گرفت جلسات منطقه‌ای تشکیل دهد و اوضاع پدید آمده جهت گیری ارمنیان آرتساخ را مورد بررسی قرار دهد. جلسه منطقه‌ای واراندا که در تاریخ ۱۴ ماه مه در روستای هاغورت تشکیل شد، وضعیت به وجود آمده پس از ورود سپاه یازدهم به آرتساخ را مورد انتقاد قرار داد و از پذیرش درخواست فرماندهی سپاه ۱۱ مبنی بر الحاق آرتساخ به آذربایجان سر باز زد.

جلسه منطقه‌ای دیزاک در روستای توغ نیز تقاضای دولت آذربایجان و فرماندهی سپاه ۱۱ را محکوم کرد و تصمیم گرفت "کلیه امور مربوط به مسائل آرتساخ را باید نه بصورت جدا و منفک بلکه همراه با جمهوری ارمنستان حل و فصل گردد".

آخرین جلسه دولت موقت قراباغ در تاریخ ۲۲ مه ۱۹۲۰ بر گزار شد و طی آن مسئله عکس العمل در قبال روسیه شوروی بررسی گردید. آرشاویر کامالیان اعلام نمود که شاید "بلشویکهای محلی بتوانند با در دست گرفتن حکومت و اعلام قراباغ به عنوان بخشی از روسیه شوروی و نه آذربایجان، این سرزمین را نجات دهند". استوازادور آودیسیان متذکر شد: "از آنجا که شرایط گوناگون ما را به ارمنستان پیوند داده است، لذا می‌توانیم با آن باشیم و در این باره باید به روسیه شوروی اطلاع دهیم. دولت موقت تصمیم گرفت موجودیت فیزیکی زحمتکشان آرتساخ را حفظ کند و در عین حال اعلام نمود که ارمنیان آرتساخ مصمم هستند هرگز تحت هیچ شرایطی سرنوشت خود را حتی به آذربایجان شوروی پیوند ندهند و آماده پدید آوردن چنان نظام سیاسی هستند که روسیه انقلابی موجد گشته است و بر آن است تا ایجاد اوضاع سیاسی پایدار دفاع از خود را تشدید کرده و ادامه دهند".

با این حال چنان شرایطی ایجاد شد (ظهور نمایندگان روسیه شوروی، پخش اخبار مربوط به انقلاب بلشویکی در ارمنستان و غیره) که دسته‌های نظامی درو مجبور به ترک آرتساخ در روز ۲۵ مه و بازگشت به گوریس از طریق دامنه‌های کوه گبرو شدند و تمام ساز و برگ و انبارهای اسلحه را برای اهالی آرتساخ به جا گذاشتند. روز بعد، دهمین کنگره ارمنیان آرتساخ در روستای تاغاورد قراباغ کوهستانی را به عنوان شوروی اعلام کرد و کمیته انقلابی به ریاست ساکو هامبارسومیان تشکیل شد. تا پایان ماه ژوئن، در تمام روستاها و مناطق آرتساخ کمیته‌های انقلابی تشکیل یافتند.

با این همه، امید ارمنیان آرتساخ مبنی بر این که استقرار نظام شوروی باعث اتحاد آرتساخ با مام میهن می‌شود، به نوبه‌ی بدل شد. سنگ بنای سیاسی آذربایجان شوروی را روش‌های کاری آذربایجان مساواتی تشکیل می‌داد و در آن روزهای جدید تحت لوای "انترناسیونالیسم" شعارها و نطق‌های توخالی سر می‌دادند. زمانی که سیمون پیرومیان و آرامیسیس یوزنکیان از طرف اتحاد میهنی اهالی آرتساخ مستقر در تفلیس در تاریخ ۹ ژوئن در نامه خود به لنین به کرات درباره اوضاع سیاسی و اقتصادی آرتساخ و سیاست‌های اشغالگرانه آذربایجان شوروی در قبال قراباغ یاد آور می‌شدند، تمام مطالب یاد شده را مورد نظر داشتند. آنها در بخشی از نامه خود چنین نوشته‌اند: "علت وجودی سیاست الحاق قراباغ کوهستانی به آذربایجان توسط التیماتومها و روش‌های فخرآمیز، در واقع سیاست ترکیه، آنتانت و مساوات‌ها بوده است".





مجدداً با آن متحد شوند. در این خصوص، گ.چیچرین کمیسر امور خارجی جمهوری روسیه قاطعانه عمل می‌کرد. او ۲۱ ژوئن ۱۹۲۰ در برابر این پرسش لنین که "آیا امکان دارد کار را با نریمانف به صلح و آرامش منتهی ساخت؟" پاسخ داد: "قرباغ زیستگاه بومی ارمنیان است" چند روز پیش از آن در ۱۹ ژوئن، چیچرین در تلگراف خود به ارجنیکیدزه می‌نویسد: "قرباغ، زانگور، شوشی، نخجوان و جلفا نباید به ارمنستان و آذربایجان ملحق شوند بلکه باید تحت نظارت ارتش روسیه قرار گیرند و در آنجا شوراهایی پدید آیند زیرا تصمیمی غیر از این باعث شکست سیاست صلح ما خواهد شد".<sup>۴</sup> چیچرین برای توجیه این نقطه نظر در تلگرامی که به تاریخ ۷ ژوئیه برای آ. اوهانجیان وزیر امور خارجه ارمنستان ارسال کرده بود چنین نوشته است: "چنان شرایطی ایجاد می‌شود که جو و محیط مناسب را برای بررسی بی طرفانه و آرام مسائل و اختلافات ارضی فراهم خواهد ساخت".<sup>۵</sup>

نریمانف تصمیم نداشت از سیاست پان ترکیستی خود دست بردارد. چیچرین با مطرح ساختن اتهام ایجاد "جو متشنج و نومیدانه" در مذاکره تلفنی خود با نماینده آذربایجان در گرجستان، در ژوئیه ۱۹۲۰ درخواست انجام اقدامات اضطراری در قبال ارمنیان ساکن سرزمین مورد اختلاف را مطرح می‌سازد تا وی بتواند به نفع الحاق آذربایجان فکر کند. سفیر جمهوری ارمنستان در باکو در گزارش خود به دولت متبوع خود در ۹ اوت ۱۹۲۰ راجع به این امر مشخصاً سخن گفته است. او می‌نویسد که نریمانف "حتی رفتاری در شأن قوم تاتی از خود نشان نمی‌دهد" و او "بگونه‌ای بسیار آشکار دیدگاه‌های ضد ارمنی خود را بروز می‌دهد و حتی تلاش نمی‌کند حرمت این امر حتی به صورت ظاهری حفظ گردد. او اغلب فراموش می‌کند که یک کمونیست است و ماهیت ملی ترکی خود را بطور مشخص به نمایش می‌گذارد. بدون شک، دیگران کمونیست تر و انترناسیونالیست تر از او نیستند لیکن دیدگاه‌ها و نظرات باطنی خود را به این روشنی بیان نمی‌کنند".<sup>۶</sup>

به خاطر محکومیت و جلوگیری از سیاست اشغالگرانه آذربایجان شوروی است که چیچرین، در تاریخ ۲۹ ژوئن ۱۹۲۰ خطاب به لنین چنین نوشته است: "روند جدید امور باید انعکاس خود را بر طرح‌های ما در ماوراً قفقاز بیابد و ما را بر آن دارد که در قبال برنامه‌های تجاوزگرانه ارجنیکیدزه، مدیوانی و نریمانف محتاطانه عمل کنیم. این رفقا در ابتدا مترصد بودند با توسل به زور اسلحه نظام شوروی را در گرجستان و ارمنستان بر قرار کنند ولی زمانی که کمیته مرکزی ما این امر را رد کرد شدیداً نا امید شدند". کمیسر امور خارجه سپس متذکر می‌شود که نریمانف از تاکتیک تعرضی خود در قبال گرجستان و ارمنستان دست بر نمی‌دارد. او چنین ادامه می‌دهد: "آخرین مرحله این بحران، مطرح شدن تقاضاهای آذربایجان در مورد مناطق وسیعی بود که همیشه به ارمنستان تعلق داشتند و عملاً در دست جمهوری ارمنستان قرار دارند. دولت آذربایجان خواستار مناطق قرباغ، زانگور، شاورو- دارالایگاز همچنین نخجوان، اردوباد و جلفا است. بخش اعظم این مناطق عملاً در دست جمهوری ارمنستان قرار دارد". چیچرین کتمان نمی‌کند که نریمانف قصد داشت این مناطق را توسط ارتش شوروی تصرف کند. در واقع چنین نیز شد و آرتساخ به وسیله سپاه ۱۱ تصرف شد. کمیسار امور خارجه معتقد بود که "نمی‌توان بخشی از قلمرو ارمنستان را اشغال کرده آن را به آذربایجان ملحق ساخت، این امر به معنی قائل شدن ماهیت فریبکارانه برای سیاست شرقی ما است... بویژه آنکه اعمال این سیاست در قبال ارمنستان ضربه شدیدی بر پیکر کمونیسم وارد خواهد کرد".

ادامه دارد

آنها این مسئله را عنوان می‌کنند که به روستائیان آرتساخ امکان دهند "بنا به صلاحدید خود زندگی شان را سازمان دهند و از حق تعیین سرنوشت برخوردار شوند. هر تصمیمی مغایر با خواست و اراده روستائیان نوعی قهر و زور تلقی شده آنان را از آن حق تعیین سرنوشت خود محروم می‌سازد که سه سال در شرایط بسیار دشوار از آنها در برابر دشمنان حمایت کرده است".<sup>۱</sup> این مبارزه در سالهای بعد نیز متوقف نگردید.

می دانیم که س.م. کیروف عضو شورای نظامی سپاه یازدهم ارتش سرخ در ۳ ژوئن ۱۹۱۹ با بیان بی پایه و اساس بودن درخواستهای مساواتها به لنین گزارش کرده بود که "مناطق ارمنی قرباغ و زانگور، دولت آذربایجان را به رسمیت نمی‌شناسند". در تابستان ۱۹۲۰ نیز که در قلمرو جمهوری آذربایجان حکومت شوروی بر پا شد اوضاع بر همین منوال بود و قرباغ و زانگور در صفوف سپاه ۱۱ شرکت نکردند.

رهبران جمهوری آذربایجان و نریمان نریمانف رئیس کمیته انقلابی، م. حسین اف کمیسر امور خارجه و دیگران سیاست حیل و فریب، منحرف ساختن رهبران حزبی و دولتی، "ایجاد" نظر عمومی برای اعمال زور در قبال ارمنیان آرتساخ، زانگور، نخجوان و سایر نواحی ارمنی نشین را دنبال می‌کردند. نریمانف در تلگرام و نامه خود خطاب به لنین در تابستان ۱۹۲۰، اعلام می‌کرد قرباغ، زانگور و نخجوان که مبلغان و مداخله گران توانسته‌اند آنها را به تصرف خود در آورند باید جزء قلمرو آذربایجان قرار گیرند. هیئت نمایندگی جمهوری ارمنستان به ریاست لون شانت در ژوئن ۱۹۲۰ برای مذاکره با روسیه شوروی وارد مسکو شد. هنگامی که شانت در ماه ژوئیه با گ. چیچرین مشغول مذاکره بود، در تلگرامی که از باکو به مسکو خطاب به لنین (رونوشت برای ولادیکاز، ارجنیکیدزه) ارسال شده بود چنین آمده است: "درباره آنچه که به زانگور و قرباغ مربوط می‌شود و هم اکنون در قلمرو آذربایجان قرار گرفته‌اند، باید اعلام کنیم که این مناطق بطور قطع باید در قلمرو آذربایجان باقی بمانند".

نواحی جلفا و نخجوان ..... هم از نقطه نظر نظامی و هم از نظر امکان ارتباط مستقیم با ترکیه باید از طرف سپاهیان ما تصرف شوند و به آذربایجان ملحق گردند. ما هرگونه مذاکره با دولت داشناک را اضافه و مسئله ارمنستان ترکیه را آنگونه که شما مورد نظران است بی موقع می‌دانیم".<sup>۲</sup> نویسندگان این تلگرام ن. نریمانف، ب.مدیوانی و آ. میکویان بودند. چیچرین که در تنگنا قرار گرفته بود، مجبور می‌شود به ارجنیکیدزه متوسل شود و از او تقاضا کند بر روی رهبران آذربایجان اعمال نفوذ کرده از اشتیاق آنها بکاهد. استالین کمیسر ملل روسیه شوروی به شدت از نریمانف پشتیبانی می‌کرد. او در تلگرافی به ارجنیکیدزه اراده خود را به وی تحمیل می‌کند: "به نظر من باید به وضوح یکی از طرفین را مورد حمایت قرار داد و در این مورد مسلماً آذربایجان را همراه با ترکیه باید در نظر داشت".<sup>۳</sup>

شماری از فعالان حزب بلشویک و حکومت شوروی (س. کیروف، س. ارجنیکیدزه، گ. چیچرین، ب. لگران، آ. الکساندر میاسنیکیان و دیگران)، منصفانه معتقد بودند که قرباغ، زانگور، نخجوان و دیگر نواحی ارمنی نشین از نظر تاریخی بخش جدایی ناپذیر ارمنستان را تشکیل می‌دهند و در نتیجه باید

<sup>۴</sup> - همانجا، ۵، ۲، ۴۶، شماره ۱۹

<sup>۵</sup> - همانجا، ۱۱، شماره ۱۳

<sup>۶</sup> - آرشیو دولتی، ۴، ۱، ۲۰، شماره ۱۷.

<sup>۱</sup> - اسناد سازمانها، ۲۵۰، ۴، ۲۲، شماره ۱۲-۱.

<sup>۲</sup> - اسناد دولتی آذربایجان، ۶۹، ۴۰، شماره ۱۸۳.

